

Ա. ՄԱՐԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ  
ԿՈՐՆԳԱՆՆԵՐԸ

ՀԵՍՋ ՀՈՂԺՈՂԿՈՄՍ

ՀԻՄՆ ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՐՆԼԱՆ 1939

31 JAN 2018

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ  
ԿՈՐՆԳԱՆՆԵՐԸ

ՀԵՍՋ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ

ОБЯЗАТЕЛЬНО  
КОНТРОЛЬ  
ЭКЗЕМПЛЯР

ՀԵՍՋ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1939

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Անասնապահությունը հանդիսանում է Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը:

Լեռնային շրջանները հանձինս իրենց բնապատմական պայմանների բոլոր հնարավորություններն ունեն ապահովելու սոցալանասնապահության զարգացման արագ վերելքը:

Իրա համար անհրաժեշտ է աշխատանքի լողունգ ընդունել ընկ. Ստալինի ցուցմունքները՝

«Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն առնեն վողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատողները՝ կուսակցականները և անկուսակցականները, նկատի ունենալով, վոր անասնապահության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, վորպիսին եր յերեկ արգեն հաջողությամբ լուծված հացահատիկային պրոբլեմը»:

Սոցանասնապահության վերելքի բնագավառում Խորհրդային Հայաստանի կոլտնտեսային մասսան կուսակցության դեկավարությամբ վերջին տարիների ընթացքում ձեռք բերեց խոշոր նվաճումներ:

Այդ նվաճումներն ապահովելու և սոցանասնապահության արտադրողականությունն ել ավելի բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել կերի կայուն բազա:

Բնական հարուստ խոտհարքների, արոտների բարելավման աշխատանքներին ղուգընթաց Խորհրդային Հայաստանում ծավալվում է խոտացանությունն ընդհանրապես և մասնավորապես կողընգանացանությունը:

Ցանքաշրջանառության լրիվ կենսագործման դեպքում անհրաժեշտ կլինի Հայաստանի լեռնային շրջաններում կորնգանի, ցանքերի տարածությունը հասցնել հարյուր հազար հեկտարի, այսինքն՝ յուրաքանչյուր տարի ցանել 30 - 35 հազար հեկտար վորնգան:

Պատահական չէ, վոր ցանքաշրջանառության մեջ բազմամյա



11-286649

կերպարույթից առաջնութունը լեռնային շրջաններում հատկապես վաճ է կորնգանին. այդ բոլորում է նրա մի շարք արժեքավոր հատկանիշներից—այն է՝ նրա քսերոֆիտ և ձմռադիմացկուն լինելուց, մոլախոտերի դեմ հաջող պայքարելու և վոտ, բարբարոս ու սակավազոր հողերում անելու բնդունակությունից և այլն:

Հայտնի չէ, վոր կորնգանը, շնորհիվ յուր ուժեղ զարգացած արմատների և մի շարք բիոլոգիական հատկանիշների, հողերի նկատմամբ պահանջկոտ չէ:

Այսպես, որինակ՝ բազմաթիվ կոլտնտեսութունների (Ուղ, Աղքենդ, Զոլաքար և այլն) փորձերից կարելի չէ բավարարվել միայն Բասարգեչարի շրջանի Թուակյուլի կոլտնտեսության փորձով, վորտեղ քարքարոտ, կրային, թույլ զարգացած, 8—10 սմ վարելաչերտ ունեցող բողահողերում մոտավորապես 25 հեկտար տարածության վրա 1932 թ. ցանվել է կորնգան (տես աղյուսակ № 1):

ԱՂՅՈՒՍԱԿ № 1

Յերբ և ցանվել	1932 թ.	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.
1932 թվին	Ծածկոց հանդիսացող ցորենի բերքը 4,3 ց				
Կորնգանի բերքը	—	75 ց	100 ց	6,3 ցենտ. սերմ	Գարնան ցորենի 11,2 ց

Թվերը ցույց են տալիս, վոր կորնգանը, շնորհիվ չորադիմացկունության և հողերի նկատմամբ քիչ պահանջկոտության, կարող է բավականին մեծ բերք տալ այն սակավամասնուղ հողերում, ուր չեն կարող զարգանալ գյուղատնտեսական կուլտուրաներն ընդհանրապես, և կերպարույթը մասնավորապես:

Այդ նշանակում է, վոր ցանքաշրջանառության մեջ կորնգանի տարածության ընդարձակումը պետք է գնա վոչ թե իհարկի հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության կըրճատման, այլ գլխավորապես ի հաշիվ վատ, քարքարոտ, կրային, սակավազոր, փոքր վարելաչերտ ունեցող հողերի, վորոնց տարածությունը լեռնային շրջաններում բավականին մեծ է:

Այդ նշանակում է, վոր վրասակար են այն տրամադրությունները, վորոնք անասնաբուծության կերի բազայի ամրաց-

ման խնդիրները հակադրում են կոլտնտեսությունների հացահատիկային տնտեսության հետագա ամրապնդման խնդիրներին, քանի վոր... «Անասնաբուծության անուսն անհնարին է առանց անասունների համար հացահատիկի մեծ պատահեք ունենալու: Միայն անոդ ու ծավալվող հացահատիկային ցեղատեսակներ կարող են օժեղծել այնպիսի պայմաններ, վորոնք անհրաժեշտ են անասնաբուծության զարգացման համար» (Ստալին):

Աղյուսակն ապացուցում է, վոր ցանքաշրջանառության մեջ ընդգրկվող կորնգանը վոչ միայն չի կրճատելու հացահատիկների տարածությունները, այլ, ընդհակառակը, նոր հողային տարածություններ է ստեղծելու հացահատիկների համար ի հաշիվ վերև հիշված քարքարոտ, ավազային, փոքր վարելաչերտ ունեցող կրային հողերի և միևնույն ժամանակ բարձրացնելու չէ հացահատիկների բերքատվությունը:

Կորնգանը հայտնի չէ վորպես լավ նախորդ մի շարք կուլտուրաների համար: Բազմաթիվ փորձերից վորպես որինակ կարելի չէ բերել հետևյալը. Բասարգեչարի շրջանի Փամբակի կոլտնտեսությունը կորնգանի դաշտը 3 տարի ոգտագործելուց հետո 1934 թվին վարել և տեղը գարնան ցորեն էր ցանել: Մարտունու շրջանի Գյոզալգարայի կոլտնտեսությունը յուր «Մեծ առվի տակ» հողամասում կորնգանը 3 տարի ոգտագործելուց հետո տեղը վարել ու ցորեն էր ցանել:

Համեմատելով այդ 2 դաշտերի ցորենի բերքատվությունը նույն հողակլիմայական պայմաններում, — առաջին դեպքում գարնանացանից հետո ցանված ցորենի բերքի, յերկրորդ դեպքում մայիսյան ցելից հետո ցանված ցորենի բերքի հետ, — ստանում ենք հետևյալ պատկերը (աղյուսակ 2):

ԱՂՅՈՒՍԱԿ № 2

Շրջան—գյուղ	Նախորդը	Ցանվող կուլտ.	1 քառ. մետրում մոլորակների թիվը	Գարնան ցորենի բերքը
Բասարգեչարի շրջան, Փամբակ գյուղ	Կորնգան	Գարնանացան ցորեն	10,25	10,7 ցենտ.
»	Գարնանացան ցորեն	Գարնանացան ցորեն	25,8	6,5 »
Մարտունի Գյոզալգար	Մայիսյան ցել հունիս կրկնավաճ	Գարնանացան ցորեն	227, վորից 200 պոչուկ	8,9 »
»	Կորնգան	Գարնանացան ցորեն	36, վորից 18 պոչուկ	13,5 »

Այդուսակը ցույց է տալիս, վոր կորնզանը պայքարում է լեռնային շրջաններում մեծ շարիք հանդիսացող մուլախոտերի, մասնավորապես պոչուկի դեմ, և վոր կորնզանը բարձրացնում է հաջորդող կուլտուրայի բերքատվությունը:

Ահա թե ինչու լեռնային շրջաններում ցանքաշրջանառության մեջ ընդգրկելով կորնզանը՝ մի կողմից ստեղծում ենք անասնակերի կայուն բազա, մյուս կողմից ապահովում ենք հացահատիկային կուլտուրաների տարածության ընդարձակումը և բերքատվության բարձրացումը: Այսպիսով կորնզանը հանդիսանում է միջնորակ, վոր անասնապահության պրոբլեմի լուծումը կապում է այդ շրջանների հացահատիկի բերքատվության բարձրացման հետ:

Լեռնային շրջաններում ուժեղ թեքություն ունեցող սարալանջերում գտնվող վարելահողերի տարածությունը բավական մեծ է, հայտնի չե, վոր հաճախակի վարելու, ամեն սարի միամյա բույսեր ցանելու, կամ ցել անելու հետևանքով այդ հողերն անձրևներից լվացվում են, աղաջանում են ուժեղ սերավներ, վորոնց հասցրած վնասը հսկայական է լինում: Ուժեղ թեքություն ունեցող վարված սարալանջերում անհրաժեշտ է բազմամյա ուժեղ բուսական ծածկոց, վորի խնդրում կորնզանի դերը հսկայական է:

Հայտնի չե, վոր լեռնային շրջաններն ի վիճակի չեն դարգացնելու մեղվաբուծությունը, վորը նույնպես պահանջում է կերի բազա. կորնզանը, շնորհիվ իր առատ նեկտարների, հանդիսանում է մեղվաբուծության համար սթանչելի կերի բազա:

Չնայած այդ բոլորին, մինչև որս անհրաժեշտ ուշադրության չի արժանացել կորնզանը. մինչև հիմա չեն ուսումնասիրված նրա ազդոտեխնիկական խնդիրները, սերմնաբուծությունը, իսկ սելեկցիան—համեմատած գյուղատնտեսական մյուս կուլտուրաների հետ, գտնվում է սաղմային զրության մեջ: Մեղ մաս կորնզանի խորը գիտական սելեկցիոն աշխատանքներն սկսելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ, իմանալ տեղական վոյշ նյութը—ասորումենտը, առանց վորի հնարավոր չե յերբեք սելեկցիոն աշխատանք սկսել: Ահա ինչ է ասում ակադեմիկ Վավրյովը այդ մասին. «Պրակտիկ սելեկցիան սկսելիս անհրաժեշտ է ամենից առաջ իմանալ տեղական ամբողջ ասորումենտը—նա պետք է ծառայի յելանյութ սորտերի հետազոտությանը»: Ահա թե ինչու մեր առաջ խնդիր եր զբված ուսումնասիրել Հայաստանում մշակվող տեղական կորնզանները:

նպատակ ունենալով ճշտել նրանց տարածման ոջախները Հայաստանում, ուսումնասիրել այդ ոջախների բնապատմական պայմանները, տալ տեղական կորնզանների համեմատական ազդոտեխնիկական գնահատականը, նրանց ազդոտեխնիկան, սերմնաբուծության ներկա վիճակը և զարգացման ուղիները:

Այդ աշխատանքները տարվել են տարբեր ժամանակաշրջանում: Ինչ 1931 թ. հավաքվել են Հայաստանում մշակվող կորնզանների բազմաթիվ նմուշներ և ցանվել են Գյուղատնտեսական ինստիտուտի փորձադաշտում: Հետևապես տեղական կորնզանների մի շարք հատկանիշների ուսումնասիրությունը (բուսաբանական, բիոլոգիական) կատարվել է 1931 թվից սկսած:

Իրան գուզընթաց կազմակերպվել են եքսպեդիցիոն կարգով մի շարք հետազոտություններ. 1932 թ. ուսումնասիրվել են Աբարանի, Բասարգեչարի, Գարալագյազի, Թալինի և այլ շրջանների կորնզանի ցանքսերը: 1934-35 թ.թ. Հողփողկոմատի կողմից կազմակերպված Սևանի ավազանի գաշտավարությունն ուսումնասիրող եքսպեդիցիան, մանրամասն ուսումնասիրեց Սեվանի ավազանի (Սիսուայի, Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի) և Միսյանի շրջանի կորնզանները:

Այդ հետազոտություններից անկախ, 1936 թվին Հայկ. ԽՍՀ Հողփողկոմատը կազմակերպեց տեղական կորնզանների ազդոտեխնիկական հետազոտություն՝ ընդգրկելով վոյշ հարավ-արևելյան Հայաստանի (Սիսիանի, Գորիսի, Աղեզբեկովի, Միկոյանի և Մարտունու) շրջանները:

Այսպիսով մի շարք եքսպեդիցիաների ընթացքում, վորտեղ կորնզանների հետազոտությունը տարվել է հեղինակի անմիջական ղեկավարությամբ, հիմնական մասսիվներ ունեցող (Սիսիանում, Գորիսում, Աղեզբեկովում, Միկոյանում, Մարտունում) վայրերում կազմակերպվել են ստացիոնար ուսումնասիրություններ, պարզելով կորնզանի տնտեսական-բիոլոգիական և բուսաբանական հատկանիշները, կիրառվող ազդոտեխնիկան և սերմնաբուծության զբվածքը:

Այդ հետազոտությունների ընթացքում ժողոված բոլոր նյութերն ուսումնասիրվել են Հայաստանի Գյուղատնտեսական ինստիտուտի փորձադաշտում (Յերևանում) և նույն ինստիտուտի բուսաբուծության ամբիոնում:

Բազմաթիվ փորձեր են զբվել մի շարք շրջանների (Գյուղալարայի, Զուլաքարի, Դլաղի, Թյուսիկյուլի, Սիսավանի, Բը-

նակութի, Նորավանի, Գետաթաղի, Գյորուի, Մաղանջուզի, Մարտիրոսի և այլն) կոլտնտեսություններում, վորոնց նախագահներին ու բրիգադիրներին հայտնում ենք խորին շնորհակալություն ցույց տված ոժանդակության համար:

## I. ԿՈՐՆԳԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կորնգանի մշակությունը, ըստ յեղած գրականության հայտնի յե մոտավորապես 400 տարուց իվեր: Առաջին անգամ կորնգան մշակվել է հարավային Ֆրանսիայում. ըստ Vioanne-ի՝ կորնգանի մասին առաջին հաղորդումը կատարվել է 1582 թվին, բայց կուլտուրան առաջին անգամ նկարագրվել է 1620 թ.:

Գերմանիայում կորնգան սկսել են մշակել XVII դարում, Իտալիայում՝ XVIII դարում: Ըստ Алффонс Де-Кондол-ի (6)՝ հարավային Ֆրանսիայում XVI դարում կորնգանը վորպես խոտ շատ եյին գնահատում, ըստ Медикус-ի (5)՝ կորնգանը մշակվել է Due-ում և Дофинс-ում ավելի շուտ (1567 թվականից):

Оливье де Серре-ը (Olivier de Serre-ը), վոր համարվում է Ֆրանսիական յերկրագործության հայրը, դեռևս 1600 թվին մանրամասն նկարագրելով կորնգանը՝ այսպես եր բնութագրում այդ բույսը. «Le sainfoin fait la fortune du paysant» («կորնգանը կերտում է գյուղացու բախտը»): Անգլիայում կորնգանի մշակությունն սկսվել է 1640-ական թվականներից, այդ ժամանակ Паркинктон-ը գրում է՝ «կորնգանը բուրբին հայտնի յե վորպես յուրահատուկ կեր, վորը բարձրացնում է անասունների կաթնատվությունը»:

Յերբվանից է կորնգանը մշակվում Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում, այդ մասին դժվար է հաստատ խոսք ասել: Հետազոտողները, ինչպես տեսանք, մշակման սկզբնավայրն ընդունում են Ֆրանսիան, վորտեղից աստիճանաբար, ըստ այդ բուսաբանների, կորնգանն սկսում է տարածվել նաև մյուս յերկրներում, վորոնց թվում նաև Ռուսաստանում՝ 19-րդ դարի վերջում: Չարգացնելով այդ միտքը գալ այն յեզրակացության, վոր Անդրկովկասն էլ իր հերթին ընդորինակել է կորնգանի մշակութթը Ռուսաստանից—կլինի սխալ: Ահա թե ինչ է ասում այդ մասին Н. Кулешов-ը (8) «Մեծ հեաաքբրություն է ներկայացնում կորնգանի ասիական ոջախը, վորին պատկանում են Իրանը, Հա-

յատաւը, Աղբրեշանը և Փոքր Ասիայի մի քանի վիլայիթները՝ Մի շարք գրութիւններ ստիպում են մեզ յենթադրելու, վոր կորնզանի այդ ոջախը հանդիսանում է ինքնուրույն և առաջացել է անկախ Յեվրոպայի ոջախից»:

Յեթե ընդունելու լինենք, վոր այս կորնզանը Ռուսաստանից կամ Յեվրոպայից է բերվել, ապա այդ դեպքում պետք է վոր տեղական կուլտուրական կորնզանները նման լինեն Ռուսաստանում կամ Յեվրոպայում մշակվող *On. viciaefolia Scop.* ինչ: Սակայն նրանք, ինչպես հետո կտեսնենք, վոչ միայն բուսաբանական, այլև բնորոգիական խոշոր հատկանիշներով տարբերվում են միմյանցից:

«Կորնզանի ասիական ձևերը, վորոնք հավաքվել են Աղբրեշանում *Н. Кулешов-ի*, Հայաստանում՝ *Е. А. Столетова-ի*, Փոքր-Ասիայում՝ *П. М. Жуковский-ի* և Իրանում՝ *Е. Г. Чернякова-ի* կողմից, փորձակվելով *В. И. П. Б.* և *Н. К-ի* ուկրաինական կայանում՝ իրենց բերքատվությամբ գերազանցել են կայանում փորձարկվող բոլոր ձևերից»: Կամ թե չէ՝ «Անդրկովկասյան կորնզանն ստացված է մի շարք պրակտիկ արժեքավոր հատկանիշներով, ապրիս է մեզ մոտ (Ուկրաինայում) բավականին մեծ բերք, բերքատվությունն սկսվում է ցանքի առաջին տարվանից, վորից հետո աճման եներդիան բարձր է քան մյուս կորնզանների մոտ, սնամեջ ցողունների հետևանքով ստացված խոտը նուրբ է» (37):

Յեվ վերջապես, յեթե ընդունելու լինենք, վոր կորնզանը Յեվրոպայից է բերվել, ապա նա պետք է Հայաստանում մշակության մեջ մտնել նույն տարիներում, ինչ վոր Յեվրոպայում կամ մի քիչ ուշ. սակայն հայկական մատենագրական արխիվում կան մի շարք հիշատակութիւններ կորնզանի կուլտուրայի մասին, վորոնք վերաբերում են ավելի հին ժամանակներին, քան կորնզանի Յեվրոպայի մշակութի տարիթիվն է: Այսպես, որինակ՝ Ալիշանը յուր «Հայ-բուսակում» գրում է. «Մեր հոգեմկազ Գրիգոր Նարեկացին 10-րդ դարում իր Սայլի և Հարություն յերգի մեջ կհիշե այդ բույսը»:

«Այն 6 բարդ կորնզանն, այն 6 որվա գործն արտծո» (47): այստեղ խոսքը վերաբերում է կորնզանի մաքուր ցանքերին, նրանից ստացած խոտի բարդերին: Բացի այդ, կան մի շարք հաղորդումներ կորնզանի մասին, վորոնք վերաբերում են ավելի

հին ժամանակների, որինակ՝ Մխիթար Գոշ, Ամիր-Իսրաիլ և այլն:

Այդ մասին կան ոտարերկրացի ճանապարհորդների հիշատակութիւններ, վորոնք նկարագրում են Հայաստանի կորնզանի ցանքերը. այսպես, որինակ՝ Radde-ն ըստ Ալիշանի «Տեղագրութիւն Սուսյաց աշխարհի» գրքում գրված է. «Սիսյանի գետի ձորում կհիշե բարգավաճ-դալարիս զը քաղցը կորնզան չափ մի մետր բարձրությամբ» (49):

Մատենագրական հիշատակութիւնները համոզիչ կերպով ապացուցում են, վոր կորնզանի մշակութիւնը Հայաստանում բավական հին է, վոր առաջավոր Ասիան (Անդրկովկասը, Իրանը, Տաճկաստանը) հանդիսանում է կուլտուրական կորնզանների մշակման ամենահին ոջախը: Այդ հիշատակութիւններն ապացուցում են, վոր սխալ է այն կարծիքը, վոր կորնզանն առաջին անգամ մշակության մեջ է մտել 16-րդ դարում Ֆրանսիայում:

Կորնզանի մշակութիւնը Հայաստանի տարբեր շրջաններում, տարբեր ժամանակվանից է սկսվել—որինակ՝ Զանգեզուրում և Դարալագյաղում անհիշելի ժամանակվանից, իսկ մյուս շրջաններում՝ ավելի ուշ:

Մարտունու շրջանի Զուլաքսը գյուղացի Պետոյան Հովին, վորը 1935 թ. 105 տարեկան էր, յեղնելով հոր ասածներին՝ պատմում է հետևյալը.

«Այնպիսիք, վորտեղ մշակում էյինք նաև կորնզան, Զուլաքսը (նախկին Զուլախալ) ենք գաղթել 1820-ական թվերին: Հայրս նույն թվերին Փաշալուից բերում է 4 փութ կորնզանի սերմ և ցանում է կես հեկտարում. հորս մահից հետո մանուկ հասակից ինքս եմ մշակում կորնզանի ցանքերը՝ ամեն անգամ Դարալագյաղից սերմ բերելով»:

Նույն շրջանի Ն. Գյոզալդարայի գյուղացի Սեոյան Հակոբը, վոր 97 տարեկան է, պատմում է, վոր ինքը 15 տարեկան էր, յերբ հայրը Դարալագյաղից կորնզանի սերմ է բերել և ցանել, իսկ հոր մահվանից հետո ինքն է մշակել: Յեղնելով իր 80 ից ավելի տարիների փորձից՝ նա հետևյալ խորհուրդն է տալիս. «Կորնզանը ցանիլ չոր, ավազային, քարքարոտ բողանոգերում անստուններ լիանան: Բանդիր, տեղը հաց ցանիլ, 2—3 տարի գերդաստանդ կշտանա»:

Ըստ այդ կենդանի վկաների տեսնում ենք, վոր կոնկրետ

Սեանի շրջանում կորնգանացանությամբ զբաղվում են 110 տարուց ավելի, ուրիշ խոսքով ավելի շուտ, քան Ռուսաստանի հին կորնգանացան շրջանները—Ուկրաինան և այլն:

## II. ՏԵՂԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿՈՐՆԳԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Այժմ միջանի խոսք Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում մշակվող կուլտուրական կորնգանների ծագման մասին: Ինչպես բոլոր կուլտուրական բույսերի, այնպես էլ կորնգանի ծագման մասին խոսելիս պետք է անպայման դոյուքյուն ունեցող մեթոդներին հետ միասին համադրել, համեմատել նույն արիալում տարածված նրա վայրի, մոտիկ տեսակների հետ: Անդրկովկասում և մասնավորապես Խորհրդային Հայաստանում մշակվող կուլտուրական կորնգաններին շատ մոտ են կանգնած վայրի կորնգաններից On. transcaucasica-Grossh. և On. altissima-Grossh.-ը: Բերինք մի աղյուսակ, վորը համեմատականորեն կպարզի այդ տեսակների հատկանիշների փոփոխությունները (տես աղյուսակ № 3):

### ԱՂՅՈՒՍԱԿ Ն 3

Համեմատական փոփոխությունների աղյուսակ

№ ը/կ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.
1	Ծաղկի գույնը . . . . .	1. Բաց վարդագույն	1. Վարդագույն	1. Բաց վարդագույն
		2. Վարդագույն	2. Բաց վարդագույն	2. Վարդագույն
		3. Կարմիր	3. Բաց կարմիր	3. Կարմիր
		4. Սպիտակ	—	—
		5. Մանիշակագույն	5. Մանիշակագույն	—
2	Առաջատար յերակները գույնը . . . . .	1. Ուժեղ և արահայտված	1. Ուժեղ և արտահայտված	1. Ուժեղ արտահայտված
		2. Բաց գույնի	2. Բաց գույնի	2. Բաց գույնի
		3. Մուգ գույնի	3. Մուգ գույնի	3. Մուգ գույնի
		4. Բացակայում է	4. Բացակայում է	—
3	Նավակի գույնը . . . . .	1. Գրեթե նույնն է, ինչ առաջատարինը	1. Գրեթե նույնն է, ինչ առաջատարինը	1. Գրեթե նույնն է, ինչ առաջատարինը
		2. Բաց գույնի, սպիտակավուն	2. Բաց գույնի սպիտակավուն	—

№ ը/կ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.		
4	Վողկույզի յերկարութ. ծաղկման մոմենտին . . . . .	1. Յերկար՝ 7—9 սմ	1. Յերկար՝ 5—7 սմ	1. Յերկար՝ 5—7 սմ		
		2. Միջին՝ 4—6 սմ	2. Կարճ՝ 3—4 սմ	2. Կարճ 3—4 սմ		
		3. Կարճ՝ 2—3 սմ	—	—		
5	Վողկույզի յերկարութ. սերմակալման շրջանում . . . . .	1. Յերկար՝ մինչև 25 սմ	1. Յերկար՝ մինչև 15 սմ	1. Յերկար՝ մինչև 17 սմ		
		2. Միջին՝ 10—15 սմ	2. Միջին՝ 9—11 սմ	2. Միջին՝ 10—12 սմ		
		3. Կարճ՝ 5—7 սմ	—	—		
6	Վողկույզի կոթունը . . . . .	1. 2—3 անգամ յերկար է տերևից	1. 2—3 անգամ յերկար է տերևից	1. 2—3 անգամ յերկար է տերևից		
		2. 1—2 անգամ յերկար է տերևից	—	—		
		3. Նույն յերկարությամբ է, ինչ տերևը	—	—		
		4. Մերկ է	4. Թավոտ է	4. Մերկ է		
7	Ծաղիկները թիվը վողկույզում . . . . .	1. Վողկույզը բազմածաղիկ է—մինչև 80	1. Վողկույզը բազմածաղիկ է մինչև 60	1. Վողկույզը բազմածաղիկ է—մինչև 65		
		2. Վողկույզը սակավածաղիկ է—վոչ պակաս 30	2. Վողկույզը սակավածաղիկ է—վոչ պակաս 15	2. Վողկույզը սակավածաղիկ է—վոչ պակաս 20		
8	Վողկույզի խառնթյունը	1. Նոսր	1. Նոսր	1. Նոսր		
		2. Խիտ	2. Խիտ	—		
9	Վողկույզի ձևը . . . . .	1. Իլիկաձև	1. Իլիկաձև	1. Իլիկաձև		
		10	Բաժակի գույնը . . . . .	1. Բաց կանաչ	—	1. Բաց կանաչ
				2. Մուգ կանաչ	2. Մուգ կանաչ	2. Մուգ կանաչ
11	Բաժակի թավառությունը	3. Անտոցիանով ներկված	—	—		
		1. Թավոտ է	1. Թավոտ է	1. Թավոտ է		
		2. Հիմքը մերկ է	—	2. Հիմքը մերկ է		
		3. Մերկ է	—	—		



№ ք/կ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.
12	Բաժակի տամնիկները	1. Վերին մասը մերկ է — 3. Մերկ է ամբողջությամբ	1. Վերևը կողքերը խիստ թավոտ են 2. Ամբողջը խիստ թավոտ է —	1. Վերին մասը մերկ է 2. Ամբողջը խիստ թավոտ է —
13	Ծաղկի մեծութունը	1. Խոշոր է	1. Խոշոր է	1. Խոշոր է
14	Հատիկի մեծութունը	1. 1000 հատիկի բացարձակ քաշը հավասար է 13,7 գրամ 2. 1000 ծավալը հավասար է 11,1 խ սմ	1. 1000 հատիկի բացարձակ քաշը 13,1 գ 2. 1000 ծավալը հավասար է 10,2 խ սմ	1. 1000 հատիկի բացարձակ քաշը հավ. 13,2 գրամ 2. 1000 ծավալը հավասար է 10,3 խ սմ
15	Հատիկի ձևը	1. Յերիկամունքաձև 2. Կլոր	1. Յերիկամունքաձև —	1. Յերիկամունքաձև —
16	Հատիկի գույնը	1. Բաց գորշ 2. Մուգ-գորշ 3. Սև	1. Բաց գորշ 2. Մուգ գորշ —	1. Բաց գորշ —
17	Ունդի ձևը	1. Կիսակլոր	1. Կիսակլոր	1. Կիսակլոր
18	Ունդի զինվածութունը	1. Ունդը զինված չէ 2. Ունդը թույլ զինված է	1. Ունդն ուժեղ զինված է 2. Ունդը թույլ զինված է	1. Ունդը զինված չէ 2. Ունդը թույլ զինված է
19	Ունդի գույնը	1. Բաց գորշ 2. Բաց կանաչ գեղնավուն	1. Բաց գորշ —	1. Բաց գորշ 2. Բաց կանաչ գեղնավուն
20	Ունդի թավոտությունը	—	3. Մուգ գորշ 1. Ուժեղ թավոտ	3. Մուգ գորշ 1. Ուժեղ թավոտ
21	Ունդի մեծությունը	2. Թույլ թավոտ 1. 1000 ունդի բացարձակ քաշը հավասար է 17,1 գրամ 2. 1000 ունդի ծավալը = 14,5 խ սմ	2. Թույլ թավոտ 1. 1000 ունդի բացարձակ քաշը հավասար է 16,3 գ 2. 1000 ունդի ծավալը = 13,3 խ սմ	2. Թույլ թավոտ 1. 1000 ունդի բացարձակ քաշը հավասար է 16,7 գ 2. 1000 ունդի ծավալը = 13,2 խ սմ

№ ք/կ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.
22	Տերևալիցների ձևը	1. Համարյա թե ազատ են 2. Հայտնի յոթանկյունաձև	1. Միացված են 2. Չվաճակ են	1. Համարյա թե ազատ են 2. Հայտնի յոթանկյունաձև
23	Տերևիկի ձևը	1. Ելիպսոսձև — յերկարացված 2. Բուժ ծայրով	1. Ելիպսոսձև — յերկարացված 2. Սրածայր 3. Բուժ ծայրով	1. Ելիպսոսձև յերկարացված 2. Ելիպսոսձև 3. Յերկար սրածայր
24	Տերևիկի ծայրի ընկալքը	1. Սրածայր 2. Բուժ 3. Փոս ընկած	1. Սրածայր 2. Բուժ 3. Փոս ընկած	1. Սրածայր 2. Բուժ 3. Փոս ընկած
25	Տերևիկների յեզրերը	1. Ամբողջական	1. Ամբողջական	1. Ամբողջական
26	Տերևիկների յերկարությունը	1. Յերկար՝ 1,7—3,9 սմ	1. 1,5—2,5 սմ	1. 1,5—2 սմ
27	Տերևիկների լայնությունը	1. Հայտնի՝ 0,4—1,5 սմ	1. Հայտնի՝ 0,2—0,5 սմ	1. 0,3—0,9 սմ
28	Տերևիկների գույնը	1. Բաց կանաչ 2. Մուգ կանաչ	1. Բաց կանաչ 2. Մուգ կանաչ	1. Բաց կանաչ 2. Մուգ կանաչ
29	Տերևիկների թավոտությունը	1. Բացակայում է 2. Թույլ թավոտ	1. Ուժեղ թավոտ 2. Վերևից մերկ	1. Բացակայում է 2. Մազիկները տերևի մակերեսին հորիզոնական են 1. Ուժեղ 2. Միջին 3. Թույլ
30	Բույսի տերևավաղման աստիճանը	1. Ուժեղ 2. Միջին 3. Թույլ	—	—
31	Տերևիկների թափվելը ծաղկման շրջանում	1. Ներքին տերևավիկները թափվում են 2. Չեն թափվում	—	1. Ներքին տերևավիկ չեն թափվում —
32	Թփի ձևը	1. Կանգուն 2. Կիսականգուն —	1. Կանգուն 2. Կիսականգուն 3. Փռված	1. Կանգուն 2. Կիսականգուն 3. Փռված

№ ք/դ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.
33	Թփակալումբ	1. Ուժեղ 2. Միջին	1. Ուժեղ 2. Միջին	1. Ուժեղ 2. Միջին
34	Ճյուղավորումբ . . .	1. Յուրաքանչյուր տերևածոցից տալիս ե ճյուղեր 2. Չի ճյուղավորվում	—	—
35	Բույսի բարձրությունը .	1. Բարձր՝ 1,2—1,5 մետր 2. Միջին 0,9—1,1 մետր	1. Բարձր՝ 0,9—1,1 մետր 2. Միջին՝ 0,5—0,8 մետր	1. Բարձր՝ 0,8—0,9 մետր 2. Միջին՝ 0,7—0,8 մետր
36	Յողունի անամեջությունը . .	1. Լցված է կիսով չափ 2. Մնամեջ է	1. Լցված է կիսով չափ 2. Մնամեջ է	1. Լցված է կիսով չափ 2. Մնամեջ է
37	Յողունի ձևն ու հաստությունը . .	1. Հաստ 2. Բարակ 3. Կլոր	1. Հաստ 2. Բարակ 3. Կլոր	1. Հաստ 2. Բարակ 3. Կլոր
38	Յողունի թավոտությունը	1. Մերկ 2. Թույլ թավոտ —	2. Թույլ թավոտ 3. Ուժեղ թավոտ	2. Թույլ թավոտ —
39	Միջնագույցների յերկարությունը .	1. Յերկար է 2. Կարճ	1. Յերկար է 2. Կարճ	1. Յերկար է 2. Կարճ
40	Յողունի գունը . . .	1. Բաց կանաչ 2. Կանաչ 3. Անտոցիանով	1. Բաց կանաչ 2. Կանաչ 3. Անտոցիանով	1. Բաց կանաչ 2. Կանաչ 3. Անտոցիանով
41	Վաղահասություն . . .	1. Շուտ ծաղկող	1. Շուտ ծաղկող	1. Շուտ ծաղկող
42	Մնկային հիվանդություններից վարակվելը . .	1. Այլուրացողից վարակվում է ուժեղ 2. Քորշ հետքից վարակում է միջակ	1. Թույլ 2. Միջակ	1. Ուժեղ 2. Միջակ

№ ք/դ	Հատկանիշներ	On. antasiatica A. Khintch	On. transcaucasica Grossh.	On. altissima Grossh.
43	Չ/ոան ղիմացկունությունը . . .	1. Ուժեղ 2. Միջին	1. Ուժեղ 2. Միջին	1. Ուժեղ —
44	Յերաշտաղիմացկունություն . . .	1. Ուժեղ	1. Ուժեղ	1. Ուժեղ
45	Աճման տեմպը . . . . .	1. Ուժեղ	1. Ուժեղ	1. Ուժեղ
46	Աճող ոողկուկայի ձևը .	1. Կանգուն 2. Կիսականգուն	—	—
47	Թփակալման հանգույցի խորությունը (հողի մակերեսից) . .	1. Խոր 2. Յերես	1. Խոր —	1. Խոր —
48	Արմատային սիստեմի բնույթը . . .	1. Ճյուղավորված	1. Չի ուսումնասիրված	1. Չի ուսումնասիրված
49	Ինքնաֆերտիլությունը	1. 6,9%	1. 5,72%	1. 5,89%
50	Արմատների վրա պարաների քանակը . . . . .	1. Շատ և խոշոր	1. Շատ և խոշոր	1. Շատ և խոշոր
51	Տարածման արելալը . . .	1. Առաջավոր Ասիա (Թյուրքիա, Պարսկաստան, Անդրկովկաս)	1. Անդրկովկաս, Պարսկաստան	1. Անդրկովկաս, Պարսկաստան

11-286649

Այդպիսով համեմատական աղյուսակը ցույց է տալիս, վոր սկզբունքային խոշոր հատկանշական տարբերություններ տեղական կուլտուրական կորնզանի՝ On. antasiatica-ի և յերկուվայրի կորնզանների՝ On. transcaucasica Grossh. և On. altissima Grossh. միջև չկան. ճիշտ է, H. A. Ipoицкнй-ն նշելով, վոր On. transcaucasica Grossh. և On. altissima Grossh. շատ մոտ են կանգնած կուլտուրական կորնզանին, տարբերվելով նրանից մանր բուսաբանական հատկանիշներով, վորոնք մեծ մասամբ ունեն քանակական բնույթ (10): Այդ մասին ահա թե ինչ է գրում Կովկասի կորնզանների մոնոգրաֆ A. A. Гроссгейм-ը. «On. trans-

caucasica ն յուր մորֆոլոգիական հատկանիշներով համարյա թե չի տարբերվում կուլտուրական կորնգաններէց՝ *On. altissima*-ն մորֆոլոգիական հատկանիշներով այնքան է նման կուլտուրական կորնգանին, վոր շատ դեպքերում այդ յերկու տեսակները խառնում են» (14):

Վոչ միայն բուսաբանական տեսակետից, այլև բիոլոգիական հատկանիշներով այդ յերկու վայրի կորնգանները շատ մոտ են կանգնած կուլտուրականին: Վերցնենք այնպիսի հատկանիշներ, փնջպիսիք են վաղահասութիւնը, ձմռադիմացկունութիւնը, յե ըաշտագիմացկունութիւնը, սնկային հիվանդութիւններից վարակվելը ն այլն. գրեթե վոչնչով չեն տարբերվում իրարից: Համեմատութեան մեջ դնելով նրանց քիմիական կազմը՝ կտեսնենք, վոր տարբերութիւնը դարձյալ աննշան է:

Այստեղ բնորոշ է այս յերեք կորնգանների տարածման արեալների համընկնելը: Վայրի կորնգանները *On. transcaucasica* Grossh. և *On. altissima* Grossh-ը մեծ չափով տարածված են արևելյան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի լեռնային մարգագետիններում. սրանց տարածումը մեծ է նաև ուսումնասիրվող շրջաններում, սկսած Գորիսի շրջանի Ուշթափալարի լեռնային խոտհարքներից, Միսյանում, Գարաբասի ձորում, Ազիզբեկովում. Միկոյանի շրջանում, Մարտունիում, ուրեմն ամբողջ այն մասսիվում, վորտեղ կենտրոնացված է տեղական կորնգանների մշակուսիքը: Վորոշ մասսիվներում տարածման չափն այն աստիճան մեծ է (Գետաթաղ, Լոր, Ուշթափալար և այլն), վոր գյուղացիները մինչև հիմա էլ, վորոշ հոգատարութեամբ դրանք խնամում, դրանցից չույնիսկ սերմ են վերցնում ցանելու համար:

Այս համեմատական աղյուսակից, պիտի գալ այն յեզրակացութեան, վոր առաջավոր Ասիայում, մասնավորապես Անդրկովկասում մշակվող կուլտուրական կորնգանները, վորոնց *A. XHK-ayk*-ը համարում են որ տեսակ, անվանելով *On. antasiatica*, առաջացել են *On. transcaucasica* Grossh-ից և *On. altissima* Grossh-ից:

Դարեր շարունակ տեղական կորնգանը մշակման յենթարկվելով՝ ձեռք է բերել այն քանակական հատկանիշներն ու զարգացման հնարավորութիւնները՝ բույսի բարձրութիւնը, տերեվակալման աստիճանը, բերքատուութիւնը և այլն, վորոնցով և տարբերվում է:

### XIII. ԿՈՐՆԳԱՆԱՑԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍԸ-ՈՒՄ

Չնայած կորնգանի մի շարք արժեքավոր հատկանիշներին, չի կարելի ասել, վոր կորնգանացանութիւնը խորհրդային Հայաստանում լավ հիմքերի վրա յե դրված:

Սորհրդային Հայաստանի մի շարք շրջաններում նույնիսկ այժմ էլ խոտացանութեանը նայում են վորպես ագրոտեխնիկական վոչ մի ձեռնարկում չպահանջող կուլտուրայի: «Մոտ է, փնջնըստինքյան կկանաչի»: Սա յե ընդունված տեսակետը: Այդ դրվածքից է բղխում խոտաբույսերի բացարձակ ցածր բերքատուութիւնը, նրանց սերմնարուծութեան խոտնիճածանչ վիճակը, նրանց ասորտիմենտի վոչ ճիշտ ընտրութիւնը և, վերջապես, նրա սեղեկիցիայի դեռ սաղմնային վիճակում լինելը:

Մի շարք տարիների օ սումնասիրութեան ընթացքում շատ սակավ կարելի յեղով հանդիպել կերպուսների դաշտերի, մասնավորապես կորնգանի ցանքերի, վորտեղ ագրոտեխնիկական գտնըվելիս լինել նույն բարձրութեան վրա, ինչ բարձրութեան վրա վոր գտնվում էր հացահատիկային կուլտուրաների ագրոտեխնիկան: Մինչդեռ բերքատուութեան բարձրացման հիմնական ողակներից մեկը, դա ագրոտեխնիկայի լրիվ իրացումն է:

Վերլուծենք ագրոտեխնիկական միջոցառումներն առանձին-առանձին:

#### ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՈՒՄ

Ինչպես գիտենք, հողի նախապատրաստման բնույթը բըղխում է տվյալ բույսի—կոնկրետ, այս դեպքում կորնգանի բիոլոգիական առանձնահատկութիւններից տվյալ շրջանի սահմաններում:

Նախապատրաստման ընթացքում նկատի պիտի ունենալ.

1. վոր կորնգանի մատղաշ ծիլերն ի վիճակի չեն հաղթահարելու մոլախոտերին.
2. վոր ցանրի մոմենտին ու զարգացման սկզբնական շրջանում կորնգանը պահանջում է մեծ քանակութեամբ ջուր վարելահողի վերին շերտում.
3. վոր կորնգանի արմատները, արագ կերպով հողի խորքը թափանցելու հետևանքով, պահանջում են վերին շերտում փխրուն արհացիոն պայմաններ.

4. վոր կորնգանը միենույն դաշտն զբաղեցնում է 3—4 տարի: Ահա այս չորս պահանջներից յեղնելով պիտի կատարել կորնգանի ցանքի հողի նախապատրաստումը: Մինչդեռ միշարք զբքերում կամ բոլորովին չի խոսվում կորնգանի ազրոտեխնիկայի մասին, կամ բավականանում են՝ «կորնգանի ազրոտեխնիկան նույնն է, ինչ առվույտինը» սովորական տերմինով: Փորձնական կայանների կողմից կերաբույսերից առվույտի, յերեքնուկի ազրոտեխնիկայի ուսումնասիրության նկատմամբ վորոշ աշխատանք կատարված է, բայց կորնգանի նկատմամբ՝ համարյա թե մոչինչ: Հողի նախապատրաստման խնդրում մեծ է վարի-ժամկետի նշանակութունը. այսպես, որինակ՝ Սիսյանի շրջանի Բռնակոթ գյուղում վարի տարբեր ժամկետները տալիս են տարբեր արդյունք: (Տես աղյուսակ № 4):

ԱՂՅՈՒՍԱԿ № 4

ՎԱՐԻ ԺԱՄԿԵՏԸ	կորնգանի ցանքի 2-րդ տարին (ոգտագործման 1-ին տարին)	
	1-ին հարը—խոտ ցենտ. հեկտար	2-րդ հարը—սերմ ցենտ. հեկտար
Աշնան վար . . . . .	59,6	8,9
Գարնան վար . . . . .	41,79	6,7

Թվերը ցույց են տալիս, վոր միայն վարի ժամկետը կանոնավորելու շնորհիվ խոտի բերքատվությունը բարձրացնում ենք 17,8 ցենտներով, իսկ սերմի բերքը՝ 2,2 ցենտներով: Չնայած դրան, թե այդ կոլտնտեսությունում և թե մյուսներում շարունակում են վարը կատարել գարնանից:

Բերքատվության բարձրացման տեսակետից խոշոր նշանակութուն ունի վարի խորությունը: Այս գործն ազելի վատ է դրված: Շատ անգամ (Շաքի, Մելիքլար, Տուլորս) կորնգանը շաք է տրվում խամ հողի վրա, առանց վարի, լավագույն դեպքում վարվում է շատ սաղր, մինչդեռ մյուս բազմամյա կերաբույսերի նկատմամբ փորձնական կայանների, իսկ կորնգանի նկատմամբ կոլտնտեսությունների սեփական փորձից պարզվում է, վոր կորնգանի բերքատվության բարձրացման համար վարի խորությունը խոշոր նշանակութուն ունի:

Այսպես, որինակ՝ Աղիգբեկովի շրջանի Մարտիրոս գյուղի

«Ջրադացներ» հողամասում 1935 թ. ցանքը կատարվել է մի մասը խորը (20—22 սմ) գարնան վարի վրա, իսկ մյուսը՝ սաղր (10—12 սմ) գարնայլ գարնան վարի վրա: Յերկու տարվա դիտողությունները հետևյալն են ցույց տալիս (տես աղյուսակ № 5):

ԱՂՅՈՒՍԱԿ № 5

ՎԱՐԻ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ	1-ին տարվա բերքը		2-րդ տարվա բերքը	
	1-ին հար	2 րդ հար	1-ին հար	2-րդ հար
20—22 սմ	21 ցենտ.	—	57 ցենտ.	32 ցենտ.
10—12 սմ	—	—	41 >	17 >

Թվերը ցույց են տալիս, վոր հողի վոչ կանոնավոր վարի դեպքում, այսինքն սաղր վարի դեպքում տնտեսությունը զբրկվում է ցանքի 1-ին տարին 21 ցենտ. չոր խոտից, իսկ ցանքի 2-րդ տարին՝ 1-ին և 2-րդ հարը միասին՝ 31 ցենտ. չոր խոտից. ուրեմն 2 տարվա ընթացքում տնտեսությունը զրկվում է 52 ցենտ. կորնգանի չոր խոտից:

Հողի նախապատրաստման գործում մեծ նշանակութուն ունի վերելահողերի մակերեսի հարթ լինելը, վորպիսի հանգամանքը նպաստում է կորնգանի սերմերի համեքաշխ և լրիվ ծլելուն:

Սուխոյֆանտանի «Կամենդատսկի» կոչվող հողամասում 1934 թ. խոր վարից հետո անմիջապես շաղ եյին տվել կորնգանի սերմ ու ապա միայն փոցխել: Արդյունքն այն էր յեղել, վոր 1934 թ. ծլել էր սերմի միայն 37% (նրանք, վորոնք յերես էյին), իսկ մնացած սերմը խոր ընկած լինելու պատճառով փտել, վոչնչացել էր:

Ահա թե ինչու անհրաժեշտ է ցանքից առաջ հողը կանոնավոր փոցխել, հարթ մակերես ստեղծել:

կորնգանը կարելի չէ ցանել և՛ գարնանը, և՛ աշնանը և, այսպես կոչված՝ ղոնդուրմա: Մինչև հիմա վորոշակի տեսակետ այդ ժամկետների մասին չի մշակված, սակայն յեղած տվյալներից յեղնելով՝ պիտի գերադասել գարնան ցանքը:

Մեղ մոտ մինչև 1936 թ. գարնանացանը՝ կորնգանի և ընդհանրապես խոտաբույսերի ցանքը կատարվում էր ուշ գարնանը, յերբ մյուս կուլտուրաների ամբողջ ցանքն ավարտված էր: Նման

դեպքեր 1934—35 թ. թ. հանդիպել ենք Սուխոյֆանտանում, Չուլաքարում, Ազադեկում, Դարաբասում և այլն, վորտեղ չնայած ցանքն սկսվել էր ապրիլի առաջին կեսերին, մինչդեռ կորնգանը ցանվել էր մայիսի վերջին կամ ավելի ուշ:

Չուլաքարում ապրիլի 16-ին ցանած կորնգանը հուլիսի 17-ին ծաղկել էր և հնարավոր էր հնձել, մինչդեռ նույն հողամասում մայիսի 27-ին ցանված կորնգանը նույն ժամկետում հազիվ 2-րդ սերունդն էր տվել: Այդ տարբերությունը նկատվում է վոչ միայն ցանքի առաջին տնրին, այլև ցանքի 2-րդ տարվա ընթացքում:

Չուլաքարի նույն դաշտերը ցանքի 2-րդ տարում, այսինքն՝ 1936 թ. մեկ հեկտարից հետևյալ բերքը տվին.

Ապրիլի 16-ին ցանածը տվեց 86 ցենտներ,  
մայիսի 27-ին       »       »       69       »

Ուրեմն գարնանային ուշ ցանքը զրկում է տնտեսությունը առաջին տարվա բերքից, իսկ յերկրորդ տարվա բերքը պակասեցնում է 17 ցենտներով:

Միքանի խոսք էլ աշնանացանների մասին. — կորնգանի մատուցող և չկազմակերպված ծիլերը ձմեռվա սառնամանիքից շուտ են վնասվում: Այս հանգամանքն անտես առնելով՝ Սիսյանի մի շարք գյուղեր 1935 թ. կազմակերպում են կորնգանի աշնանացանքը՝ Ցանքը կատարվել է սեպտեմբերի վերջին, մի մասն էլ հոկտեմբերի առաջին կեսերին: Ցանքերը բոլոր գյուղերումն էլ (Բոնակրթ, Շաղաթ, Սիսավան) ձմեռն ամբողջությամբ ցրտահարվել են. դրանից յեզրակացնել, վոր կորնգանն աշնանը չի կարելի ցանել, կլինի սխալ:

Կորնգանն աշնանը կարելի չէ ցանել, սակայն դա պետք է կազմակերպել ոգոստոսին, վորպեսզի մինչև ցրտերի վրա հասնելը ծիլերն այնքան զարգացած և ուժեղացած լինեն, վոր կարողանան դիմանալ ձմեռանը:

Կորնգանի զոնդուրմա ցանքերը կարող են մեծ արդյունք տալ թեք լանջերի թեթև ավազային հողերում: Թե աշնանացանի և թե զոնդուրմայի խնդիրներն անհրաժեշտ է լուսաբանել կոլտնտեսություններում կազմակերպված խրճիթ-լաքորատորիաների միջոցով:

Վատ է զրկված մեզ մոտ կորնգանի ցանքի ձևը: Հետադոտված շրջաններում, գուցե և ամբողջ Հայաստանում, դժվար թե շարքացան ցանքերի հանդիպեք, մինչդեռ ապացուցված է շարքացան ցանքերի առավելությունը:

Լավ չի ուսումնասիրվել ծածկոցի խնդիրը: Մի շարք հետադոտողներ, վորոնց թվում նաև փորձնական կայաններ կողմնակից են կորնգանի ցանքն անպայման մաքուր, առանց ծածկոցի կատարելուն, յիննելով հողի ջրային ու սնման ուժի միջ, լույսի խախտելուց և այլն:

Այսպես որինակ՝ Կ. Па́йпер-ն ասում է. «Յեվրոպայում սովորաբար կորնգանը ցանվում է առանց ծածկոցի» (5):

Դ. Вернер-ը նշում է. «Կորնգանը ցանվում է ծածկոցով, բայց ավելի լավ է առանց ծածկոցի, համենայն դեպս գնահատելի յե կորնգանի միքանի տարվա ապահով բերքը, քան ծածկոց հանդիսացող ցորենից ստացված բերքը» (17):

Вакар-ը, (19) յիննելով մի շարք փորձնական կայանների տվյալների ամփոփումներից, վորտեղ առանց ծածկոցի ցանքի դեպքում կորնգանի յերեք տարվա բերքը 13,7 ցենտներով ավելի է ծածկոցով ցանքից, առաջարկում է կորնգանը ցանել առանց ծածկոցի:

Պոլտավայի փորձնական կայանը գրում է. «Կորնգանի յերեք տարվա միջին բերքը մեկ հեկտարին ծածկոցի դեպքում 52,25 ցենտներ է, մինչդեռ առանց ծածկոցի՝ 63,23 ց: Հետևապես յերեք տարվա ընթացքում բերքն ավելանում է 11,07 ցենտ.» վորից յիննելով Պոլտավայի փորձնական կայանն առաջարկում է ցանքը կատարել առանց ծածկոցի:

Նման կարծիքներ կարելի չէ մեջ բերել բազմաթիվ փորձնական կայաններից: Չեմ խոսում այն հետադոտողների մասին, վորոնք լուրջամբ են անցնում այս կարևոր խնդրի կողքով:

Մեր պայմաններում այս խնդիրը լուծելիս անհրաժեշտ է հետևյալը նկատի ունենալ.

1. Մեր դաշտերը շատ ուժեղ վարակված են մոլախոտերով: Առանց ծածկոցի ցանքի դեպքում այդ մոլախոտերն այնքան ուժեղ են զարգանում, վոր նույնիսկ խեղդում են կորնգանին: Այստեղ կարևոր է ծածկոցը, տվյալ դեպքում ցորենը, վորպեսզի կարողանա խեղդել, թուլացնել մոլախոտերին:

2. Մեր դաշտերում, հատկապես լեռնային շրջաններում, ծածկոցի պայմաններում չի առաջանում հողի կեղև, իսկ առանց ծածկոցի դեպքում ստեղծվում է կեղև, վորից շատ են տուժում կորնգանի մատղաշ նուրբ ծիլերը:

3. Չի կարելի հավասարման նշան դնել առանց ծածկոցի դեպքում կորնգանից ստացած 10—12 ցենտներ չոր խոտի և ծած-

կոցի դեպքում ցորենից ստացած 10—12 ց, իսկ շատ դեպքերում ել ավելի հատիկի միջև—չեմ խոսում դարմանի մասին:

4. Կորնզանի ցանքերն առանց ծածկոցի կատարելու դեպքում նշանակում է՝ մենք լեւնային շրջաններում ցորենի տարածութունը կրճատում ենք 12 5% -ով, վորը, ինչպես տեսնում ենք, բավական կարևոր խնդիր է:

Ահա այս բոլորից յեկնելով տեսնում ենք, վոր մեր պայմաններում քաղաքական խոշոր սխալ գործած կլինենք, յեթե առաջարկելու լինենք ցանքի առանց ծածկոցի ձևը, քանի վոր դրանով կրճատած կլինենք հացահատիկների ցանքի տարածութունը 12,5% -ով: Ազդողական տեսակետից ել ցանքի առանց ծածկոցի ձևը չի դիմանում քննադատության, քանի վոր այս դեպքում ուժեղ դարգանում են մոլախոտերը, առաջանում է հողի կեղև, կորնզանները խեղդվում են մոլախոտերից, շատ են սուժում հողի կեղևից, վորի հետևանքով ցածր բերք է ստացվում:

Բավական մեծ տարածայնութուններ կան թե գրականության և թե պրակտիկ ընկերների մոտ ցանքի խտության նկատմամբ. այսպես որինակ՝ Գ. Вернер-ը (17) թեորեաթիկական հաշվառումից յեկնելով առաջարկում է շաղացանի դեպքում հեկտարին ցանել 180—240 կգ, իսկ շաղքացանի դեպքում՝ 150—180 կգ սեր:

Վ. Пайпер-ը (5) շաղքացանի դեպքում առաջարկում է 135—168 կգ, իսկ շաղացանի դեպքում, անհամեմատ ավելի շատ. Клигген-ը (18) չոր հողում առաջարկում է ցանել 72—86 կգ, խոնավ հողերում՝ 172—200 կգ: Вакар-ը (19) արևմտյան Սիբիրի չոր կլիմայական պայմաններում առաջարկում է ցանել 56,4 կգ, Դ. М. Прянишников-ը (20) յուր «Մասնավոր յերկրագործութուն» դասագրքի 8-րդ հրատարակութունում առաջարկում է շաղքացանի դեպքում ցանել 75 կգ, շաղացանի դեպքում՝ 135 կգ: 9-րդ հրատարակության սեղ Դ. М. Прянишников-ը և Якушкин-ը (21) գրում են. «Մոտ անցյալում հանձնարարվում եր կորնզանի խտությունը մեկ հեկտարին 150—180 կգ, իսկ վերջին տարիների փորձերը լրիվ հնարավորութուն են տալիս կորնզանի ցանքի խտությունն իջեցնել 60—70 կգ, բարձր ազդեցությանի դեպքում կարելի յե վերցնել նույնիսկ 50 կգ»:

Ահա այսպիսի խոշոր տարածայնութուններ կան թե արտասահմանյան և թե ուսական գրականության մեջ:

Սերմի քանակը կախված է ցանքի նպատակից ու տեղից: Յեթե ցանքը կատարվում է սերմաբուծական նպատակների հա-

մար, վորը պահանջում է 50—60 սմ միջշաղքային տարածութուն, ապա այս դեպքում բավական է 50—60 կիրգրամ սերմ: Իսկ յեթե ցանքը կատարվում է խոտ ստանալու նպատակով, այս դեպքում սերմի քանակի իջեցումն ունի վորոշ սահման, վորից հետո պակասեցնելը բացասական է ազդում ստացած խոտի վորակի վրա (ցանքը նոսր լինելու պատճառով ցողունները կուպիտ են լինում), ուստի ունի չի ոգտագործվում հողային տարածութունը, հետևապես բերքն էլ համեմատորեն պակաս է լինում:

Մեր պայմաններում հանձնարարվում է ցանել 1,0—1,2 ց ենտներ, վորպիսի քանակն ըստ իս բավական նորմալ է:

Ինչ խոսք, վոր անջրդի, չոր հողերում ավելի պակաս սերմի ցանել քան խոնավ, ուժեղ և ջրովի հողերում:

Հետազոտված բոլոր շրջաններում կորնզանը ցանվում է նույն խորությամբ, ինչ ծածկոց հանդիսացող ցորենը կամ հաճառը: Յայլին, Կյորին, Գյուլստանը, Բոնակոթը և այլն չփոցված դաշտում, հետևապես խորտ ու բորտ մակերես ունեցող դաշտում շաղ են տալիս ցորենը, կորնզանը կամ հակառակը՝ կորնզանը և ցորենը, ու միանգամից փոցխում, վորի հետևանքով կորնզանի սերմերն անհավասար խորության վրա յեն ընկնում և, համարյա թե, նույն խորությամբ, ինչ ցորենի սերմերը, այսինքն՝ 5—6 սմ: Մինչդեռ հայտնի յե, վոր կորնզանի մատղաջ ծիլերն ի վիճակի չեն հաղթահարելու 5—6 սմ վարելաչերտը, և շատ հաճախ ցանքն ստացվում է նոսր, վորովհետև սերմի հիմնական մասը չի ծլում (Բոնակոթի «Գիշերավոր» հողամաս): Կորնզանի սերմերը մանր են և անհրաժեշտ է դրանք ցանել 2—3 սմ խորությամբ, վորից ավելի խոր ցանքի դեպքում սերմերի հիմնական մասը չի կանաչում:

Համարյա թե բոլոր շրջաններումն էլ վատ է դրված կորնզանի խնամքի գործը: Խնամքի գործում ջրելու խնդիրը մինչև հիմա չի կանոնավորվել. ջրում են անընդհատ, սկսած գարնանից մինչև ուշ աշուն: Միսավանում ուշ աշունը ջրելու հետևանքով ցրտահարվեց կորնզանի մի ամբողջ մասով մոտ 6 հեկտար տարածությամբ:

Կորնզանի դաշտը քաղհանելու սովորութունն չկա, ինչքան էլ նա մոլախոտերով վարակված լինի: Բացակայում է կորնզանի հին գաշտերի փոցխումը:

Միքանի խոսք էլ կորնզանի խոտհունձի ժամկետների մասին: Առանց բացառության, հետազոտված բոլոր շրջաններում էլ,

դեպքեր 1934—35 թ. թ. հանդիպել ենք Սուխոյֆանտանում, Չուլաքարում, Ազադեկում, Դարաբասում և այլն, վորտեղ չնայած ցանքն սկսվել եր ապրիլի առաջին կեսերին, մինչդեռ կորնզանը ցանվել եր մայիսի վերջին կամ ավելի ուշ:

Չուլաքարում ապրիլի 16-ին ցանած կորնզանը հուլիսի 17-ին ծաղկել եր և հնարավոր եր հնձել, մինչդեռ նույն հողամասում մայիսի 27-ին ցանված կորնզանը նույն ժամկետում հազիվ 2-րդ սերունդն եր սովել: Այդ տարբերությունը նկատվում ե վոչ միայն ցանքի առաջին տնրին, այլ ցանքի 2-րդ տարվա ընթացքում:

Չուլաքարի նույն դաշտերը ցանքի 2-րդ տարում, այսինքն՝ 1936 թ. մեկ հեկտարից հետևյալ բերքը սովին.

Ապրիլի 16-ին ցանածը սովեց 86 ցենտներ,  
մայիսի 27-ին           »           »           69           »

Ուրեմն գարնանային ուշ ցանքը զրկում ե տնտեսությունը առաջին տարվա բերքից, իսկ յերկրորդ տարվա բերքը պակասեցնում ե 17 ցենտներով:

Միքանի խոսք ել աշնանացանների մասին. — կորնզանի մատուղալ և չկազմակերպված ծիլերը ձմեռվա սառնամանիքից շուտ են վնասվում: Այս հանգամանքն անտես առնելով՝ Սիսյանի մի շարք գյուղեր 1935 թ. կազմակերպում են կորնզանի աշնանացանքը՝ Ցանքը կատարվել ե սեպտեմբերի վերջին, մի մասն ել հոկտեմբերի առաջին կեսերին: Ցանքերը բոլոր գյուղերումն ել (Բոնակրթ, Շաղաթ, Սիսավան) ձմեռն ամբողջությամբ ցրտահարվել են. դրանից յեղբակացնել, վոր կորնզանն աշնանը չի կարելի ցանել, կլինի սխալ:

Կորնզանն աշնանը կարելի յե ցանել, սակայն դա պետք ե կազմակերպել ոգոստոսին, վորպեսզի մինչև ցրտերի վրա հասնելը ծիլերն այնքան դարգացած և ուժեղացած լինեն, վոր կարողանան դիմանալ ձմռանը:

Կորնզանի ղոնդուրմա ցանքերը կարող են մեծ արդյունք տալ թեք լանջերի թեթև ավազային հողերում: Թե աշնանացանի և թե ղոնդուրմայի խնդիրներն անհրաժեշտ ե լուսաբանել կոլտնտեսություններում կազմակերպված խրճիթ-լաբորատորիաների միջոցով:

Վատ ե դրված մեզ մոտ կորնզանի ցանքի ձևը: Հետազոտված շրջաններում, գուցե և ամբողջ Հայաստանում, դժվար թե շարքացան ցանքերի հանդիպեք, մինչդեռ ապացուցված ե շարքացան ցանքերի առավելությունը:

Լավ չի ուսումնասիրվել ծածկոցի խնդիրը: Մի շարք հետազոտողներ, վորոնց թվում նաև փորձնական կայաններ կողմնակից են կորնզանի ցանքն անպայման մաքուր, առանց ծածկոցի կատարելուն, յեղնելով հողի շրային ու սնման ռեժիմից, լույսի խախտելուց և այլն:

Այսպես որինակ՝ Վ. Փայրեր-ն ասում ե. «Յեվրոպայում սովորաբար կորնզանը ցանվում ե առանց ծածկոցի» (5):

Դ. Երներ-ը նշում ե. «Կորնզանը ցանվում ե ծածկոցով, բայց ավելի լավ ե առանց ծածկոցի, համենայն դեպս դնահատելի յե կորնզանի միքանի տարվա ապահով բերքը, քան ծածկոց հանդիսացող ցորենից սաացված բերքը» (17):

Յակար-ը, (19) յեղնելով մի շարք փորձնական կայանների սովյալների ամփոփումներից, վորտեղ առանց ծածկոցի ցանքի դեպքում կորնզանի յերեք տարվա բերքը 13,7 ցենտներով ավելի ե ծածկոցով ցանքից, առաջարկում ե կորնզանը ցանել առանց ծածկոցի:

Պոլտավայի փորձնական կայանը գրում ե. «Կորնզանի յերեք տարվա միջին բերքը մեկ հեկտարին ծածկոցի դեպքում 52,25 ցենտներ ե, մինչդեռ առանց ծածկոցի՝ 63,23 ց: Հետևապես յերեք տարվա ընթացքում բերքն ավելանում ե 11,07 ցենտ», վորից յեղնելով Պոլտավայի փորձնական կայանն առաջարկում ե ցանքը կատարել առանց ծածկոցի:

Նման կարծիքներ կարելի յե մեջ բերել բազմաթիվ փորձնական կայաններից: Չեմ խոսում այն հետազոտողների մասին, վորոնք լուծթյամբ են անցնում այս կարևոր խնդրի կողքով:

Մեր պայմաններում այս խնդիրը լուծելիս անհրաժեշտ ե հետևյալը նկատի ունենալ.

1. Մեր դաշտերը շատ ուժեղ վարակված են մոլախոտերով: Առանց ծածկոցի ցանքի դեպքում այդ մոլախոտերն այնքան ուժեղ են զարգանում, վոր նույնիսկ խեղդում են կորնզանին: Այստեղ կարևոր ե ծածկոցը, սվյալ դեպքում ցորենը, վորպեսզի կարողանա խեղդել, թուլացնել մոլախոտերին:

2. Մեր դաշտերում, հատկապես լեռնային շրջաններում, ծածկոցի պայմաններում չի առաջանում հողի կեղև, իսկ առանց ծածկոցի դեպքում ստեղծվում ե կեղև, վորից շատ են տուժում կորնզանի մատղաշ նուրբ ծիլերը:

3. Չի կարելի հավասարման նշան դնել առանց ծածկոցի դեպքում կորնզանից ստացած 10—12 ցենտներ չոր խոտի և ծած-

կոցի դեպքում ցորենից ստացած 10—12 ց, իսկ շատ դեպքերում ել ավելի հատիկի միջև—չեմ խոսուս դարձանի մասին:

4. Կորնգանի ցանքերն առանց ծածկոցի կատարելու դեպքում նշանակում է՝ մենք լեւնային շրջաններում ցորենի տարածութունը կրճատում ենք 12 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ով, վորը, ինչպես տեսնում ենք, բավական կարևոր խնդիր է:

Ահա այս բոլորից յեկնելով տեսնում ենք, վոր մեր պայմաններում քաղաքական խոշոր սխալ գործած կլինենք, յեթե առաջարկելու լինենք ցանքի առանց՝ ծածկոցի ձևը, քանի վոր դրանով կրճատած կլինենք հացահատիկների ցանքի տարածութունը 12,5<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Ագրոնոմիական տեսակետից ել ցանքի առանց ծածկոցի ձևը չի դիմանում քննադատության, քանի վոր այս դեպքում ուժեղ դարգանում են մոլախոտերը, առաջանում է հողի կեղև, կորնգանները խեղդվում են մոլախոտերից, շատ են տուժում հողի կեղևից, վորի հետևանքով ցածր բերք է ստացվում:

Բավական մեծ տարածայնութուններ կան թե գրականության և թե պրակտիկ ընկերների մոտ ցանքի խտության նկատմամբ. այսպես որինակ՝ Գ. Вернер-ը (17) թեորետիկական հաշվառումից յեկնելով առաջարկում է շաղացանի դեպքում հեկտարին ցանել 18) — 240 կգ, իսկ շարքացանի դեպքում՝ 150—180 կգ սերի:

Վ. Пайпер-ը (5) շարքացանի դեպքում առաջարկում է 135 — 168 կգ, իսկ շաղացանի դեպքում, անհամեմատ ավելի շատ. Клигген-ը (18) չոր հողում առաջարկում է ցանել 72—86 կգ, խոնավ հողերում՝ 172—200 կգ: Вакар-ը (19) արևմտյան Սիրի-րի չոր կլիմայական պայմաններում առաջարկում է ցանել 56,4 կգ, Д. М. Прянишников-ը (20) յուր «Մասնավոր յերկրագործություն» դասագրքի 8-րդ հրատարակությունում առաջարկում է շարքացանի դեպքում ցանել 75 կգ, շաղացանի դեպքում՝ 135 կգ: 9-րդ հրատարակության սեղ Д. М. Прянишников-ը և Якушкин-ը (21) գրում են. «Մոտ անցյալում հանձնարարվում էր կորնգանի խտությունը մեկ հեկտարին 150—180 կգ, իսկ վերջին տարիների փորձերը լրիվ հնարավորություն են տալիս կորնգանի ցանքի խտությունն իջեցնել 60—70 կգ, բարձր ազդեցությանի վայրի դեպքում կարելի յե վերցնել նույնիսկ 50 կգ»:

Ահա այսպիսի խոշոր տարածայնություններ կան թե արտասահմանյան և թե ուսական գրականության մեջ:

Սերմի քանակը կախված է ցանքի նպատակից ու տեղից: Յեթե ցանքը կատարվում է սերմաբուծական նպատակների հա-

մար, վորը պահանջում է 50—60 սմ միջշարքային տարածութուն, ապա այս դեպքում բավական է 50—60 կիրգրամ սերմ: Իսկ յեթե ցանքը կատարվում է խոտ ստանալու նպատակով, այս դեպքում սերմի քանակի իջեցումն ունի վորոշ սահման, վորից հետո պակասեցնելը բացասական է ազդում ստացած խոտի վորակի վրա (ցանքը նոսր լինելու պատճառով ցորենները կուլիտ են լինում), ուսցիոնալ չի ոգտագործվում հողային տարածությունը, հետևապես բերքն ել համեմատորեն պակաս է լինում:

Մեր պայմաններում հանձնարարվում է ցանել 1,0—1,2 ց ցենտներ, վորպիսի քանակն ըստ իս բավական նորմալ է:

Ինչ խոսք, վոր անջրդի, չոր հողերում ավելի պակաս պիտի ցանել քան խոնավ, ուժեղ և ջրովի հողերում:

Հետազոտված բոլոր շրջաններում կորնգանը ցանվում է նույն խորությամբ, ինչ ծածկոց հանդիսացող ցորենը կամ հաճարը: Յայջին, Կյորին, Գյուլատանը, Բոնակոթը և այլն չփոցիված դաշտում, հետևապես խորտ ու բորտ մակերես ունեցող դաշտում շաղ են տալիս ցորենը, կորնգանը կամ հակառակը՝ կորնգանը և ցորենը, ու միանգամից փոցխում, վորի հետևանքով կորնգանի սերմերն անհավասար խորության վրա յեն ընկնում և, համարյա թե, նույն խորությամբ, ինչ ցորենի սերմերը, այսինքն՝ 5—6 սմ: Մինչդեռ հայտնի յե, վոր կորնգանի մատղաշ ծիվերն ի վիճակի չեն հաղթահարելու 5—6 սմ վարելաչերտը, և շատ հաճախ ցանքն ստացվում է նոսր, վորովհետև սերմի հիմնական մասը չի ծլում (Բոնակոթի «Գիշերավոր» հողամաս): Կորնգանի սերմերը մանր են և անհրաժեշտ է դրանք ցանել 2—3 սմ խորությամբ, վորից ավելի խոր ցանքի դեպքում սերմերի հիմնական մասը չի կանաչում:

Համարյա թե բոլոր շրջաններումն ել վատ է զբված կորնգանի խնամքի գործը: Խնամքի գործում ջրելու խնդիրը մինչև հիմա չի կանոնավորվել. ջրում են անընդհատ, սկսած գարնանից մինչև ուշ աշուն: Միսավանում ուշ աշունը ջրելու հետեվանքով ցրտահարվեց կորնգանի մի ամբողջ մասով մոտ 6 հեկտար տարածությամբ:

Կորնգանի դաշտը քաղհանելու սովորությունն չկա, ինչքան ել նա մոլախոտերով վարակված լինի: Բացակայում է կորնգանի հին դաշտերի փոցխումը:

Միքանի խոսք ել կորնգանի խտանունձի ժամկետների մասին: Առանց բացատրության, հետազոտված բոլոր շրջաններում ել,



նույնը նաև մյուս շրջաններում, կորնգանը խոտի համար հնձում են լրիվ ծաղկած վիճակում. դեռ ավելին՝ վորոշ տեղերում սերմակալման աստիճանում: Այդ պատճառով ել ստացված պրոդուկցիան—խոտը վերին աստիճանի կոպիտ է: Այդ հետևանք է նրա վոր բույսը, տվյալ դեպքում կորնգանը, ծաղկման գործողություններ վրա ծախսում է մեծ քանակությամբ լուծվող սպիտակուցներ, ածխաջրեր և ճարպեր մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ծաղկելու մոմենտից սկսած բույսի ցողունները փայտանում են, թաղանթանյութը շատանում է և, վոր ամենակարևորն է, ներքևի տերևները թափվում են ու ալիստով, կերի միավորի տեսակետից, ավելի քիչ բերք են ստանում:

Անհրաժեշտ է կորնգանը հնձել դեռևս կոկոն վիճակում, վորով կստանանք վորակով բարձր կեր:

#### IV. ՏԵՂԱԿԱՆ ԿՈՐՆԳԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍՍԻՎՆԵՐԸ ՀԻՍՆ-ՈՒՄ

Ագրոտեխնիկական հիմնական խնդիրները պարզելուց հետո այժմ տեսնենք, թե ինչպես է դրված մեզ մոտ Խորհրդային Հայաստանում կորնգանի ասորտիմենտի խնդիրը: Մշակման պատմությունից հայտնի յեղավ մեզ, վոր կորնգանը Հայաստանում բավական հին կուլտուրա յե հաշվվում, հետևապես գոյություն է ունեցել այն պոպուլացիան, վորը մշակվելով դարեր շարունակ՝ մեր բնապատմական սպեցիֆիկ պայմաններում անցնելով գոյության կովի բովով, տալ երոյին սելեկցիայի բովով, միշտ ընտըրվել է ավելի լավը և, վերջապես, ձեռք է բերել մի շարք արժեքավոր հատկանիշներ, վորոնց մասին շատ կարճ խոսեցինք վերևում և շատ մանրամասն կանգ կառնենք վերջում:

Այդ պոպուլացիաներն իրենց գոյությունը պահպանել են և վտանգի չեն յենթարկվել մինչև 1926 թ. և ահա 1926 թ. սկըսվում է կորնգանի տարածությունների մասնակի ընդարձակումը:

Յերկրագործության պատմության մեջ սորտի ներմուծման խնդիրը միշտ ել կատարվում է. դրա մասին չե խոսքը, այլ ներմուծված ագրոբուսաբանական տեսակետից անձանոթ պոպուլացիայի ճիշտ ոգտագործելու խնդիրն է այստեղ կարևոր:

Ներմուծված կորնգանի սերմը բաշխվել է ըստ շրջանների, առանց ագրոնոմիորեն ճիշտ մտածելու, առանց նկատի ունենա-

լու, վոր կորնգանի փոշոտումը հիմնականում կատարվւմ է մեղուների միջոցով, վոր բավական է շատ կարճ ժամանակ, վորպեսզի ներմուծված կորնգանի բացասական հատկանիշները (ցածր բերքատվությունը մեր պայմաններում) մացնել մեզ մոտ մշակվող տեղական պոպուլացիայի մեջ և դրանով փչացնել ամբողջ գործը:

Յեվ այդպես ել կատարվեց. 1926—1935 թ. թ. անընդհատ, յեղնելով տնտեսության աճող պահանջից՝ ներմուծված սերմը բաշխվել է ըստ շրջանների. միայն սկսած 1935 թ. խնդիր է դըրվում մեկուսացնել տեղական կուլտուրական կորնգանները, վորպես թանգարժեք պոպուլացիա:

Մեր առաջ խնդիր եր դրված պարզել, թե արդյոք վորոնք են այն ոջախները, վորտեղ պահպանվել են տեղական կուլտուրական կորնգանի մաքուր ցանքերը:

1932, 34, 35 և 36 թ. թ. կազմակերպված մի շարք հետազոտությունները պարզեցին, վոր տեղական կուլտուրական կորնգանների ցանքերը պահպանվել են կորնգանացան հին շրջաններում՝ Սիսյան, Աղիզբեկով, Միկոյան, Մարտունի, մասամբ Գորիս: Հետազոտության ընթացքում պարզեցինք մի հանգամանք ևս, վոր այդ հին արժեքավոր կուլտուրայի պահպանման խընդրում խոշոր է յեղել բանիմաց կուլտնտեսականների դերը:

1930 թ. Միկոյանի շրջանն է ուղարկվում մեծ քանակությամբ ուկրաինական կորնգան: Սա ցանվում է Մալիշկայում, Խաչիկում, Աղաղեկում: Յանքի հենց առաջին տարվա ընթացքում կուլտնտեսականների հմուտ աչքը նկատում է նրա վատ լիները, և անմիջապես վարում են ցանքը: 1932 թ. Յեղնովկայի բազայից Մարտունու շրջանի մի շարք գյուղերն է (Գյոլ, Ադիաման և այլն) ուղարկվում ուկրաինական կորնգանը, վորը նույնպես կուլտնտեսականների կողմից անմիջապես վարվում է: Գորիսի շրջանում վատ է կազմակերպված այդ գործը: 1926 թ. նախկին վարկային ընկերությունը մեծ քանակությամբ ուկրաինական կորնգան է բերում շրջան ու բաշխում գյուղերին: Վերջիններիս հիմնական մասը, հասկանալով նրա վատ լիները (Յայլի, Շնահեր, Խոտ), անմիջապես վարում են կորնգանի ցանքերը և նրանից հետո սերմը գնում են Սիսյանի շրջանից: Իսկ Աղիզովի շրջանը և Կյորին մինչև հիմա ել, անկախ կուլտնտեսականների բողոքից, վոր վատ բերք է տալիս, բազմացնում են այդ պոպուլացիան: Այսպիսով, մինչև հիմա վոշ միայն չի կազմակերպվեց

տեղական կուլտուրական կորնգանների պահպանման խնդիրը, այլև մի շարք անգամ, ինչպես տեսանք, խոշոր վտանգի յե մատնը վել տեղական կուլտուրական կորնգանը:

Հետազոտությունների ընթացքում տեղական կորնգանի շատ քիչ տարածություններ ենք հայտնաբերել Սուխոֆանտանում, Ն. Բայազետի շրջանի Ղշլաղում, Բասարգեչարի շրջանի Թուսքուլի և Ակունք, Թալինի շրջանի Այնալու, Ռինդ, Աշնակ և այլ գյուղերում, Աբարանում և այլն:

Տեղական կորնգանների հիմնական մասսիֆները հետևյալներն են.

ԱՂՅՈՒՍԱԿ № 6

№ ը/կ	ՇՐՋԱՆՆԵՐ	1934 թ.			1935 թ.			1936 թ.		
		Ցանքի ընդհանուր տարածութ. հեկտ.	կորնգանի տարածութ.	%	Ցանքի ընդհանուր տարածութ. հեկտ.	կորնգանի տարածութ.	%	Ցանքի ընդհանուր տարածութ. հեկտ.	կորնգանի տարածութ.	%
1	Սիսյան . .	16638	125,56	0,75	16991	137,8	0,80	17591	337,1	1,01
2	Միկոյան .	11350	14,6	—	11418	22,0	—	11911	27,7	—
3	Ազիզբեկով .	11550	27,0	0,23	10159	81,4	0,7	10348	57,6	0,5
4	Մարտունի	11994	132,58	1,1	15402	127,9	0,8	14007	350,0	—
5	Գորիս . . .	14570	28,0	0,1	14220	61,7	0,4	15158	69,3	0,45

Ընդամենը 5 շրջ. | 66102 | 387,5 | 0,5 | 68210 | 430,9 | 0,6 | 69428 | 952,1 | 1,37

Գորիսի շրջանի Կյորի, Մաղանջուղ, Ալիզուլիշեն գյուղերում կորնգանի ցանքերը կազմում են խառնուրդ, վորն արդյունք է, ինչպես վերն ասացինք, ուկրաինական կորնգանի և տեղական կորնգանների խաշաձևման: Հետաքրքրական է, վոր սերունդների մոտ ուկրաինական կորնգանի թավոտությունը, բույսի բարձրությունը, ունդերի ձևը, գույնը, զինվածությունն ամբողջությամբ անցել են:

Ստացված նյութը, յուր արտադրողականության տեսակետից (բերքատվությունը, տձման տեմպը: վորակը և այլն), անհամեմատ ցածր է տեղականից:

Շրջաններում, ինչպես աղյուսակից տեսանք, կորնգանը հավասար չի տարածված. հիմնական մասսիֆներ պետք է հաշվել Սիսյանի շրջանում՝ Դարաբասի, Բոնակոթի և Ախլաթյանի ձորերի

ու Բազարչայի յերկու ափերի կորնգանները: Միկոյանի շրջանում՝ Մալիշկայի, Պաշիկի, Գնիշիկի մասսիֆները, Ազիզբեկովում՝ Ազիզբեկովի, Մարտիրոսի, Բարձրունիի և Ազադեկի մասսիֆները, Մարտունու շրջանում՝ Զուլաքարի, Գյոզալգարայի և Վ. Ղարանլուղի մասսիֆները, իսկ Գորիսի շրջանում տեղական կորնգանները պահպանվել են Փայջիում, Շինուհերում, Խոտում, Յերիցաթումբում, Քարաշենում և այլն:

Յեվ ընդհակառակը, 2-րդ հարի աճն սկսվում է մթնոլորտային տեղումներն սկսվելուց հետո: Յերաշտադիմացկունություն խնդրում խոշոր և արմատային սիստեմի, թփակալման հանդույցի խոր թափանցելու և 2-րդային արմատների դերը հողի ներքին շերտերի խոնավությունն ոգտագործելու խնդրում:

Պետք է նշել, վոր մեր պրակտիկ ընկերներն այն կարծիքի յեն, վոր կորնզանը համեմատաբար թույլ յերաշտադիմացկուն է, վորի հետևանքով շատ հաճախ կորնզանի ցանքի հիմնական մասը ջրովի պայմաններում են մշակում: Ծիծաղելի յե նույնիսկ, յերբ կոլտնտեսություններում հանդիպում ենք անջրդի կամ կիսաջրովի կարտոֆիլի ցանքերի (Սայրալու, Մելիքար), իսկ անջրդի կորնզանը մեծ դժվարություններ են ցանում: Այս տեսակետից վերին աստիճանի հետաքրքիր է Նորավանի կոլտնտեսության փորձը: Նորավանում, մթնոլորտային տեղումները չնայած 300-ից չեն անցնում, բայց բավական մեծ տարածություն (23 հեկտար) կորնզան են մշակում ու հեկտարից միջինը 52 ցենտներ չոր խոտ են ստանում: Յերաշտադիմացկուն սորտեր ստեղծելու խնդրում անհրաժեշտ է ոգտագործել մի կողմից տեղական կուլտուրական կորնզանների ամենաքսերոֆիտ ձևերը, ինչպիսին են Դարաբասի և Դարալադյաղի ձևերը, մյուս կողմից՝ կորնզանի վայրի տեսակները:

Վայրի կորնզանների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն կտա հայտնաբերել քսերոֆիտ ձևեր, վորոնք կոգտագործվեն սելեկցիոն նպատակների համար: Նախնական հարգուման կարգով կարելի յե նշել *On. hajactanii* gross, *On. sasnovscii* gross, *On. altissime* gross և այլն, վորոնք շատ են տարածված Ադիգեբկովի, Միկոյանի և Սիսլանի չոր, հարավային լանջերում:

**ՅԵՐԿԱՐԱԿԵՅՈՒԹՅՈՒՆԸ**

Գտնում են, վոր կորնզանը շատ յերկար է մնում միևնույն տեղում՝ «Լավ հողերում» 16—20 տարի, վատ հողերում՝ 8—10 տարի» (Վ. Паппер (5)). «Առանձին թփեր կարող են մնալ մինչև 100 տարի» (Лаузон (Lawson)), «Աղքատ հողերում կորնզանը, ըստ

յեղած տվյալների, մնում է 15—22 տարի, լավ հողերում ձեռընտու յե պահել 4—7 տարի» (Г. Вернер (17)):

Նման կարծիքներ կան պրակտիկության մեջ, նույն կարծիքին են մեղ մոտ աշխատող վորոշ ընկերներ: Յեթե հարցնելու լինենք, թե կորնզանը քանի տարի կարող է գնալ միևնույն տեղում, պատասխանը կլինի 7—10-ը, գուցե և ավելի: Այդ հետևանք է նրան, վոր տվյալ դաշտը սերմի համար թողնելով, սերմահավաքն էլ բավական ուշ կազմակերպելով՝ սերմի մեծ մասը թափվում է և դաշտը շարունակ ամեն տարի թարմանում է և վոչնչացված բույսերի փոխարեն աճում են նոր թափված սերմերը:

Հետադոտություն ընթացքում յես աշխատեցի գտնել այնպիսի դաշտեր, վորոնք լինեն միևնույն հողակլիմայական պայմաններում, բայց յերբք սերմի համար թողնված չլինեն, միևնույն ժամանակ ցանված լինեն տարբեր տարիներում:

Դիտողություններ կազմակերպելով մի շարք կոլտնտեսություններում՝ Սուխոֆանտան, Գյոպալդարա, Չոլաքար, Ակունք, Միսավան, Բոնակոթ և այլն, կարողացանք գալ այն յեզրակացություն, վոր ցանքի խտությունը—այսինքն 1 քառ. մետրում բույսերի թիվը փոփոխվում է (տես աղյուսակ № 29):

**ԱՂՅՈՒՍԱԿ № 29**

1 քառ. մետրում բույսերի միջին քանակն ըստ տարիների

ՏԱՐԻՆԵՐԸ	1 տ.	2 տ.	3 տ.	4 տ.	5 տ.
Կորնզանի թփերի քանակը . . . . .	47 թ.	52 թ.	57 թ.	41 թ.	22 թ.

Աղյուսակից պիտի գալ այն յեզրակացություն, վոր կորնզանի մաքսիմում խտությունը լինում է ցանքի 3-րդ տարին, ինչ վերաբերում է այն մասնակի աճին, վորը կատարվում է 2-րդ և 3-րդ տարիներին, դա պիտի վերաբերել քարացած սերմերին, վորոնք թիթեռնածաղկավորների մոտ, տվյալ դեպքում կորնզանի մոտ, հաճախ են պատահում, իսկ մյուս կողմից դա պիտի վերաբերել առանձին վաղահաս թփերի սերմերի թափվելուն:

Աղյուսակը ցույց է տալիս նաև այն, վոր ցանքի 4-րդ տարվանից դաշտն սկսում է աստիճանաբար նոսրանալ և 5-րդ տարում 50-ից ավելի %-ով նոսրանում է:

Յեթե խնդրին մոտենալու լինենք մոլախոտերի դարգացման տեսակետից, կստանանք հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 30):

№ ըստ կարգի	ՄՈՂԱԽՈՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Բիւրյութիւնը տիպը	Կորնզանի ցանքի վոր յերբորդ տարում				
			1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի
			1	Achillea millefolium L . . . . .	Բազմամյա		
2	» setacea WK . . . . .	»					×
3	Agropyrum orientale L. R. et. Sch. . . . .				×	×	×
4	Agrostemma githago L . . . . .	միամյա	×	×			
5	Agrostis vulgaris with . . . . .	բազմամյա					×
6	Artemisia austriaca Jacq . . . . .	»	×	×		×	×
7	» persica . . . . .	»				×	×
8	» Absinthium L . . . . .	»					×
9	Arctium Lappa L . . . . .	միամյա	×	×	×	×	×
10	Asperula Aparine MB . . . . .						×
11	Avena fatua L . . . . .	միամյա	×	×			
12	Bromus tectorum L . . . . .	»	×	×	×	×	×
13	» japonicus Thunb . . . . .	»		×	×	×	×
14	Dactylis glomerata L . . . . .	բազմամյա			×	×	×
15	Campanula rapunculoides L . . . . .	»					×
16	Carduus hamulosus Ehrh . . . . .	յերկամյա	×	×			
17	Cynodon Dactylon Pers . . . . .	բազմամյա				×	×
18	Cirsium incanum Fisch . . . . .	»				×	×
19	Cnicus benedictus L . . . . .	»	×	×	×	×	×
20	Cichorium intybus L . . . . .	յերկամյա					×
21	Convolvulus arvensis L . . . . .	բազմամյա				×	×
22	Conringia orientalis (L) Andvz . . . . .	միամյա	×	×			
23	Crambe orientale L . . . . .						×

№ ըստ կարգի	ՄՈՂԱԽՈՏԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Բիւրյութիւնը տիպը	Կորնզանի ցանքի վոր յերբորդ տարում				
			1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի
			24	Equisetum arvense L . . . . .			
25	Falcaria vulgaris Bernh . . . . .	յերկամյա	×	×			
26	Euphorbia virgata W. K. . . . .	բազմամյա					×
27	Geranium collinum Steph . . . . .		×	×			
28	Hypocoum pendulum L . . . . .	միամյա	×	×			
29	Hypericum perforatum L . . . . .	բազմամյա			×	×	×
30	Lathyrus tuberosus L . . . . .	»				×	×
31	Lotus corniculatus L . . . . .	»					×
32	Lepidium Draba L . . . . .	»					×
33	Medicago sativa L . . . . .	»				×	×
34	» lupulina L . . . . .	միամյա	×	×			
35	Melilotus officinalis (L) Desr . . . . .	յերկամյա					×
36	Myagrurn perforatum L . . . . .	»	×	×			
37	Mulgedium tataricum (L) DC . . . . .	բազմամյա				×	×
38	Nasturtium austriacum Crantz . . . . .	»		×			
39	Potentilla reptans L . . . . .	»		×	×		
40	Phleum pratense L . . . . .	»				×	×
41	Plantago saxatilis MB . . . . .	»					×
42	Polygonum fagopyrum L . . . . .	միամյա		×	×		
43	Poterium sanguisorba L . . . . .	բազմամյա			×	×	×
44	Primula macrocalyx Bge . . . . .	»		×	×		
45	Rumex crispus L . . . . .	»		×	×	×	
46	Caucalis daucoides L . . . . .	միամյա		×			
47	Senecio vernalis WK . . . . .	յերկամյա	×	×			

Արևիկացի

ՄՈՒԱԿՈՏԵՐԻ ՏԵՍԱԿԵՐԸ

Գործարանի ցանքի վրա յերոզ տարում	Գործարանի ցանքի վրա յերոզ տարում	Մեղր	Կորնզանի ցանքի վրա յերոզ տարում					Գործարանի ցանքի վրա յերոզ տարում	
			1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի		
48	Silene dichotoma Ehrh. . . . .	յերկամյա	X						
49	Trifolium pratense L. . . . .	բազմամյա				X	X		X
50	» repens L. . . . .	»				X	X		X
51	Tragopogon pratensis . . . . .	յերկամյա	X	X					X
52	» graminifolius DC. . . . .	բազմամյա				X	X		X
53	Vicia persica Boiss. . . . .	»				X	X		X
54	» Grandiflora Scop. . . . .	միամյա	X						X
55	» sativa L. . . . .	»	X						X
56	» villosa Roth . . . . .	»	X	X					X
57	» elegans Guss. . . . .	բազմամյա				X	X		X
58	Veronica multifida L. . . . .	»					X		X
59	Stachys annua L. . . . .	միամյա	X						X
60	Sinapis alba L. . . . .	»	X						X
61	Vicia variabilis Freyn et Sint. . . . .	բազմամյա				X	X		X
62	Sinapis arvensis L. . . . .	միամյա	X						X

Քնդամենը . . . . . 28 21 9 24 38

Աղյուսակից յերևում է, վոր կորնզանի ցանքերի տարբեր տարիներում մուշտոտների քանակը և նրանց բուսական կազմը տարբեր է. այսպես, որինակ՝ ցանքի առաջին տարին միամյա մուշտոտները յեղած մուշտոտների մեջ գերակշռող մասն են կազմում, վորից հետո աստիճանաբար պակասում են և ցանքի 3-րդ տարում մուշտոտների թիվն աննշան է լինում: 4-րդ տարվանից սկսած, այսինքն կորնզանի բույսերի նոսրացման հետ զուգընթաց, մուշտոտների թիվն սկսում է աճել և միամյա մուշտոտների վտխարեն այստեղ սկսում են զարգանալ բազմամյա մուշտոտները:

Ուրեմն կորնզանը հաջող պայքարում է և իսպառ վերացնում միամյա մուշտոտները:

Հետաքրքրական է, վոր այստեղ գրեթե բացակայում են այն մուշտոտները, վորոնց սերմերը դժվար են անջատվում (իրենց նմանութայն հետևանքով՝ կորնզանի սերմից), բացառութայամբ poterium Sanguisorba (L):

Յերկարակեցութայն նշանակութայնը մեծ է նաև ցանքաշրջանառութայն խնդրում: Մեր առաջ խնդիր է դրված պարզել, թե արդյոք հաջորդող կուլտուրայի, այսինքն ցորենի մաքսիմում բերքը կորնզանի վեր յերոզ տարուց հետո յե ստացվում կամ, ավելի ճիշտ, հաջորդող կուլտուրայի բերքատվութայնը բարձրացնելու նպատակով կորնզանի դաշտը վեր յերոզ տարուց հետո վարել: ուրիշ խոսքով կորնզանն այդ տեսակետից քանի տատու վարել: ուրիշ խոսքով կորնզանն (Մարտիրոս, թուսկյուլի) ողմի շարք կուլտուրայի յոններում (Մարտիրոս, թուսկյուլի) ստացործեցինք հետևյալ ցանքերը. Մարտիրոս գյուղի ջրաղացների կողքի հողամասում միևնույն հողակլիմայական պայմաններում կորնզանի մի մասը ցանվել է 1931 թվին, մյուս մասը՝ 1932 թ., իսկ 3-րդը՝ 1933 թ., 1935 թ. բերքահավաքից հետո ուշ աշնանը վարվել են այդ յերեք դաշտերը և տեղը 1936 թ. ցանվել եր գարնանացան ցորեն: Պիտի հիշել վոր այդ դաշտերը յերցանվել եր գարնանացան ցորեն: Պիտի հիշել վոր այդ դաշտերը յերվանքով ցանքերը չեն նորոգվել: Հաշվի առնելով կորնզանին հաջորդող կուլտուրայի (ցորենի) բերքատվութայն վերաբերյալ խնջիլները և այն համեմատելով նույն ցորենի, բայց գարնանից հետո ցանվածի բերքատվութայն հետ՝ ստացվեց հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 31):

ԱՂՅՈՒՍԱԿ № 31

	Կորնզանը վարվել է 3-րդ տարում	Կորնզանի վարվել է 4-րդ տարում	Կորնզանը վարվել է 5-րդ տարում	Նախորդը յեղել է գարնանացան
Գարնանացան ցորենի բերքը . . . . .	17 ցենտ.	15,2 ց.	11,0 ցենտ.	10,2 ցենտ.
Բույսի բարձրութայնը . . . . .	0,9 մետր	0,8 մետր	0,75 մետր	0,7 մետր
Թփակալումը . . . . .	5 հատ	2—3 հատ	1—2 հատ	1—2 հատ.
Մեկ խոր. մետրում մուշտոտների քանակը . . . . .	6	21	35	37

Այդուսակը ցույց է տալիս, վոր ցորենի բերքի մաքսիմու-  
մը ստացվում է այն ժամանակ, յերբ կորնգանը 2 տարի ոգտա-  
գործելուց հետո վարվում է, վոր 5 տարի կորնգանը ոգտագործե-  
լուց հետո ցորենի բերքը գրեթե նույնն է, ինչ գարնանացանից  
հետո ստացված ցորենի բերքը:

Ցորենի բերքի զգալի չափով նվազելը կորնգանի 3-րդ և  
4-րդ տարվանից հետո պետք է բացատրել նաև նրանով, վոր  
ազոտաբաղադրանքները մաքսիմում են երգբիայով են գործում կո-  
րնգանի ցանքի 3-րդ տարում:

Հետաքրքրական է այստեղ դիտել մոլախոտերի քանակը:  
Պարզվում է, վոր ցորենի ցանքի մեջ ամենաքիչ քանակությամբ  
մոլախոտեր լինում են այն ժամանակ, յերբ կորնգանի դաշտը  
վարվում է 2 տարի ոգտագործելուց հետո. մոլախոտերի թիվը  
սկսում է աճել և 5-րդ տարվա կորնգանի տեղում նույնքան մո-  
լախոտեր կան, վորքան դարնանացանից հետո:

### ԻՄՈՒՆԻՏԵՏԸ

Իմուն պոպուլացիաների խնդիրը կորնգանի նկատմամբ  
մինչև հիմա չի լուսաբանված: Այդ խնդրով փորձնական կայան-  
ները նույնիսկ շատ քիչ են զբաղվում, մինչդեռ հայտնի յե, վոր  
կորնգանը շատ է տուժում (նամանավանդ խոնավ տարիներին)  
ալրացողով (*Erysipha communis forma onobrychides*) վորոշ տա-  
րիներ այն աստիճանի, վոր անասունները կորնգանը նույնիսկ  
դժվարությամբ են ուտում: Ալրացողը զցում է կորնգանի սեր-  
մարտադրողականությունը 30—35% -ով: Բազմամյա բույսերից  
յերեքնուկի, առվույտի, տիմոֆեյի խոտի և այլնի իմունիտե-  
տի խնդիրը մշակում են շատ կայաններում: Հիմնականում առ-  
վույտի մոտ տարբեր եկոտիպեր տարբեր աստիճանի իմունիտեա-  
ունեն (*Лубиней*): Այստեղ էլ նույնն է նկատվում. տարբեր պո-  
պուլացիաներ տարբեր աստիճանով են տուժում սնկերից: Մի  
շարք տարիների մեր դիտողությունները, վորոնք կատարվել են  
սնկի բազմացման վրա միանգամայն նպաստավոր (այսինքն խո-  
նավ) պայմաններում, պարզում են, վոր վոչ միայն տարբեր տե-  
սակներ, տարբեր աստիճանի յեն տուժում սնկերից, այլ նույ-  
նիսկ մեր տեղական պոպուլացիաների մոտ տարբեր ձևեր տար-  
բեր չափով են տուժում: Որինակ՝ Դարբասի ձևն աննշան չա-  
փով է տուժում սնկերից, մինչդեռ նույն պայմաններում Սիսյա-

նի սովորական ձևն ավելի շատ է տուժում: Մեր կարծիքով հնա-  
գավոր է ընտրությունների միջոցով առանձնացնել վերոհիշյալ  
ձևերը, վորով կորնգանի իմունիտետության մշակման հիմքը  
գրած կլինենք:

Այս նպատակով կարելի յե լայն չափով ոգտագործել վայրի  
տեսակներից *On. altissima*, *On. hajastanii* և այլն, վորոնք բո-  
լորովին չեն տուժում սնկերից:

### ՄԵՐՄԻ ՉԹԱՓՎԵԼԸ

Կորնգանի մոտ սերմերի չթափվելու խնդիրը բավական լուրջ  
է. ամեն տարի հազարավոր ցենտներ սերմ դաշտում ենք թող-  
նում դրա թափվելու պատճառով: Այժմեական խնդիր է հայտնա-  
բերել տիպ, ուստա կամ ձև, վորի սերմը չթափվի կամ համեմա-  
տաբար քիչ թափվի:

Հայտնի յե, վոր սերմի չթափվելը շատ դեպքում բնութայն  
մեջ հանդիսանում է ուղեղի հատկանիշ. բույսի վայրի դրու-  
թյան դեպքում այդ հատկանիշը թագնված է (*Е. Н. Синская*  
(30): Կուլտուրական կորնգանների, ինչպես և վայրիների մոտ  
հնարավոր է այդ հատկանիշը յերևան բերել: Շատ անգամ կո-  
րնգանների մեջ միևնույն հողային կլիմայական պայմաննե-  
րում, միևնույն դաշտում, նկատվում են առանձին կորնգան-  
բույսեր, վորոնց սերմը բոլորովին չի թափվում կամ համեմատա-  
բար ավելի քիչ է թափվում: Նկատված է, վոր խիտ վողկույզնե-  
րի ձևով դասավորված սերմերն ավելի քիչ են թափվում, քան  
յերկար ու նոսր դասավորված սերմերը:

Լուրջ խնդիր է ուսումնասիրել բույսերի սերմերի և ժա-  
նավորապես կորնգանի սերմի շատ թափվելու պատճառները:

### ԻՆՔՆԱՑԵՐՏԻՂՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի յե, վոր կորնգանը հանդիսանում է տիպիկ խաչա-  
ձև փողոտվող կուլտուրա. նրա ինքնաֆերտիլությունը շատ քիչ  
է ուսումնասիրված:

Գյուղատնտեսական ինստիտուտի հոդամասում կազմակեր-  
պած մեր դիտողությունները (Յերևան) տվին հետևյալ պատկերը  
(տես աղյուսակ № 32):

№	Տեսակ	Աշխարհագրական ծագումը	Ինքնաֆերտիլության % ը 1935-36 թ.թ.	
			Արհեստական ձևով միևնույն վողկույթի սահմաններում փոշին սպիտ վրա գցելով	Առանց արհեստական ձևով փոշին սպիտ վրա գցելու
9797	On. viciaefolia	Խարկովի փորձ. կայան № 586	11,2	4,92
16326	»	Գերմանիա—Վոորտինբեկ	10,7	5,12
16596	»	Շվեյցարիա—Ցիմերվալդ	11,4	5,03
14377	On. arenaria	Վեսելոպադովսկու սելեկց. կայան	9,3	2,7
11682	On. antasiatica	Պարսկաստան—Թեհրան	12,1	6,03
14382	»	Թյուրքիա—Երզրում	14,4	6,32
17394	»	Վրաստան—Ախալքալակ	13,04	6,7
16909	»	Ադրբեջան—սելեկց. կայան	13,9	6,07
12	»	Հայաստան—Դարբաս	17,45	7,8
17	»	Հայաստան—Խաչիկ	16,1	8,1
19	»	Հայաստան—Յայջի	16,72	7,3

Աղյուսակից պիտի գալ այն յեղրակացության, վոր տարբեր աշխարհագրական խմբեր տարբեր ինքնաֆերտիլություն ունեն, վոր On. antasiatica-ի մոտ ընդհանրապես ինքնաֆերտիլությունը բարձր է, քան On. viciaefolia-ի և On. arenaria-ի մոտ:

Հետաքրքրական է այստեղ On. antasiatica-ի ինքնաֆերտիլությունը դիտել ըստ զոնայի, վորի համար մի շարք գյուղերում կազմակերպելով այս աշխատանքը, յեկանք հետևյալ յեղրակացության (տես աղյուսակ № 33):

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ	Ինքնաֆերտիլության տոկոսը	
	Արհեստական ձևով միևնույն վողկույթի սահման. փոշին սպիտ վրա գցելով	Առանց արհեստական ձևով փոշին սպիտ վրա գցելու
1200 մետր	11,3	4,7
1500 »	13,4	6,76
1800 »	18,9	7,1
2100 »	19,7	8,83

Այս հանգամանքը բացատրելը բավականին դժվար է. այստեղ, հավանական է, խոշոր դեր է խաղում արևի ռադիացիան, վորը սակայն պահանջում է խոր ուսումնասիրություն:

VIII. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՂԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Մեծ նշանակություն ունի պարզել լեռնային շրջանների ցանովի կերարույսերի համեմատական բերքատվությունը: Այդ նպատակի համար մի շարք կոլտնտեսություններում, վորտեղ միևնույն սառնայի միատեսակ հողային կլիմայական պայմաններում ցանված էյին ցանովի կերարույսեր, 1935—36 թ. թ. հաշվի առանք նրանց բերքատվությունը, վորից ստացվեց հետևյալ պատկերը. (ավելորդ չի լինի նշել, վոր կորնզանի և առվույտի դաշտերը 3-րդ տարվա ցանքեր էյին) (տես աղյուսակ № 34):

Գյուղը—շրջանը	Բարձրությունը	Ջրովի յե թե անջրդի	Կորնզանի շ քաղը միասին	Առվույտի շ քաղը միասին	Վիկա սովորական	Բնական խոտհարքներ
1. Բոնակոթ—Միսխան . .	1602 մետր	Ջրովի	102 ցենտ.	51 ցենտ.	37 ցենտ.	20 ցենտ.
2. Բաղարջայ—Միսխան . .	2100 »	Անջ. դի	69,2 »	15,0 »	30,1 »	19,0 »
3. Գյուղալիս—Մարտունի 1952 »	»	Ջրովի	87 »	35 »	32,3 »	21,0 »
Միջինը . .			86,06 ց.	35,69 ց.	33,1 ց.	20,0 ց.

Նույն պատկերն է նկատվում Ախտալի, Միկոյանի, Ազիզբեկովի, Գորիսի, Բասարգեչարի և այլ լեռնային շրջաններում:

Աղյուսակից պարզ յերևում է, վոր հետազոտված յերեք գյուղերում կորնգանի մեկ հեկտարի միջին բերքատվութունը 50,37 ցենտներով ավելի յե, քան առվույտինը, 52,96 ցենտ. ավելի յե, քան սովորական վիկայինը և վերջապես, 66,06 ցենտներով ավելի յե, քան բնական խոտհարքների մեկ հեկտարից ստացած չոր խոտը:

Հետաքրքրական է այժմ պարզել կորնգանի տարբեր պուլուլացիաների համեմատական բերքատվութունը: 1934 և 1935 թվերին Սեանի ավանդանում կատարած ուսումնասիրութունների ընթացքում մենք հետազոտել ենք ուկրաինական և տեղական կորնգանի բազմաթիվ ցանքեր, վորոնք կատարվել էյին միևնույն հողային ու կլիմայական պայմաններում, նույնիսկ միևնույն սառնայում: Այսպես, որինակ՝ Նոր-Բայազետի Ղլաղ կոլտնտեսութան «Մանիչար» կոչվող անջրդի հողամասում, Բասարգեչարի շրջանի Թուսկյուլի կոլտնտեսութունում և Գորիսի շրջանի Կյաբրի կոլտնտեսութունում ցանված էյին և՛ տեղական, և՛ ուկրաինական կորնգանների առանձին դաշտեր: Հաշվի առնելով նրանց բերքատվութունը (չոր խոտի) մեկ հեկտարից՝ ստացանք հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 35):

Աղյուսակ № 35

ԳՅՈՒՂԸ	Տեղական կորնգանի բերքը	Ուկրաինական կորնգանի բերքը
Ղլաղ . . . . .	72 ցենտ.	30,5 ցենտ.
Թուսկյուլի . . . . .	76,0 »	29,7 »
Կյաբրի . . . . .	67,4 »	31,3 »
3 գյուղերի միջինը . . . . .	71,8 ցենտ.	30,5 ցենտ.

Աղյուսակից պիտի գալ այն յեզրակացության, վոր միևնույն հողակլիմայական պայմաններում ուսումնասիրված տեղական և ուկրաինական պուլուլացիաների բերքատվութունը տարբեր է: Վոր տեղական կորնգանների մեկ հեկտարի միջին բերքատվութունը 41,3 ցենտներով ավելի յե, քան ուկրաինականինը:

Վերևում նշեցինք կորնգանի յերաշտադիմացկունության

մասին, սակայն չնայած դրան, այդ շրջաններում կորնգանի ցանքերի գերակշռող մասը ջրովի հողերումն է: Ավելորդ չի լինի, յեթե համեմատելու լինենք կորնգանի բերքատվութունը ջրովի և անջրդի պայմաններում (տես աղյուսակ № 36):

Աղյուսակ № 36

ՇՐՋԱՆ—ԳՅՈՒՂ	Բարձրութունը	Մեկ հեկտարի միջին բերքը	
		Ջրովի	Անջրդի
Ալիզուլեշին . . . . .	1540 մետր	93 ցենտ.	49 ցենտ.
Նորավան . . . . .	1640 »	91 »	52 »
Շաքի . . . . .	1898 »	83 »	67 »
Ֆորիսովկա . . . . .	2000 »	79 »	69,3 »
4 գյուղերի միջինը . . . . .		86,5 ցենտ.	59,4 ցենտ.

Աղյուսակից պիտի գալ այն յեզրակացության, վոր կորնգանը դեմի (անջրդի) պայմաններում տալիս է հեկտարից միջինը 59,4 ցենտներ չոր խոտ: Այդ դեռ ազրոտեխնիկայի անմեթոքար պայմաններում: Ջրովի պայմաններում բերքատվութունը 27,1 ցենտներով ավելի յե, քան անջրդի պայմաններում:

Աղյուսակից պիտի գալ նաև այն յեզրակացության, վոր զոնայական տեսակետից կորնգանի ցանքը վորքան բարձրանում է դեպի վերև, դեպի ավելի խոնավ պայմանները, այնքան կորնգանի ջրովի ցանքերի բերքատվութունը համեմատաբար իջնում է, իսկ կորնգանի անջրդի ցանքերի բերքատվութունը, ընդհակառակը, բարձրանում է:

Այստեղ անշուշտ դեր է խաղում բարձր զոնայի համեմատաբար ավելի շատ խոնավութունը, վորի հետևանքով ավելորդ ջուրը կորնգանի ցանքի վրա բացասաբար է անդրադառնում:

Ճիշտ է, լեռնային շրջաններում կորնգանի ջրովի դաշտերից ավելի շատ բերք է ստացվում, սակայն անջրդի պայմաններում ցանք կատարելու դեպքում այդ պակասը պետք է և հնարավոր է անպայման լրացնել ազրոտեխնիկայի բարելավմամբ, իսկ ջուրը պետք է ավելի ռացիոնալ ոգտապործել մյուս կողմից:



տուրաների համար (բանջարանոցային, կերի արմատապտուղների և այլն):

Վերևում կորնզանի յերկարակեցության հատկության մասին խոսելիս տեսանք, վոր ցանքի մաքսիմում խտությունը լինում է 3-րդ տարին, մոլախոտերը մինինում չափով տարածված են կորնզանի դաշտում ցանքի 3-րդ տարում, վոր ցորենի բերքի մաքսիմումն ստացվում է, յերբ կորնզանը վարում են 2 տարի ոգտագործումից հետո: Խնդիրն ավելի բազմակողմանի լուսաբանելու համար այժմ տեսնենք կորնզանի բերքատվությունն ըստ տարիների (տես աղյուսակ № 37):

ԱՂՅՈՒՍԱԿ № 37

Շրջան	Գյուղ	Ձրովի, թե ան ջրովի	Մեկ հեկտարի միջին բերքատվությունը ցենտներով				
			1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի
Միկոյան	Մալիշկա	Ջրովի	32 ց.	73 ց.	97 ց.	61 ց.	36 ց.
Միսիան	Սիսավան	»	18,3 »	46 »	90,3 »	39,6 »	29 »
»	Բռնակոթ	»	17 »	65 »	107,2 »	63 »	33,4 »
»	Մեյրեբար	Անջրդի	—	32 »	57 »	40,2 »	19,4 »
Գորիս	Յայլի	»	21 »	41 »	69 »	34 »	27,4 »
Միջինը՝ %-ներով			22,07 ց.	51,4 ց.	84,1 ց. 100%	47,3 ց. 56,2%	29,04 ց. 35,7%

Աղյուսակից յերևում է, վոր մաքսիմում բերքն ստացվում է ցանքի 3-րդ տարում, վորից հետո 4-րդ տարում բերքատվությունն ընկնում է 43,8%-ով, 5-րդ տարում՝ 64,3%-ով՝ համեմատած 3-րդ տարվա բերքատվության հետ:

Աղյուսակից յերևում է նաև այն, վոր տեղական կորնզանի ցանքի զեպքում հնարավոր է ցանքի հենց առաջին տարում բերք ստանալ, վորը կբարձրանա, յեթե ազրոտեխնիկական միջոցառումները կանոնավոր կիրառենք:

Այժմ տեսնենք, թե կորնզանի բերքատվությունն ինչպե՞ս է փոխվում ըստ հարի: Այդ պարզելու համար, մի շարք կոլտըն-

տեսություններում վերցնելով կորնզանի 3-րդ տարվա ցանքերը՝ հաշվի յենք առել նրանց բերքատվությունն ըստ հարի (տես աղյուսակ № 38):

ԱՂՅՈՒՍԱԿ № 38

ԳՅՈՒՂԸ	Բերքատվության միջինն ըստ հարի մեկ հեկտարից (ցենտներով)		
	1-ին հար	2-րդ հար	3-րդ հար
Շնաթող . . . . .	64	31	—
Սիսավան . . . . .	57	29	—
Յուշիկ . . . . .	46	32	17
Մալիշկա . . . . .	53	34	22
Միսիսյան . . . . .	44	31	—
5 գյուղերի միջինը . . . . .	52,8	32,4	19,5

Աղյուսակից յերևում է, վոր բոլոր պայմաններումն էլ կորնզանի մաքսիմում բերքատվությունն 1-ին քաղի ժամանակ է լինում, 2-րդ և 3-րդ քաղի ժամանակ բերքատվությունն անհամեմատ ցածր է:

Տվյալ կերպբույսի վորակի մասին խոսելիս նկատի պիտի ունենանք, թե կանաչ մասսան վորքան ջուր է պարունակում, ուրիշ խոսքով՝ մեկ միավոր կանաչ մասսայից վորքան չոր խոտ է ստացվում:

Բնույթը չոր խոտի համար ոգտագործելիս տնտեսական տեսակետից ամենաձեռնատուն հաշվվում է այն տիպը, սորտը կամ ձևը, վորը կանաչ մասսայի բարձր բերքատվության հետ միասին պարունակում է քիչ քանակությամբ ջուր, ուրիշ խոսքով՝ այն ձևը, վորի մեկ միավոր կանաչ մասսայից ավելի շատ չոր խոտ կստացվի:

Անպիտք է այն կերպբույսը, վորը կանաչ մասսայի պակաս բերքատվության հետ միասին պարունակում է մեծ քանակությամբ ջուր: Տեղական կորնզանի համեմատական բարձր չոր խոտի յեղքը ցույց տալու համար, վորպես որինակ նշենք, վոր Ն. Բայազետի շրջանի Ղշաղ գյուղի Մանիչար կոչված հողամասից տեղական կորնզանից ստացվում է 32,8% չոր խոտ, իսկ

ուկրաինականից՝ 23,20%: Դիտողություններ կատարելով Յերևանի պայմաններում՝ նույն պատկերն ենք ստանում:

Սիսյանի կորնզանից ստացվում է 31,4% չոր խոտ:

ուկրաինականից՝ 24,5% չոր խոտ:

ավազայինից՝ 23,4% չոր խոտ:

Դեռ ավելին՝ ուսումնասիրություն ընթացքում պարզվում է, վոր Դարաբասի ձևը տալիս է 41,3% չոր խոտ, Սիսիանի սովորական ձևը տալիս է 37,3% չոր խոտ, Ազիզբեկովի և Դարալագյազի ձևը տալիս է 35,6% չոր խոտ:

Թվերից պիտի դալ այն յեղրակացություն, վոր On. antasiatica-ն յուր մի շարք առավելությունների կողքին նաև ունի այնպիսի խոշոր արժանիքներ, վոր On. antasiatica-ի սահմաններում կան առանձին ձևեր, վորոնց մեկ միավոր կանաչ մասսայից սովորականից շատ չոր խոտ է ստացվում: Հետևապես սելեկցիայի նպատակների համար անպայման պետք է ոգտադործել այդ ձևերը:

Տնտեսական խոշոր նշանակություն ունի տվյալ կերաբույսի տերևների և ծաղիկների քաշի տարբերությունը ցողունների քաշին. ուրիշ խոսքով եյական է, թե վորքանով տվյալ ձևը հարուստ է տերևներով:

Վորքան տերևների և ծաղիկների քաշն ավելի մեծ է ցողունների քաշից, այնքան կերաբույսը աննդարար է հաշվվում:

Տերևի ու ծաղկի հարաբերությունը ցողունին կորնզանի մոտ ուսումնասիրելիս պարզվում է, վոր տարբեր տեսակներին մոտ այդ հարաբերությունը տարբեր է լինում (տես աղյուսակ № 39):

Աղյուսակ № 39

Տեսակ	Տերևի-ծաղկի հարաբերութ. ցողունին՝ ըստ քաշի	
	1-ին քաշ	2-րդ քաշ
1. On. viciaefolia . . . . .	53,1:46,9	—
2. On. arenaria . . . . .	52,7:47,3	—
3. On. antasiatica.		
ա) Դարաբաս . . . . .	58,2:41,8	63,6:31,4
բ) Բանակոթ . . . . .	39,2:60,8	52,3:47,7
գ) Խաչիկ . . . . .	43,6:56,4	56,9:43,1
դ) Մարաբաս . . . . .	49,8:50,2	61,4:38,6

Աղյուսակը ցույց է տալիս, վոր On. viciaefolia-ն և On. arenaria-ն համեմատաբար ավելի տերևալի յեն, քան On. antasiatica-ն սակայն On. antasiatica-ին մոտ է բավական մասսայական ձև՝ հանդիսացող Դարաբասի ձևը, վորը տալիս է բարձր տերևակալություն վոչ միայն 1-ին հարում, այլև 2-րդ հարում:

Աղյուսակից նկատվում է նաև այն, վոր On. antasiatica-ի տերևի ու ծաղկի 0%-ը 2-րդ հարում խոտի մեջ ավելի բարձր է, քան 1-ին հարում:

Սիսյանի կոլտեսություններից շատերը վաղուց արդեն ըմբռնել են կորնզանի արժեքավոր հատկանիշները. բավական է նշել, վոր տնտեսություններում կոպիտ կերի ընդհանուր բալանսում կորնզանը բավական վերակշռող տեղ է բռնում (տես աղյուսակ № 40):

Աղյուսակ № 40

№ ըստ հ	ՇՐՁԱՆ- ԳՅՈՒՂ	կորնզանի ցանքերի տարածության տոկոսը համեմատած խոտաբերների տարածության հետ 1935 թ.	կորնզանից ստացված խոտի տոկոսը կերի ընդհանուր բալանսում
		1	Ուղ . . . . .
2	Բանակոթ . . . . .	34,3	74,2
3	Սիսավան . . . . .	47	80,5
4	Սիսավանի ամբողջ շարձանը . . . . .	9,5	27,3

Թվերը ցույց են տալիս, վոր Սիսիանի շրջանում, չնայած կորնզանի տարածության աննշան լինելուն, համեմատած բնական խոտաբերների հետ, այնուամենայնիվ ստացված կոպիտ կերի ընդհանուր բալանսում կորնզանը գրավում է գերակշռող տեղ:

Գիմիտիսի կազմը.— Գիմիտիսի կազմը մեծ նշանակություն ունի, քանի վոր տվյալ կերաբույսի պիտանիությունը վորոշվում է նաև նրա քիմիական կազմով: On. antasiatica-ի մոտ այդ խնդրի նշանակությունն ավելի յե մեծանում, քանի վոր այստեղ, ինչպես վերևում տեսանք, հիմնականում գործ ունենք կոպիտ ցողուններ ունեցող բույսի հետ: Մեր դիտողություններից ու անալիզներից, վորոնք կատարվել են Պարարտացման և ագրոտոգրաֆիական կայանի ագրոքիմիական լաբորատորիայում (Յերևան), պարզվում է, վոր On. antasiatica-ի տարբեր վեգետատիվ

մասեր տարբեր քիմիական կազմ ունեն. այսպես, որինակ՝ անալիզի յենթարկելով կորնգանի տերևներն ու ծաղիկներն առանձին, իսկ ցողուններն առանձին, վորոնք հավաքվել էյին բույսի 100% ով ծաղկման շրջանում, միևնույն հողակլիմայական պայմաններում, միևնույն պոպուլացիայի սահմաններում՝ ստացանք աղյուսակ 41 ի պատկերը:

ԱՂՅՈՒՍԱԿ № 41

Վեգետատիվ մասերը	Թոնավության % Ը	% ները բացարձակ չոր նյութերից					
		Հում մոխիր	Հում պրոտեին	Ազոտ	Հում ճարպ	Հում թաղանթանյութ	Անաղու եքստրակտի նյութեր
Տերև և ծաղիկ . .	10,32	6,32	20,56	3,29	2,76	23,66	47,70
Ցողուն . . . . .	9,25	2,55	16,50	2,64	1,30	52,21	27,40

Աղյուսակը ցույց է տալիս՝ 1) թե վոր չափով տերևներն ու ծաղիկները միասին ավելի մեծ քանակութամբ սննդանյութեր (հում պրոտեյին, անաղու եքստրակտային նյութեր, ճարպ և այլն) են պարունակում, քան ցողունը:

2) Տերևներն ու ծաղիկները միասին 2-ից ավելի անգամ պակաս թաղանթանյութեր են պարունակում, քան ցողունները:

3) Հետաքրքրական է այստեղ մոխրի տոկոսը. պարզվում է, վոր տերևների և ծաղկափթթությունների մեջ մոխրի տոկոսը 2 ու կես անգամ ավելի չէ, քան ցողունի մոտ:

Այստեղից պետք է զալ այն յեղրակացության, վոր տնտեսական տեսակետից պիտանի յե կորնգանի այն ձևը—աասան, վորը մեծ քանակութամբ տերևներ ունի, ցողունները բարակ ու քիչ են: Այդ խնդիրը լուծելիս անհրաժեշտ է միացնել յերեք տնտեսական խոշոր հատկանիշներ՝ կերի բարձր վորակը, բերքատվությունը և սերմարտադրողականությունը: Ահա թե ինչու սելեկցիոն աշխատանքների ընթացքում, վորպես յերանյութ, մեծ տեղ պիտի տալ այն ձևերին, վորոնց ցողունները ճյուղավորվում են, ինչպես տեսանք, յուրաքանչյուր տերեածոցից նոր ճյուղեր են տալիս, վորոնք բավական բարակ ու քնքույշ են, վորոնք մի կողմից բարձրացնում են սերմարտադրողականությունը, վորովհետև

նոր ճյուղերը տալիս են նոր ծաղկափթթություններ, լավացնում են կերախոտի վորակը և, վերջապես, բարձր բերքատվություն են ունենում: E. H. Синская-ն, մեծ տեղ տալով կերաբույսերի են ունենում: E. H. Синская-ն, մեծ տեղ տալով կերաբույսերի քիմիական կազմին, գրում է. «Վորպեսզի ճիշտ վորոշենք ուղղակի ընտրության հնարավորությունը, քիմիական անալիզները պետք է սկսել յերանյութերից և նախևառաջ այս տեսակետից ուսումնասիրել եկոլոգ-աշխարհագրական տիպը»:

Հում պրոտեյինի տոկոսի և սվյալ բույսի տերևակալման աստիճանի մեջ *On. antasiatica*-ի սահմաններում կա վորոշ կապ. այսպես, որինակ՝ անալիզի յենթարկելով տերևակալման աստիճանի տեսակետից տարբեր ձևեր՝ ստացանք հետևյալ պատկերը (տեղ աղյուսակ № 42):

ԱՂՅՈՒՍԱԿ № 42

Տերևներ և ծաղկափթթության քաշի հարաբերությունը ցողունի նկատմամբ	Թոնավության % Ը	% բացարձակ չոր նյութերից					
		Հում մոխիր	Հում պրոտեին	Ազոտ	Հում ճարպ	Հում թաղանթանյութ	Անաղու եքստրակտի նյութեր
8,2:41,8 (ուժեղ տերևակալ.)	11,20	8,44	21,69	3,47	2,79	24,20	42,88
43,6:56,4 (թույլ > )	9,65	6,37	14,16	2,25	2,46	33,26	43,75

Աղյուսակը ցույց է տալիս, վոր վորքան սվյալ ձևի տերևակալման աստիճանը բարձր է, այնքան էլ ստացված կերի մեջ սննդանյութերի տոկոսը բարձր է:

Այսպես, որինակ՝ առաջին դեպքում հում պրոտեյինը 1,5 անգամ, մոխիրը՝ 1,3 անգամ ավելի չէ, քան յերկրորդինը, իսկ թաղանթանյութերը, ընդհակառակը, 1,4 անգամ պակաս են:

Անհրաժեշտ է նշել մի հանգամանք ևս. պարզվում է, վոր տարբեր զոնալ պայմաններում տարբեր են սննդանյութերի քանակը՝ միևնույն պոպուլացիայի սահմաններում:

Մեր հետազոտությունների ընթացքում ժողովեցինք խոտի նմուշներ մշակման տարբեր զոնաներից, անալիզի յենթարկեցինք և ստացանք հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 43):

Թվերը ցույց են տալիս, վոր կորնգանի մշակությունը, վորքան բարձր զոնայում է տարվում, այնքան հում պրոտեյինի

ՎԱՅՐԸ	Բարձրությունը	Ստանդարտի մասնակցությունը %	%/% բացարձակ չոր նյութերից					
			Հում մեխիլ	Հում պլաստիկ	Ազոտ	Հում ճարպ	Հում թանձրացում	Անազոտ և քիմիկատները նյութերից
Մաղանջուղ . . .	1300	10,09	7,45	16,69	2,67	2,35	29,94	43,60
Գետաթաղ . . . .	1500	9,28	5,61	15,69	2,51	2,33	33,30	43,06
Բռնակոթ . . . . .	1600	8,21	6,42	15,38	2,46	2,46	29,71	46,03
Շաքի . . . . .	1900	8,80	5,57	13,06	2,09	1,84	35,33	44,20

տոկոսը պակասում է. այստեղ, իհարկե, խոշոր դեր է խաղում խոնավությունը, վորի շատությունը պայմաններում քչանում է հուսվել պրոտեյինը, սակայն այս հանգամանքը պահանջում է մանրամասն լրացուցիչ ուսումնասիրություն:

ՍԵՐՄԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կորնզանի տարբեր եկոտիպեր տարբեր սերմարտադրողականություն ունեն: Հիմնականում դա կախված է.

1. Թե վորքան ուժեղ են զարգացած սվյալ ձևի վեգետատիվ որգանները:
2. Սերմարտադրողականությունը կախված է բույսի ծաղիկների քանակից. Միկոյանում, Սիսիանում, Գարաբասում տարածված են կորնզանի ձևեր, վորոնք, սովորաբար, ավելի շատ ծաղիկներ են տալիս—սա հետևանք է նրա, վոր այս տիպերի մոտ, սկսած ցողունի հիմքից, յուրաքանչյուր տերևածոցից դուրս են գալիս նոր յերկրորդական ցողուններ, վորոնք իրենց հերթին տալիս են ծաղկափթթույթյուններ, այսպիսով այս տիպի մոտ ծաղկափթթույթյունները, հետևապես ծաղիկների քանակը, 7—8 անգամ ավելի յե, քան սովորական կորնզանի տիպերի մոտ, վորտեղ յերկրորդական ցողուններ տերևածոցերից չեն աճում:
3. Սերմարտադրողականությունը կախված է սերմակալման տեղից, այսինքն՝ նայած նրան, թե ծաղիկների վոր տեղում է սերմակալում. այսպես որինակ, Գորիսի շրջանի Յայլի գյուղում

1489 մետր բարձրության վրա սերմակալման տեղում հավասար է 83,6-ի, մինչդեռ Ախլաթյանում միևնույն բարձրության վրա սակայն գետի հովտում, ավելի խոնավ պայմաններում կորնզանի սերմակալման տեղում հավասար է 51,2-ի: Այս խնդրում խոշոր դեր են խաղում վոր միայն ձևը, այլև արտաքին պայմանները, արևի ռադիացիան (որվա լուսավորություն տեղությունը): Որինակ՝ հողի խոնավությունը և ոգի խոնավությունը իջեցնում են սերմակալման տեղում: Չերմաստիճանի բարձրությունը, ընդհանրապես, բարձրացնում է սերմակալման տեղում: Յերևանում միևնույն հողակլիմայական պայմաններում կորնզանի տարբեր տեսակները սերմակալման խնդրում տարբեր ձևով են հանդես գալիս:

- On. viciaefolia 53,9%
- On. arenaria 47,8%
- On. antasiatica 84,3%

Միքանի տարվա մեր դիտողություններից պարզվում է նաև այն, վոր On. antasiatica-ի բարձր ֆերտիլությունը կախված է նրա բարձր ինքնաֆերտիլությունից: Այսպես, որինակ Յերևանի միևնույն հողակլիմայական պայմաններում ուսումնասիրելով տեղական տարբեր կորնզանների և ուղբաինական կորնզանների ինքնաֆերտիլությունը, ստացվեց հետևյալ պատկերը (տես աղյուսակ № 44):

№ բույսի կանոն	ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՏԻՊԵՐԸ	Ֆերտիլությունը	Ինքնաֆերտիլությունը	
			Արհեստական ձևով փոշին սպիտ վրա դնելով	Առանց արհեստական ձևով փոշին սպիտ վրա դնելու
1	Գարաբասի կորնզանը . . .	79,3%	19,45%	7,9%
2	Խաչիկի > . . .	82,5%	21,1%	8,2%
3	Յայլեի > . . .	81,6%	20,72%	8,3%
4	Սուխոյֆանտանից (ուղբաինական) . . . . .	49,7%	11,2%	4,3%

Աղյուսակը ցույց է տալիս, վոր տեղական կորնզանների մոտ ֆերտիլությունն անհամեմատ ավելի բարձր է, քան ուղբաինական կորնզանի մոտ, վոր տեղական կորնզանների բարձր ինքնաֆերտիլության և բարձր ֆերտիլության միջև կա դրական կապը:

Սերմարտադրողականության բարձրացման վրա ազդում են նաև ագրոտեխնիկական մի շարք միջոցառումներ:

Վերջապես կորնգանի սերմարտադրողականությունը մեծ չափով կախված է նաև նրանից, թե վորքանով ծաղկումը համընկնում է փոշոտողների, ավյալ դեպքում մեղուներին, մասսայական թռիչքի փամկետի հետ կամ, ավելի ճիշտ՝ մեր տնտեսությունները վոր չափով են կարողանում ողտազործել մեղուներին:

### IX. ՏԵՂԱԿԱՆ ԿՈՐՆԳԱՆԻ ԶԵՎԵՐԸ

Ամփոփելով *On. antasiatica*-ի բուսաբանական, բիոլոգիական, տնտեսական հատկանիշները, այժմ է վիճակի յենք խոսելու նրա առանձին տիպերի մասին: Խորհրդային Հայաստանի կորընգանացան հինգ հին շրջաններում, վորոնք Հողօդկրմատի կողմից հայտարարված են արգելավայր, տարածված ցանքերը միատարր չեն, այլ կազմված են տարբեր ձևերից, վորտեղ այս կամ այն ձևը հանդիսանում է գերակշռող: Այդ ձևերը տարբերվում են իրենց տարածման մասսիվներով և բուսաբանական, բիոլոգիական, տնտեսական հատկանիշներով (տես աղյուսակ № 45):

ԱՂՅՈՒՍԱԿ № 45

№ լրատ հ.	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	Չ Է Կ Ը Ը			
		Դարաբասի ձև	Ազիզբեկովի ձև	Խաչիկի ձև	Մարտունու ձև
1	Ճարածման մասինները . . . . .	Դարաբասի ձորը, Յայլի, Նորավան, Աղուզի	Ազիզբեկով, Մարտիրոս, Փոռ, Աղատեկ	Խաչիկ, Գնի-շիկ	Գյոզալդարա, Չլաբար, Վ. Դարանլուզ
2	Ծաղկման սկիզբը ցանքի առաջին տարում.				
	ա) առաջին քաղը	20/6	23/6	15/6	17/6
	բ) յերկրորդ քաղը	3/8	2/8	23/7	25/7
3	Տերևի և ծաղկի քաշի հարաբերութ. ցողունին . . . . .	63:37	58,7:42,7	52,1:47,9	49,3:50,7
4	Ցողունի հաստությունը . . . . .	Բարակ են	Բարակ են	Միջին	Շատ հաստ են

№ լրատ հ.	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	Չ Է Կ Ը Ը			
		Դարաբասի ձև	Ազիզբեկովի ձև	Խաչիկի ձև	Մարտունու ձև
5	Թիպակալումը . . .	Շատ ուժեղ	Շատ ուժեղ	Միջին	Միջին
6	Ճյուղավորում . . .	Շատ ուժեղ	Բացակայում է	Բացակայում է	Բացակայում է
7	Բույսի բարձրությունը . . . . .	Բարձր է	Միջին	Միջին	Բարձր է
8	Ճյուղերի յերկարությունը . . . . .	0,5—0,6 մ	—	—	—
9	Ցողունի թավտությունը . . . . .	Բացակայում է	Թույլ	Բացակայում է	Բացակայում է
10	Միջնադույնների թիվը ծաղկման շրջանում . . . . .	8	9	9	10
11	Ծաղկափթթության յերկարությունը . . .	Միջին	Յերկար է	Յերկար է	Յերկար է
12	Ծաղկափթթության կաթունի յերկարությունը . . . . .	2—3 անգամ յերկար է տերևից	1—2 անգամ յերկար է տերևից	2—3 անգամ յերկար է տերևից	2—3 անգամ յերկար է տերևից
13	Տերևների թիվը մեկ ծաղկափթթությունը . . . . .	60—75	80—85	60—65	75—80
14	Ծաղկափթթության խոտությունը . . . . .	4,7	3,9	4,3	4,05
15	Բաժակի թավտությունը . . . . .	Բացակայում է	Բացակայում է	Բացակայում է	Վերին մասը թույլ թավտու
16	Բաժակի աամիկների թավտությունը . . . . .	Թավոտ է	Թավոտ է	Թավոտ են միայն յեղբերը	Թավոտ է
17	Ծաղկի մեծությունը . . . . .	Խոշոր է	Խոշոր է	Խոշոր է	Խոշոր է
18	Ծաղկի գույնը . . . . .	Վարդագույն, բաց-վարդագույն	Վարդագույն, վաղ-մանի-բաց կարմիր	Վարդագույն, բաց կարմիր	Բաց կարմիր, վարդագույն, մանիշակագ.
19	Ունդի զինվածությունը . . . . .	Բացակայում է	Բացակայում է	Բացակայում է	Թույլ

№ ըստ հ.	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ				
	Գարաբասի ձև	Ազիզբեկովի ձև	Խաչիկի ձև	Մարտունու ձև	
20	Ունդի թավոտու-թյունը . . . . .	Թույլ	Թույլ	Բացակայում է	Թույլ
21	Հատունացած ունդի գույնը . . . . .	Բաց կանաչ դեղին ֆոնի վրա	Բաց կանաչ	Բաց կանաչ	Բաց շագանակադույն
22	1000 ունդի բացարձակ քաշը . . . . .	19,7	18,21	17,46	16,7
23	1000 ունդի ծավալը . . . . .	14,3	13,52	13,2	12,97
24	Հատիկի ձևը . . . . .	Յերկվամուկ-բաձև-կլոր	Յերկվամուկ-բաձև	Յերկվամուկ-բաձև	Յերկվամուկ-բաձև
25	Հատիկի գույնը . . . . .	Գորշ, բաց շագանակադույն	Գորշ, բաց շագանակադույն	Գորշ, բաց շագանակադույն	Բաց կանաչ, գորշ, բաց շագանակագ.
26	1000 հատիկի բացարձակ քաշը . . . . .	13,07	12,3	12,15	12,06
27	1000 հատիկի ծավալը . . . . .	10 12	10,09	10,06	10,01
28	Քաղից հետո աճման աստիճանը . . . . .	19 որ	21 որ	23 որ	25 որ
29	Յերևանի պայմաններում քանի անգամ է հնձվում խոտի համար . . . . .	3	3	3	3
30	Յերևանի պայմաններում քանի անգամ է հնձվում սերմի համար . . . . .	2	2	2	2
31	Սերմաբազրուկա-կանությունը . . . . .	Շատ բարձր է	Բարձր է	Միջին	Բարձր է
32	Ինքնաֆերտիլու-թյունը . . . . .	Բարձր է	Միջին	Թույլ	Միջին
33	Ունդերի թափվե-լը . . . . .	Բարձր է. (կան ձևեր, վորոնք բոլորովին չեն թափվում)	Բարձր է	Բարձր է	Բարձր է

№ ըստ հ.	ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ				
	Գարաբասի ձև	Ազիզբեկովի ձև	Խաչիկի ձև	Մարտունու ձև	
34	Սերմերի համե-րաշխ ծրուկը . . . . .	6 որվա ընթացքում	6 որվա ընթացքում	8 որվա ընթացքում	8 որվա ընթացքում
35	Ծիլերի գույնը . . . . .	Բաց կանաչ	Բաց կանաչ	Բաց կանաչ	Բաց կանաչ
36	Ծիլերի թավոտու-թյունը . . . . .	Թավոտ է	Թավոտ է	Թավոտ է	Թույլ Թավոտ
37	Արմառային հանգույցի բորոթյունը . . . . .	Խոր է	Խոր է	Մակերեսային է	Խոր է
38	Չոր խոտի մեջ հում պրոտեյնի առկայությունը . . . . .	21,69%	16,50%	20,56%	15,29%

Աղյուսակը ցույց է տալիս, վոր նշված ձևերը, այն է՝ Գարաբասի, Ազիզբեկովի, Խաչիկի, Մարտունու, վորոնք արդյունք են միանգամայն տարբեր եկոլոգիայի, մորֆոլոգիական, բիոլոգիական, տնտեսական հատկանիշներով ել տարբեր են:

Այս ձևերի խոր ուսումնասիրությունը և նրանց բազմացումը հնարավորություն կտա մեզ առանց սեղեկցիայի յերկարատև աշխատանքի բարելավել յեղած պոպուլացիաները:

Հետաքրքրական է տեղական կորնզանի սպիտակ ծաղկավոր ձևը: Հետաքրքիր է այստեղ կանգ առնել այդ ձևի վրա, վորը հայտնաբերել ենք 1935 թվի հետազոտման ընթացքում Միսիանի շրջանի սովորական կորնզանների ցանքերում և վորն առանձին մասսիֆներում հասնում եր 0,3%/-ի: Առաջին հայացքից թվում է, թե սովորական ալբինիզմ է, վորը, ինչպես գիտենք, բոլոր բույսերի մոտ ել պատահում է, սակայն նրա սերմերից ցանելով Գյուղատնտեսական ինստիտուտի հողամասում (Յերեվան), դորձյալ սպիտակ ծաղիկներով բույս ստացվեց:

Սպիտակ կորնզանը Յերևանի պայմաններում ցանքի առաջին իսկ տարում տալիս է 2 քաղ: Առաջին քաղը ծաղկում է 25 VI, իսկ յերկրորդը՝ 7 VIII: Թուփը կանգուն է, բավական տերևալի: Տերևների և ծաղկափթիթյան քաշի հարաբերությունը ցորենի քաշին հավասար է՝ 53,8:46,2:

Յողունները բարակ են, թփակալուամը միջին՝ հասնելով մինչև 20-ի մեկ թփուամ: Բույսի բարձրությունը 90—130 սմ է. թեցողունները և թե տերևները մերկ են:

Միջհասնգույցների թիվը՝ 8—11, վողկույզը յերկար է 15—17 սմ, մեկ վողկույզում ծաղիկների թիվը 60—65 հատ է, վողկույզի խոռությունը՝ 4,2, բաժակաթերթիկները՝ թույլ թավոտ, ատամիկները յեղբերից, թույլ թավոտ: Պատիճը թույլ գինված է, մերկ: հասած պատիճի գույնը բաց դեղնավուն՝ կանաչ ֆոնի վրա:

1000 պատիճի բացարձակ քաշը 18,20 գրամ է.

1000 » ծավալը՝ 13,51

Հատիկը յերիկամունքածե է, գույնը՝ գորշ, բաց-շագանակագույն է սև:

1000 հատիկի բացարձակ քաշը 12,71 գր է, ծավալը՝ 10,14:

Առաջին հարից մինչև յերկրորդ հարի միջի տեղությունը հավասար է 27 սրի:

Յերևանի պայմաններում տալիս է 2 հար—թե խոտի և թե սերմի համար:

Մերմարտադրողականությունը և ինքնաֆերտիլությունը բավական բարձր է: Թփակալման հանգույցը շատ խորն է:

Պրոտեյինի %-ը չոր խոտում՝ 18,75%:

Ճիշտ նույն սպիտակ ծաղիկներով հուլիսուրական առվույտ վերջերս հայտնաբերել է ամերիկական պրոֆեսոր Դանսեն-ը (46) Խորհրդային Միությունից ակադեմիկ Вильямс-ի անձամբ ուղարկած սերմերի մեջ:

Ըստ պրոֆեսոր Դանսեն-ի՝ առվույտի այդ ձևը, վորպես բերքատու ու ձմռադիմացկուն, բավական մեծ արժեք է ներկայացրում: Հետաքրքրական է մեր հայտնաբերած նոր ձևի մանրամասն ուսումնասիրությունը, սակայն վորպես նախնական հաղորդում պիտի հայտնել, վոր այդ ձևի մոտ ցողունները, ինչպես տեսանք, բավական քնքույշ են, տերևալի և սերմարտադրողականությամբ բավական բարձր:

## X. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՅՐԻ ԿՈՐՆԳԱՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ուսումնասիրվող հինգ շրջաններում տարածված են բավական մեծ քանակությամբ վայրի կորնգաններ, վորոնք գտնվելով տարբեր եկրուգիական պայմաններում, ոժտված են մի շարք արժեքավոր հատկանիշներով (տես աղյուսակ № 46):

Գործարար	Ջրի յատկան տարածումը				Տարածման մասին նշանները	Այլ մասով ներկ համարում նկարագրությունը	Բուսականությանը, բերրությանը և տնտեսական համարում նկարագրությունը																		
	800-1000 մետր	1000-1500 մետր	1500-2000 մետր	2000-3000 մետր			Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական	Քիմիական					
1	ՅՆՍԱԿԵԼԻԱ vulgatae Hand. Mazz						Փորի, Ոչթափափափա սարահամ, Գարաբաժնի ձոր, Բաղարջախի յնթաշերտեր, Բանասկիթ, Մարա, Շաբի, Աղիլ-բեկի, Մաչի, Մարտունի:	Ուժեղ քարքարոտ, շագանակագույն, չոր հողերում, հաճախ սահանդեքում:	Կանգուն, կիսաշանդուն	Ուժեղ 90-100 սանտիմետր, շին 45-65 հատ	Մինչև 1.5 մետր	Քաղցր	Հաստ	Քուլ	Յերկար թիվ 3, 2 սանտիմետր, լայնություն 0, 3-0, 4 սմ	52, 3: 47, 7	Քուլ	Ուժեղ	60-70	65-70%	Ուժեղ	Մարտունի	—	10/7	
2	On. altissima Cross. . . . .				+	+	Փորի, Ոչթափափափա սարահամ, Գարաբաժնի ձոր, Բաղարջախի յնթաշերտեր, Մարա, Շաբի, Աղիլ-բեկի, Մաչի, Մարտունի:	Հուստային և հարվայ չոր լայն ջրեր քարքարոտ, շագանակագույն հողերում	Կանգուն, կիսաշանդուն	Ուժեղ 71-80, մ ջին 35-45, թուլ 5-10-ը	Մինչև 1, 1 մետր	Մերկ	Համեմատաբար բալակ	Քուլ	Հաստ թիվ 0, 7 ից 1, 0 սմ. լայնություն 2, 5-3, 0 սանտիմետր:	54, 2: 43, 5	Քուլ	Ուժեղ	55-65	60-65%	Ուժեղ	Մարտունի	Ճյուղավորված	7/7	
3	On. Biebersteini g. sir. . . . .					+	Ոչթափա, Գարաբաժնի ձոր, Արաբիայի ձոր	Չոր սահանդեքում	Փոփոկալիսահանդուն	3-7	0-30	Քուլ	Քարակ	—	Յերկար թիվ 1, 5-1, 7 սանտիմետր, լայնություն 0, 3-0, 4 սմ	32, 1: 47, 9	Քուլ	Ուժեղ	20-25	—	Ուժեղ	Մարտունի	—	20-25/7	
4	On oxydonta Boiss et Hout. . . . .				+	+	Տաթև, Եղջ, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Փարքարոտ և հարվային սահանդեքում, հարվային լայն ջրերում	Փոփոկալիսահանդուն	9-17	15-60 սանտիմետր	Քուլ	Քարակ	—	Յերկար թիվ 2, 5-3, 0 սանտիմետր, լայնություն 0, 4-0, 5 սմ	51, 9: 19, 1	Քուլ	Միջին	35-40	—	Ուժեղ	Մարտունի	—	15-20/7	
5	On. hejastanii Cross. . . . .				+	+	Աղիլ-բեկի, Փոս, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Չոր քարքարոտ, հարվային լայն ջրերում	Կիսաշանդուն	11-29	20-60 սանտիմետր	Քուլ	Քարակ	Միջին	Յերկար թիվ 1, 5-2, 0 սանտիմետր, լայնություն 0, 15-0, 2 սմ	51, 3: 8, 7	Քուլ	—	25-35	63%	Ուժեղ	Մարտունի	—	20-27/7	
6	On. cadmea Boiss. . . . .				+	+	Չոր, Գարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Չոր, քարքարոտ, շագանակագույն հողերում, հարվային լայն ջրերում	Կիսաշանդուն	13-37	20-80 սանտիմետր	Քուլ	Քարակ	—	Յերկար թիվ 1, 0-1, 5 սմ, լայնություն 0, 2-0, 3 սմ	49, 3: 50, 7	Քուլ	—	30-35	23%	Կանգուն	Մարտունի	Ուժեղ	20-30/7	
7	ՅՆՍԱԿԵԼԻԱ Macroptera Hand Mazz On Oxytropoides Bnge . . . . .				+	+	Բաղարջախ, Տաթև	Չոր լայն ջրերում և հարվային լայն ջրերում	Կիսաշանդուն	Ուժեղ	—	Մերկ	Շատ բարակ	—	Յերկար թիվ 2, 3-2, 9 սմ, լայնություն 0, 3-0, 5 սմ	—	Քուլ	Ուժեղ	11-17 սանտիմետր	—	Ուժեղ	Մարտունի	Ուժեղ	20/7	
8	On. sosnovscii Cross. . . . .				+	+	Աղիլ-բեկի, Մարաբաժնի, Փոս, Աղիլ-բեկի	Չոր, քարքարոտ, հարվային լայն ջրերում	Կիսաշանդուն	7-11	45-60 սանտիմետր	Քուլ	Քարակ	Ճյուղավորված	Յերկար թիվ 1, 8-2, 0 սմ, լայնություն 0, 2-0, 3 սմ	48, 7: 51, 3	Քուլ	Ուժեղ	35-40 սանտիմետր	—	Ուժեղ	Մարտունի	Ճյուղավորված	15-20/7	
9	ՍՆՍԱԿԵԼԻԱ vaginatis CAM . . . . .				+	+	Փորի, Շաբի, Բանասկիթ, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Հարվային լայն ջրեր, չոր քարքարոտ հողերում	Կիսաշանդուն	7-11	45-60 սանտիմետր	Քուլ	Քարակ	Չոր լայն ջրերում	Յերկար թիվ 2, 1-2, 5 սմ, լայնություն 0, 5-0, 7 սմ	31, 2: 63, 8	Քուլ	Ուժեղ	35-40 սանտիմետր	—	Ուժեղ	Մարտունի	—	5/7	
10	On. radiata MB. . . . .				+	+	Փորի, Գարաբաժնի ձոր, Շաբի, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Քարքարոտ հողերում	Կիսաշանդուն	3-7	40-15 սանտիմետր	Քուլ	Քարակ	—	Յերկար թիվ 1, 0-1, 5 սմ, լայնություն 0, 9-1, 0 սմ	38, 3: 51, 8	Քուլ	Ուժեղ	35-45	—	Շատ ուժեղ	Մարտունի	—	5-10/7	
11	On. Mischauxii DC. . . . .				+	+	Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Չոր քարքարոտ ուժեղ հողերում	Կանգուն	2-3	30-15 սանտիմետր	Քուլ	Քարակ	Քուլ	Յերկար թիվ 1, 7-2, 1 սմ, լայնություն 0, 4-0, 7 սմ	23, 7: 76, 3	Քուլ	—	20-25	—	Շատ ուժեղ	—	—	1-5/7	
12	On. subcaulis soiss. . . . .				+	+	Միջին, Արաբի, Աղիլ-բեկի, Մարաբաժնի	Չոր, քարքարոտ, հարվային լայն ջրերում	Կիսաշանդուն	1-3	15-20 սանտիմետր	Քուլ	Քարակ	Քուլ	Յերկար թիվ 1, 5-2, 3 սմ, լայնություն 0, 7-0, 9 սմ	21, 2: 58, 8	Քուլ	—	7-10	—	Ուժեղ	—	Ճյուղավորված	15-20/7	
13	On. Cornuta (L.) Desv . . . . .				+	+	Տաթև, Մարաբաժնի, Աղիլ-բեկի, Մարաբաժնի, Մարաբաժնի	Հարվային լայն ջրեր, քարքարոտ, չոր, հարվային հողերում	Փոփոկալիսահանդուն	Ուժեղ	—	Քուլ	Քարակ	Քուլ	—	—	—	Քուլ	—	3-7	—	Ուժեղ	Մարտունի	—	20-25/7



Այսպիսով Կովկասի կորնգանների մոնոգրաֆ A. A. Гроце-  
 реим-ի կողմից Կովկասում նկարագրված 22 վայրի տեսակնե-  
 րից հարավային Հայաստանի ուսումնասիրված 5 շրջաններում  
 տարածված են 13 տեսակներ, վորոնցից առաջին յերկու յենթա-  
 տեղիային պատկանող տեսակներն ունեն կերային խոշոր նշանա-  
 կություն, իսկ On. cornuta, On. vaginalis, On. radiata, On.  
 Mischauxii, On. subacaulis, չնայած վորպես կեր քիչ նշանա-  
 կություն ունեն, սակայն շատ հաճախ իրենց տարածման չոր  
 մասսիֆներում հանդիսանում են միակ թեթեւնածաղկավոր բույ-  
 սերը և անասունների կողմից ուտվում են: Պիտի հիշել մի հան-  
 դամանք ես, վոր բոլոր 13 տեսակներն էլ այս մասսիֆներում  
 ներկայացված են ձևերի խոշոր ամպլիտուդայով, վոր միևնույն  
 տեսակի սահմաններում գոյություն ունեն բազմաթիվ անցողիկ  
 ձևեր—այս կամ այն աչքի ընկնող հատկանիշով: Այսպես,  
 որինակ՝ On. transcaucasica, On. hajastanii և այլն: Դրանցից  
 շատերը— On. transcaucasica, On. altissima—այնքան շատ են  
 տարածված նշված մասսիֆներում, վոր շատ հաճախ կոլտնտեսական-  
 ների կողմից խոտի համար դրանք հնձվում են տարեկան յերկու  
 անգամ, կամ թողնվում են սերմի համար: Որինակ՝ Դարաբասի ձո-  
 րի Գետաթաղում 35—36 թվին On. altissima-ի ամբողջ մասսի-  
 վը թողնվեց սերմի համար:

Համեմատական աղյուսակից դժվար չե ընտրել սելեկցիայի  
 համար վորպես յերանյութ այս կամ այն հատկանիշներով աչքի  
 ընկնող տեսակները:

Իրենց տարածման եկոլոգիական պայմաններից յերնելով,  
 անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել On. transcaucasica  
 և On. altissima-ին, վորպես չորագիմացիուն, բազմահար, ուժեղ  
 թփակալման եներգիա ունեցող (հաճախ 140-ից էլ ավելի ցողուն-  
 ներ մեկ թփում), կանգուն, բարձր սերմարատրողականությամբ  
 և այլն մի բույս: Չորագիմացիունության տեսակետից, վորպես  
 յերանյութ սելեկցիայում պիտի ոգտագործել բացի On. transcau-  
 casica-ից և On. altissima ից նաև On. hajastanii, On. sosnovscii,  
 վորոնք տարածված են Ազիդբեկովի հարավային չոր, քարքարոտ  
 լանջերում:

Չմոտադիմացիունուրյան հատկանիշն ուժեղ է դարգացած On.  
 Biebersteinii, On. axiodonta, On. cadmea, On. oxytropoides  
 տեսակների մոտ, վորոնք տարածված են այդ շրջանների լեռնե-  
 րի ամենաբարձր գագաթներում (մինչև 3000 մետր), հաճախ

նույնիսկ սառը հողերում: Ուժեղ քիակալման հատկանիւնն ուժեղ է արտահայտված Օն. transcaspica, Օն. altissima, Օն. cadmea մոտ, վորոնք, անկախ հողային պայմաններից, փարթած զարգանում են նաև չոր, քարքարոտ, զրեթե ապառաժ լանջերում, իսկ թույլ է զարգացած՝ Օն. subacaulis, Օն. mischautii, Օն. radiata տեսակների մոտ: Տնտեսական խնայող և անհարկույունն ունի սերեակալման ասիմետրի զարգացումը վայրի կորնգանների մոտ: համեմատական օդուսակի այդ սյունակից դժվար չէ գալ այն յեզրակացութեան, վոր կորնգանների մի շարք տեսակների՝ Օն. transcaucasica, Օն. altissima, Օն. hajastanii, Օն. oxydonta, Օն. oxytropoides մոտ, տերև-ծաղիկների քաշն ավելի մեծ է, քան ցողունների քաշը:

Հայտնի յե, վոր հիմնականում ծաղկման շրջանում կուլտուրական կորնգանների ներքևի տերևիկները թափվում են, վորով պցում են սովյալ խոտի պիտանիությունը, մինչդեռ վայրի կորնգանների մի շարք տեսակների՝ Օն. altissima, Օն. hajastanii Օն. cadmea մոտ ծաղկման շրջանում ներքևի տերևիկները բուրբուղին չեն թափվում, վորպիսի հատկանիշը, անշուշտ, պիտի ոգտագործվի սելեկցիայում: Խոր նշանակութուն ունի նաև ցողունի քնքրությունը: կորնգանների նշված վայրի տեսակների մոտ կան տեսակներ՝ Օն. altissima, Օն. hajastanii, Օն. cadmea և այլն, վորոնք համեմատաբար բարակ ու քնքույշ ցողուններ ունեն, վորի հետևանքով բարձր է լինում սովյալ բույսերի կերային պիտանիությունը: Բույսի թավոտութեան հատկանիշը տարբեր է տարբեր տեսակների մոտ, այսպես, որինակ՝ Օն. transcaucasica, Օն. hajastanii, Օն. oxydonta, Օն. sosnovscii և այլնի խիստ թավոտությունն իջեցնում է նրանց կերային նշանակությունը, մինչդեռ Օն. altissima, Օն. oxytropoides և այլն հիմնականում մերկ են, ու հնարավոր է դրանց այդ հատկանիշն ոգտագործել սելեկցիոն նպատակների համար:

Սերմաբուսադրողականութեան հատկանիշն ուսումնասիրված տեսակների մոտ բարձր է (Օն. transcaucasica, Օն. altissima, Օն. hajastanii), մինչդեռ Օն. cadmea-ի մոտ այդ հատկանիշը բավականին ցածր է ( $23\frac{3}{10}$ -ի յե հավասար):

Այս վայրի տեսակների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն կտա մեզ նրանց մեջ գտնել այնպիսի տեսակներ, վորոնց սերմերը համեմատաբար շատ քիչ են թափվում, ու ոգտագործել նրանց սելեկցիայում:

Կասկածից դուրս է, վոր տեղական կուլտուրական կորնգանները մի շարք տեղերում ուղղակի վերցված են վայրի վիճակից՝ Օն. transcaucasica-ից և Օն. altissima-ից: Այդ պրակտիկան մինչև հիմա էլ շարունակվում է մի շարք տնտեսություններում: Այսպես, որինակ՝ Սիսիանի շրջանի Գետաթաղի կուլտուրատեսությունն ամեն տարի հավաքում է վայրի Օն. transcaucasica և Օն. altissima կորնգանների սերմեր և ցանում է իր դաշտերում: Վերջիններս վորոշ մասսիվներում այնքան են տարածված, վոր հնարավոր է նրանցից մեծ քանակութեամբ սերմեր հավաքել: Անհրաժեշտ է կազմակերպել վայրի կորնգաններից աչքի ընկնող մի շարք տեսակների խնամողութեան գործը, նախաքի ընկնող մի շարք տեսակների խնամողութեան գործը, նախաքի փորձարկելով տեսակփորձ հողամասերում: Այդ կորնգանները պիտի ոգտագործել մի կողմից խոտացանութեան մեջ (Օն. transcaucasica և Օն. altissima), մյուս կողմից բարելավել բնական խոտհարքները (Օն. transcaucasica, Օն. altissima, Օն. cadmea և այլն) և, վերջապես, արտոների բուսաբանական կազմը լավացնել (Օն. oxytropoides և այլն):

Այսպիսով մեծ է վայրի կորնգանների մանրամասն և խոր ուսումնասիրութեան նշանակությունը մի կողմից գոյություն ունեցող կուլտուրական կորնգանների պոպուլացիաների վորակը բարելավելու, մյուս կողմից բնական խոտհարքների և արտոների բուսաբանական կազմը լավացնելու խնդրում:

## XI. ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Հայաստանի լեռնային շրջաններն ունեն բուրբ հնարավորությունները մշակվող կուլտուրաների բերքատվութեան խիստ բարձրացման համար: Չնայած դրան, միաթարական չէ կորնգանացանութեան գործը, մանավանդ նրա սերմաբուսությունը: կորնգանի սերմաբուսութեան բերքատվությունը կրտսեմատություններում վոչնչով չի տարբերվում այն բերքատվությունից, վորը գոյություն ուներ տասնյակ տարիներ սրանից առաջ: Ցեթե այդ բերքատվությունն ընդունելի յեր տնտեսութեան անհատական սեկտորի համար, այժմ այդ բերքատվությունը կուլտուրատեսություններում պիտի յեռապատկվի, քառապատկվի: Անասնապահությունը կերով ապահովելու և ցանքաշրջանառութեան խնդրի կանոնավոր լուծումը պահանջում է հիմնականում վերափոխել կորնգանի սերմաբուսությունը: կորնգանի սերմի ցածր և

անկախուն (1—2 ցենտներ) բերքատուության միջոցով մենք յերբեք չենք կարող բավարարել այն հսկայական պահանջը (30—35 հազար ցենտներ), վորը դնում է մեր առաջ ցանքաշրջանառության լրիվ իրացման պայմաններում սոցիալիստական ագրոտեխնիկան: Չեմ խոսում այն մասին, վոր մոտ ապագայում անհրաժեշտ կլինի նույնիսկ տեղական կորնզանի սերմի արտահանումը:

Խորհրդային Հայաստանի լեռնային շրջանների բնապատմական պայմանները (հողը, կլիման) միանգամայն նպաստավոր են կորնզանի բարձր սերմաբուծության համար: Սակայն վերջին է կորնզանի սերմի ցածր բերքատուության պատճառը: Պատճառներինց մեկը, դա այդ գործի խառնիճաղանձ լինելն է: Ընկ. Ստալինը դեռ 17-րդ համագումարում զգուշացրեց բոլորիս՝ սերմաբուծության խառնիճաղանձ լինելու մասին: Այդ ամբողջովին վերաբերում է նաև կորնզանի սերմաբուծությանը: Վերև նշեցինք տեղական կորնզանների միանգամայն շահավետ լինելը, նշեցինք նրանց կարևոր առավելութունները հանդեպ ուկրաինականի, սակայն, չնայած դրան, մեր տնտեսական մարմիններն սկսած 1926 թվից անվերջ դրսից են բերում կորնզանի սերմեր, վորոնք մեր հողային-կլիմայական սպեցիֆիկ պայմաններում ավելի վատ արդյունք են տալիս:

Այսպես, որինակ՝ միայն վերջին տարիների թվերից յեկնելով՝ պարզվում է (տես աղյուսակ № 47).

ԱՂՅՈՒՍԱԿ № 47

	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.
Կորնզանի՝ տեղում սաացած սերմի քանակը . . . . .	230,7 ց.	754,1 ց.	242,8 ց.	500 ց.
Դրսից է բերվել . . . . .	124,0 »	251,0 »	500 »	1000 »

Թվերը ցույց են տալիս, վոր փոխանակ տեղում կանոնավոր կազմակերպելու տեղական արժեքավոր պոպուլացիաների սերմաբուծության գործը, անընդհատ ծանրաբեռնելով արանսպորտը, դրսից բերվել է ավելի վատ վորակի (ուկրաինական) կորնզանի սերմ: Դրսից բերելու բացասական հետևանքն անխուսափելի յե, քանի վոր խաչաձև փոշոտման հետևանքով—մեծ վտանգի առաջ են կանգնում տեղական կորնզանները: Աղյուսակում բերված թվերն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ

է նաև մեջ բերել այդ թվականներին կորնզանի սերմի բերքատուությունը Հայաստանում:

1933 թվին	1,9 ց.	(հանրապետության միջինը)
1934 »	2,0 »	»
1935 »	1,8 »	»

Թվերը պարզ կերպով ցույց են տալիս, թե վորքան անմխիթարական է, վորքան խայտառակ դրության մեջ է գտնվում կորնզանի սերմի բերքատուությունը. դեռ ավելին, մեր հետազոտության ընթացքում պարզվել է, վոր վորոշ տեղերում ստացվել է նույնիսկ ավելի քիչ սերմ: Կորնզանի սերմաբուծության խրճիղում վճռական դեր է խաղում ագրոտեխնիկայի ամբողջ սխտեմի կիրառումը: Բավական է նշել, վոր մինչև հիմա վոչ միայն սերմաբուծական նպատակների համար Հայաստանում չեն կատարվել հատուկ ցանքեր (լայն շարքերով, հատուկ խնամք), այլև սովորական շարքացան ցանքերն էլ բացակայել են. ինչ խոսք, վոր կորնզանի տարածված շաղացան ցանքերն անհամեմատ ավելի պակաս բերք կարող են տալ, քան կանոնավոր, շարքացանով ցանված ցանքերը: Բազմաթիվ են փորձնական կայանների տվյալները, վորոնք ապացուցում են, վոր նման լայն շարքերով ցանքերը կորնզանի սերմի բերքատուությունը բարձրացնում են 50—60%—ով: Յեթե բացակայել է կորնզանի սերմի համար լայն շարքերի ցանքը, ապա ինքնըստինքյան բացակայել է նաև պահանջվող միջշարքային տարածությունների մշակումը, մոլախոտերի դեմ պայքարը և այլն:

Ամբողջությամբ աչքաթող է արված նաև կորնզանի սերմի բերքատուությունը բարձրացնող հիմնական ֆակտորներից մեկը՝ մեղուն:

Կորնզանի սերմաբուծական հատուկ ցանքերին զուգընթաց Խորհրդային Հայաստանի լեռնային շրջաններում ու կոտանտեություններում պետք է լայն մասշտաբով ոգտագործել մեղուններին կորնզանը փոշոտելու համար, վորը հանդիսանում է կորնզանի սերմի բերքատուության բարձրացման հիմքը:

Ստեղծվում են լայն մասիվներ, վորոնք իրենց սերմի բերքի բարձրացման համար պահանջում են փոշոտողների մասնակցությունը: Այդպիսով մեղվաբուծությունը ձեռք է բերում մեծ նոր ուղղություն գյուղատնտեսության մեջ՝ դառնալով կորնզանի և այլ կուլտուրաների սերմի բերքի բարձրացման լուրջ ֆակտորներինց մեկը: Առանց մեղունների մասնակցության դժվար թե

հնարավոր լինի բարձրացնել մի շարք գյուղատնտեսական կուլ-  
տուրաների, մեզ մոտ մասնավորապես կորնգանի սերմի բերքա-  
տվութունը: Ըստ Бернер-ի (45) պարզվում է, վոր մեղունների  
փոշոտման շնորհիվ, դաշտավարական, այգեգործական և բանջա-  
րաբուծական կուլտուրաների սերմի և պտղի սոսկ բարձրացու-  
մից ստացած յեկամուտը 15 անգամ ավելի շատ է, քան մեղու-  
ններից ստացած մեղրի և մոմի յեկամուտը: Հետազոտության ըն-  
թացքում պարզվել է, վոր այն տնտեսությունները, վորտեղ մե-  
ղուն ոգտագործվել է այդ նպատակների համար, թե կորնգանի  
սերմի բերքատվութունը և թե մեղրի բերքն անհամեմատ ավելի  
բարձր են յեղել:

Մարտունու շրջանի Զոլաքարի կուլտնտեսությունն ամեն  
տարի գարնանը կորնգանի ծաղկման մոմենտին մեղունե-  
րը փոխադրում է կորնգանոցները, նույնն են անում նաև Վ. Ղա-  
բանյուզի կուլտնտեսությունը, Միսիանի շրջանից՝ Բնունիսը, Աղվի-  
բեկովի շրջանից՝ Մարտիրոսը: Ավելորդ չի նշել, վոր մեղուն, հա-  
մաձայն մեր գիտողությունների, մեկ բուսելի ընթացքում միջի-  
նը 16 - 17 կորնգանի ծաղիկ է փոշոտում: Յեթե նկատի ունե-  
նանք մեղվի որվա աշխատանքի տևողությունը, ապա կտեսնենք  
վոր մեկ մեղուն որվա ընթացքում կորնգանի 1000-ավոր ծաղիկ-  
ներ է փոշոտում: Դիտողություններից պարզվում է նաև այն  
վոր կորնգանի դաշտն ավելի շատ մեղուններ են հաճախում, քան  
առվույտի դաշտը: Ահա այդ պատճառով էլ Զոլաքարի դաշտում,  
ուր գրված են մեղուններ, կորնգանի սերմարտագորդականությու-  
նը հավասար է 77 տոկոսի, այսինքն՝ 100 ծաղկից 77-ը փոշոտվել  
սերմակալել են, իսկ այն դաշտը, վոր մեղուններից շատ հեռու յե, սեր-  
մարտագորդականությունը հավասար է միայն 46<sup>0</sup>/<sub>100</sub>-ի: Միևնույն  
ժամանակ Զոլաքարի այն դաշտում, վորը մեղունների մոտ է, կո-  
րնգանի սերմի բերքատվութունը մեկ հեկտարին հավասար է  
9,8 ցենտների, իսկ այն դաշտում, վորի հեռավորության պատ-  
ճառով մեղունները քիչ են հաճախել, կորնգանի սերմի բերքը մեկ  
հեկտարից հավասար է 5,3 ցենտների: Այսպիսով, միայն մեղու-  
ների գործունեյությունն ոգտագործելով մի հեկտարից ստանում  
ենք 4,5 ցենտներ ավելի կորնգանի սերմ, քան մյուս դաշտից:  
Զոլաքարում այն մեղունները, վորոնք գտնվելիս են յեղել կորն-  
գանի դաշտում, 42,3<sup>0</sup>/<sub>100</sub>-ով ավելի մեղր են տվել, քան կորնգանի  
դաշտից հեռու գտնվող մեղունները: Նույն պատկերն է ստացվել  
Միսիանի շրջանի Բնունիսի կուլտնտեսությունում. մեղվի այն

փեթակները, վորոնք փոխադրվել են կորնգանի դաշտը, յուրա-  
քանչյուր ընտանիք վերցրել է 4 վերնահարկ, սովորական յերկու  
վերնահարկի դիմաց: Այդ դաշտի կորնգանի սերմի բերքատվու-  
թյունը հեկտարին հավասար է 6,7 ցենտների, իսկ միևնույն հո-  
դային-կլիմայական պայմաններում գտնվող կորնգանի այլ ցան-  
քը, վորտեղ չի ոգտագործվել մեղուն հեռավորության պատճա-  
ռով, տվել է հեկտարին ընդամենը 3,9 ցենտներ սերմ:

Թվերը կրկին անգամ ապացուցում են, վոր կորնգանը հան-  
դիսանում է մեղրատու բույս, վոր մեղուն բարձրացնում է կո-  
րնգանի սերմի բերքատվությունը. անհրաժեշտ է, վոր ընդհան-  
րապես կորնգանացանությամբ և մասնավորապես կորնգանի սեր-  
մարուծությամբ զբաղվող կուլտնտեսություններն զբաղվեն նաև  
մեղվաբուծությամբ:

Կորնգանի սերմարուծության գործում մի շարք խնդիրնե-  
րի նկատմամբ մինչև որս էլ զբաղանության մեջ կան խոշոր տա-  
րաձայնություններ: Տարաձայնության առաջին խնդիրը, դա այն  
է, թե արդյոք բույսը վոր տարվանից թողնել սերմի համար և  
նրա տևողությունը: Այդ մասին Դ. Бернер-ը (17) գրում է. «Կո-  
րնգանը սերմի համար թողնելու դեպքում պիտի ընտրել կորն-  
գանի հին դաշտերը, վորովհետև յերիտասարդ ցանքերը շատ են  
թուլանում, յերբ նրանց թողնում են սերմի համար»: Вакар-ը  
(19) գրում է. «Կորնգանը սերմի համար կարելի յե թողնել մի-  
միայն մեկ անգամ, բույսի ամբողջ տևողության ընթացքում (այ-  
սինքն՝ չորս տարվա ընթացքում), վորովհետև սերմից հետո հա-  
ջորդ տարին կորնգանի ցանքն ուժեղ նուսրանում է փչանում է,  
վորի պատճառով էլ սերմի համար պիտի թողնել ոգտագործման  
վերջին տարին»: И. Травин-ը (25) գրում է. «Այն մարգերը, վո-  
րոնք միշտ էլ հավաքվել էյին սերմի համար, ավելի լավ էյին,  
մոլախոտերից մաքուր, բարձր, խիտ, բարձր բերքատվությամբ  
(123,2 կիլոգրամ), քան այն մարգերը, վորոնք ամեն տարի հա-  
րաքվել են խոտի համար, բերքը (խոտի) հավասար է 96,9 կիլո-  
յի: Այստեղից յերևում է, գրում է И. Травин-ը—վոր կորնգանի  
ցանքը սերմի համար թողնելը վոչ միայն չի իջեցնի հաջորդ տա-  
րիների խոտի բերքատվությունը, այլ, ընդհակառակը, բարձրաց-  
նում է»: Ահա, նման տարաձայնություններից յելնելով, մեր  
առաջ խնդիր եր զբաղված մեր պայմաններում պարզելու, թե վոր  
տարվանից թողնել բույսը սերմի համար ու նրա ոգտագործման  
տևողությունը: Հետազոտման ընթացքում վերին աստիճանի միա-

կողմանի կլիներ կորնգանի սովորական դաշտերն ընտրելը, վո-  
րոնք միջանի տարի անընդհատ թողնվել են սերմի համար, վո-  
րովհետև, ինչպես վերջում կտեսնենք, ամեն անգամ սերմն ուշ  
հավաքելու պատճառով դաշտը ցանվել է կրկնակի, յեռակի խտու-  
թյամբ: 1934—35 և 1936 թվականների հետազոտության ըն-  
թացքում Սուխոյֆանտանում 1933 թ. ցանված կորնգանի դաշտի  
նկատմամբ հետևյալ դիտողությունը կազմակերպեցինք՝ դաշտի  
մի մասը ամեն տարի սերմի համար թողնելու, իսկ մի մասը՝  
անընդհատ խտտի համար ողտազործելու միջոցով (տես աղյուսակ  
№ 48):

ԱՂՅՈՒՍԱԿ № 48

Վր բովին և ցանվել	1934 թ.	1935 թ.	1936 թ. սերմի հա- մար	1936 թ. խտտի հա- մար	Ծանո- թու- թյուն
1933 թ.	Սերմ—5,6 ց.	Սերմ—7,2 ց.	Սերմ—8,9 ց.	Մոտ—57,3 ց.	
1933 թ.	Մոտ—37,3 »	Մոտ—41,2 »	» —6,9 »	» 52,6 »	

Պարզվեց, վոր յերեք տարի անընդհատ սերմի համար թող-  
նելը բոլորովին չի ազդել խտտի բերքատվության վրա. վոր սեր-  
մի համար դաշտը ցանքի յերկրորդ տարվանից ողտազործելը մա-  
ղաչափ անգամ չի անգրադառնում հաջորդ տարիների թե խտտի  
և թե սերմի բերքատվության վրա:

Յերևանի պայմաններում կորնգանի դաշտը կարելի չէ թող-  
նել սերմի համար սկսած ցանքի առաջին տարվանից: Բազմաթիվ  
ապացույցներ կան, յերբ ցանքի առաջին տարվանից մինչև չոր-  
րորդ տարին բույսն անընդհատ թողնվել է սերմի համար, բայց  
բույսը բոլորովին չի նվազել: Ինչպես խտտի բերքը ցանքի տար-  
բեր տարիներում տարբեր է, նույնպես և կորնգանից սերմ ստա-  
նալու ղեպքում ցանքի տարբեր տարիներում տարբեր քանակով  
սերմ է ստացվում (տես աղյուսակ № 49):

ԱՂՅՈՒՍԱԿ № 49

Կոլտնտեսութունը	Ցանքի առաջին տարին	Յերկրորդ տարին	Յերրորդ տարին	Չորրորդ տարին	Հինգե- րորդ տարին
Բոնակոթի կոլտնտեսութ.	—	6,5 ց.	8,1 ց.	6,4 ց.	3,1 ց.
Մարտիրոսի »	—	7,12 »	9,7 »	6,9 »	3,3 »

Ուրեմն սերմի բերքը բարձր է ցանքի յերրորդ տարին, վո-  
րից հետո բերքատվությունն սկսում է նվազել: Ցանքաշրջանա-  
ռության մեջ յերեք տարի մնացող կորնգանի դաշտը կարելի չէ  
յերկրորդ տարվանից սկսած թողնել սերմի համար:

ՎՈՐ ԲԱՂԸ ԹՈՂՆԵԼ ՍԵՐՄԻ ՀԱՄԱՐ

Այս խնդիրն այն վայրերում, վորտեղ տարածված են կո-  
րնգանի միայն միակար ձևերը, ինքնուստինքյան լուծվում է, վո-  
րովհետև բույսը հնձվում է միայն մեկ անգամ և խոսք լինել չի  
կարող յերկրորդ հարի մասին, հետևապես Հայաստանի բոլոր այն  
շրջաններում, վորտեղ մշակվում է *On. viciaefolia*-ն, սա ան-  
հրաժեշտ է սերմի համար թողնել 1-ին հարը: Մակայն խնդիրն  
ամբողջությամբ փոխվում է *On. antasiatica*-ի մշակման ղեպքում:  
Այս ղեպքում ել պիտի խնդրին յերկու կերպ մոտենալ. անըն-  
դի պայմաններում միայն առաջին հարը թողնել սերմի համար,  
վորովհետև յերկրորդ հարը շատ թույլ է դարգանում, մանավանդ  
չոր ամառների ընթացքում ու սերմ քիչ է տալիս: Որինակ՝ Մա-  
ղանջազում առաջին հարը տալիս է 5,7 ցենտներ, 2-րդ հարը՝  
2,3 ց., Ալիդուլիշենում առաջին հարը տալիս է 5,9 ցենտներ, 2-րդ  
հարը՝ 2,07 ց., մինչդեռ կորնգանի մշակումը ջրովի պայմաննե-  
րում փոխում է խնդիրը. այստեղ է, վոր անպայման պետք է  
զրվի—թե արդյոք վոր հարը թողնել սերմի համար—առաջին, թե  
յերկրորդ: Ագրոտեխնիկայի ներկա պայմաններում, յերբ բացա-  
կաչում են ցանքի շարքացան ձևերը, յերբ մուլախոտերի դեմ հնա-  
րավոր չէ պայքարել, յերբ միջաբաշխի տարածությունները  
չեն մշակվում, առաջին քաղը նպատակահարմար չէ սերմի համար  
թողնել. այդ պայմաններում առաջին հարի ղեպքում կորնգանը  
շատ խիստ պառկում է, դաշտը մուլախոտերով հարուստ է լինում  
և անձրևաչին ամառներն իջեցվում է կորնգանի սերմարտադրո-  
ղականության տոկոսը: Միայն այդ պատճառով է, վոր Ախլա-  
թյանը, Նոր Ավանը ջրովի պայմաններում կորնգանի առաջին  
հարից ստացել են 2,3—3,0 ցենտներ բերք, մինչդեռ յերկրորդ  
հարի ղեպքում, յերբ կորնգանը չի պառկել, մուլախոտերն իս-  
պառ բացակայում էին, քիչ էր ջրվել և հարը համընկել էր  
ամառվա չոր ամիսներին, բերքն անհամեմատ ավելի բարձր  
էր, հավասար 7,3 ցենտների: Պիտի նկատի ունենալ այն հան-  
գամանքը, վոր կազմակերպչական տեսակետից միանգամայն նույն-

առկահարմար ե առաջին հարը թողնել սերմի համար, իսկ յերկրորդը՝ խոտի, վորովհետև առաջին հարի ավարտման ժամանակը չի զուգադիպում հացահատիկների մասսայական հնձին. այդ մի կողմից, իսկ մյուս կողմից կորնզանի առաջին հարը սերմի համար լեռնային շրջաններում չի զուգադիպում անձրևներին, մինչդեռ չերկրորդ հարն սկսվում ե այն ժամանակ, յերբ հացահատիկների մասսայական հունձ ե կատարվում ե, բացի այդ, այդ հարը միշտ ել զուգադիպում ե անձրևներին ու հնարավոր չի լինում պահանջված ձևով կալսել ու կազմակերպել բույսի ե սերմի հետագա խնամքը:

Ավելորդ չի լինի հիշատակել, վոր այն դաշտերը, վորտեղ կորնզանը չի պահել, քիչ ե ջրվել, մուլխոտեր քիչ կան, մեղուններին ոգտագործել են, առաջին հարն անհամեմատ ավելի շատ սերմի բերք ե տվել, քան յերկրորդ հարը. այսպես, որինակ՝ Ազիզբեկովի շրջանում Մարտիրոս գյուղում կորնզանի առաջին հարը տվել ե 16,91 ցենտներ կորնզանի սերմ, իսկ յերկրորդ հարը՝ 3,4 ցենտներ:

### ՅԵՐԲ ԼԱՎԱՔԵԼ ՍԵՐՄԻ ՀՍՄԱՐ

Կորնզանի սերմաբուծության գործում խոշոր նշանակություն ունի սերմահավաքի ժամկետի ճիշտ վորոշումը. բանն այն ե, վոր կորնզանի սերմերը միաժամանակ չեն հասունանում. յերբ ներքևի սերմերը հասունացել են, վերևի սերմերը դեռ խակ են՝ ապասել, վոր բոլորը լրիվ հասունանան ու նոր հավաքել, անհնարին ե, վորովհետև ներքևի հասունացած սերմերը թափվում են ե անդիք են տալիս խոշոր կորուստներ: Թե յերբ հավաքել կորնզանի սերմը, այդ մասին յեղած գրականության մեջ գոյություն ունեն խոշոր տարածայնություններ:

Костычев-ը (26) հանձնարարում ե «Կորնզանի սերմահավաքը կատարել այն ժամանակ, յերբ վողկույզի սերմերի կեանքը հասունացել ե՝ չսպասելով վերևի սերմերի հասունացմանը»:

Клинген-ը (18) խորհուրդ ե տալիս «Թուսաստանի հարավային ե արևելյան մասերում, կլիմայի չոր լինելու պատճառով, կորնզանի սերմը հավաքել այն ժամանակ, յերբ վողկույզի վրագտնվող սերմերի մեկ յերրորդ մասը հասունացած կլինի, իսկ հարավ-արևմուտքում ու միջին սևահողերում, յերբ հասունացած

կլինի վողկույզի վրագտնվող սերմերի կեսը»: И. Травин-ը (25) առաջարկում ե «Կորնզանի սերմերը հավաքել այն ժամանակ, յերբ ներքևի ունդերի մեծամասնությունը գորշացել ե»: Д. И. Прянишников-ը ե И. В. Якушкин-ը (2) առաջարկում են «Կորնզանի սերմը հավաքել այն ժամանակ, յերբ վողկույզի վրագտնվող ներքևի ե միջին սերմերը հասունացել են»:

Г. Вернер-ը (17) հանձնարարում ե. «Կորնզանի սերմը հավաքել այն ժամանակ, յերբ վողկույզի վրագտնվող ներքևի սերմերը շագանկագույն են դարձել ու հասունացել են, միջին սերմերը հասունացել են կիսով չափ, իսկ վերևի սերմերը նոր են սկսել հասունանալ»:

П. А. Журавлев-ը (27) հանձնարարում ե. «Կորնզանի սերմը հավաքել այն ժամանակ, յերբ վողկույզի վրայի միջին սերմերը հասունացել են»: Проф. Харченко-ն (49) խորհուրդ ե տալիս «Կորնզանի սերմահավաքն սկսել այն ժամանակ, յերբ վողկույզի ներքևի ունդերը լրիվ հասունացել են, իսկ միջին ունդերի միայն մեկ յերրորդ մասն ե հասունացել»:

Պրոф. Троицкий-ն (11) առաջարկում ե. «Կորնզանի հունձն սկսել այն ժամանակ, յերբ ծաղկեփնջի ներքին ու միջին պտուղները հասունացել են»:

Նման կարծիքներ մեր մասնագիտական գրականությունից կարելի չի բերել տասնյակներով. չեմ խոսում մասսայական բրուշյուրների մասին: Չնայած նրան, վոր բոլորն ել արձանագրում են կորնզանի սերմերի ուժեղ թափվելու փաստը, սակայն միշտ ել այդ կարևորագույն խնդրի կողքով են անցնում, առաջարկելով բերքահավաքը կազմակերպել առավոտյան ժամին, իսկ շատերը, յինչևիով անհատական տնտեսության սխտեմից, առաջարկում են դաշտից հասունացած սերմերը նախ ձևքով հավաքել ու ապա նոր մնացածը մեքենայով: Թվածա հետազոտողները շատ վորոշակի կերպով հանձնարարում են կորնզանի սերմը հավաքել այն ժամանակ, յերբ ունդերի գոնե 50% -ը գորշացել — հասունացել ե: Այդպես ե վարվում Խորհրդային Միության կորնզանի սերմաբուծության հիմնական բազա հանդիսացող Ուկրաինան, ե այդպես են վարվում Խորհրդային Հայաստանի լեռնային շրջանների կորնզանությունները: Դեռ ավելին. հետազոտության ժամանակ մի շարք գյուղերում (Գյոզալուբա, Չոլաքար, Ղշաղ ե այլն) պարզվեց, վոր կորնզանի սերմը հավաքում են այն ժա-

մանակ, յերբ հասունացած կորնզանի վողկույզին մատով հարվածելիս սերմերը թափվում են:

Բոլորին հայտնի յե, վոր այդ ժամանակ սերմը հավաքելիս տեղի յե ունենում բավական մեծ կորուստ: Ներքևի հասունացած սերմերը քամուց, քաղող մեքենայի կամ գործիքի հարվածից կամ փոխադրելիս թափահարվելուց թափվում են: Իերքը նվազում է, վորի հետևանքով կորնզանի բաղձացման գործակիցը բավականին իջնում է: Այսպես, որինակ՝ հետազոտությունից պարզվում է, վոր այդ ժամանակ քաղելու պատճառով միայն դաշտում տեղի յե ունենում հետևյալ կորուստը.

Գետաթաղ	4,3	ցենտներ	մեկ	հեկտարից
Ալիդուլի	4,2	»	»	»
Սուխոյֆանտան	2,1	»	»	»
Նոր-ավան	2,9	»	»	»
Բալաք	2,5	»	»	»

Նույն գյուղերում ավելի մեծ կորուստ տեղի յե ունենում փոխադրելու ժամանակ, վորի հաշվելը բավականին դժվար է: Յեվ վոչ մի փորձնական կայանում չի ուսումնասիրվում այդ կարևոր խնդրի թեկուզ ագրոտեխնիկական կողմը, չի կազմակերպված կորուստների դեմ պայքար մղելու գործը, չեն մտահոգվում միաժամանակ հասունացող, չթափվող սորտերի ստեղծման մասին:

Վիեննայի գյուղատնտեսական դպրոցի պրոֆեսոր Crafft-ը յուր Die Pflanzenbaulehre-ում (?) գրում է. «Կորնզանի սերմի համար դաշտի ամենալավ մասից թողնվում է մի փոքրիկ կտոր, սերմահավաքը կատարվում է հետևյալ ձևով. կամ ձեռքով աստիճանաբար հավաքվում են հասունացած սերմերը, կամ գործիքով հավաքվում են այն պահին, յերբ ներքի ունդերը գորշացած են լինում, փոքրիկ խրճեր են կապվում և փոխադրվում տուն»:

Dr. Crafft-ի առաջարկած յեղանակի առաջին մասը պայմանավորված է անհատական մանր տնտեսությունների սխտեմով, սակայն յերկրորդ մասում, վորտեղ առաջարկում է կորնզանի սերմահավաքը կատարել այն ժամանակ, յերբ վողկույզի վրա գտնվող ներքևի ունդերը գորշացած են լինում, վորոչ չափով մտնենում է կորուստների դեմ պայքարի խնդրի լուծման. Dr. Crafft-ից միանգամայն անկախ, դեռ 1933 թվից սկսած սեր հետազոտությունները ցույց են տալիս, վոր կորնզանի սերմերը կարելի յե ավելի շուտ հավաքել, մազաչափ անգամ չիջեցնելով սերմի վորակական հատկանիշները, ընդհակառակը՝ դա պակասեց-

նում է, վորոչ ղեպքերում նույնիսկ իսպառ վերացնում տեղի ունեցող խոշոր կորուստները:

1934 թվին Գյուղատնտեսական ինստիտուտի հողամասի (Յերևան) միևնույն դաշտից մի քանի ժամկետներում կորնզանի սերմ հավաքվեց:

Առաջին նվազը քաղվեց 11/6, յերբ ունդերն ամբողջությամբ դեռ կանաչ էյին. սերմերի 60—70 տոկոսն էր միայն ձեվակերպվել:

Յերկրորդ » » 18/6-ի, յերբ ունդերը մուգ կանաչ գույնից փոխվել էյին բաց կանաչ գույնի, սերմերն ամբողջությամբ ձևակերպվել էյին, հեշտությամբ անջատվում էյին պատյանից և ներքևի 2 կամ 3 ունդերը գորշ գույն էյին ստացել: 24/6-ի, յերբ ունդերն ամբողջությամբ բաց կանաչ գույնի էյին, ներքևի ունդերի 10—20 տոկոսը գորշացել էր:

Չորրորդ » » 28/6-ի, յերբ ունդերի 50—60 տոկոսը գորշացել—հասունացել էր:

Հնձելուց հետո բույսն անմիջապես փոխադրեցինք կալսելու վայրը, խրճերն ամբողջությամբ, առանց քանդելու թողինք մինչև չորանալը ու այնուհետև կալսեցինք: Ստացված սերմերը յենթարկելով մի շարք անալիզների, ավին հետևյալ արդյունքը (տես աղյուսակ № 50):

Թվերը ցույց են տալիս, վոր կորնզանի սերմը դեռ լրիվ չհասունացած հավաքելու ղեպքում սերմացվի վորակն ամենևին էլ չի ընկնում, որինակ՝ 10 որ առաջ, այսինքն 18/6-ի հավաքած սերմը գրեթե վոչնչով չի տարբերվում 28/6-ի հավաքած սերմից:

Սերմի վորակի խնդրում խոշոր դեր խաղացող ունդերի և մերկ սերմերի բացարձակ քաշը, ծավալը և, վերջապես, ամենակարևորը—ծլունակությունը շուտ հավաքելու ղեպքում գրեթե նույնն են, ինչ ուշ, լավ հասունացած շրջանում հավաքելու ղեպքում:

Նույն թվերն են ստացվում, յերբ սերմի հավաքը հասունաց-

Յերբեր և քաղվել	Սերմեր հասունացման վոր շրջանում	1000 ունդի բացարձակ քաշը	1000 սերմի բացարձակ քաշը	1000 ունդի ծավալը	Ճլունակության տոկոսը
11/6-ին	Ունդերն ամբողջությամբ դեռ կանաչ են, սերմերի 60—70%օ-ն է միայն ձեվակերպված . . . . .	4,16	8,6	13,64	27,3
18/6-ին	Ունդերը մուգ կանաչ գույնից փոխվել են բաց կանաչ գույնի, սերմերն ամբողջությամբ ձեակերպվել են, սերմերի յերկու-րեք ունդերը գորշացել են	20,1	13,1	14,02	64,7
24/6-ին	Ներքևի ունդերի 10—20 % և գորշացել է . . . . .	20,15	13,2	15,52	65,2
28/6-ին	Ունդերի 50—60%օ-ը գորշացել, հասունացել է	20,21	13,35	15,84	67,7

ման տարբեր շրջաններում կաղմակերպում են մեկ թփի սահմաններում:

Ինչով բացատրել այս յերևույթը, ինչու լրիվ չհասունացած շրջանում հավաքած սերմի վորակը (բացարձակ քաշը, ծավալը, ծլունակությունը) գրեթե նույնն է, ինչվոր լրիվ հասունացած շրջանում հավաքելու դեպքում: Այս յերևույթը բացատրելու համար բերենք մի աղյուսակ. 1934 թ. հավաքած սերմերի ծլունակությունը վորոշելիս մենք նկատեցինք, վոր սերմի ծլունակությունն սկսած քաղի մոմենտից բարձրանում է (տես աղյուսակ № 51):

Աղյուսակը ցույց է տալիս սերմերի ծլունակության բարձրացումը սկսած հավաքի մոմենտից. աղյուսակից յերևում է նաև այն, վոր ծլունակության բարձրացումը տևում է մինչև հաջորդ տարվա գարունը. մաքսիմում ծլունակությունը հաջորդ տարվա ապրիլ ամսին է, յերբ ծլունակությունը, համեմատած քաղի մոմենտի ծլունակության հետ, ավելացել է առաջին դեպքում 35,07 տոկոսով, յերկրորդ դեպքում՝ 32,5 տոկոսով:

Աղյուսակից յերևում է նաև այն, վոր շուտ հավաքած կորընգանի սերմերի մասնակի ցածր ծլունակությունը՝ հավաքման մոմենտին, համեմատած ուշ հավաքածի հետ, աստիճանաբար հե-

Սերմի հավաքման ժամկետը	Հասունացման վոր շրջանում											
	1934 թ. 7-րդ	8-րդ	9-րդ	10-րդ	11-րդ	12-րդ	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
186—1934 թ.	52,6	64,7	68,92	71,3	74,07	79,3	84,8	86,2	87,3	87,3	87,3	87,3
286—31 թ.	54,7	67,7	69,8	74,2	76,5	78,4	84,3	86,4	87,2	86,9	87,3	87,9



տագալում հավասարվում ե: Ինչ խոսք, վոր այստեղ տեղի յե ունենում հետքադյա հասունացում, վորտեղ ֆերմենտների կուտակումը և նրանց վերադասավորումը վճռական դեր են խաղում: Լարորատորական պահմաններում ապացուցելով, վոր կորընգանի սերմի վորակը շուտ հավաքելու դեպքում չի իջնում, անհրաժեշտ յեղավ նաև պարզելու, թե ինչ ազդեցություն և թողնում այդ միջոցառումն արտադրության մեջ: Այդ նպատակով մի շարք կոլտնտեսություններում 1935 և 1936 թվերին հետևյալ ձևով հավաքեցինք կորնգանի սերմը: Դաշտի մի մասը հավաքեցինք այն ժամանակ, յերբ ունդերը մուգ կանաչ գույնից փոխվել էին բաց կանաչ գույնի, սերմերն ամբողջությամբ ձևակերպվել էին, հնարավոր եր լինում վերևի ծայրի ունդերը սերմերից աղատել և յերբ ներքևի յերկու կամ յերեք ունդերը գորշացել էին: Դաշտի մյուս մասը հավաքեցինք այն ժամանակ, յերբ կոլտնտեսականներն են ըստ սովորության հավաքում, այսինքն՝ յերբ ունդերի 50—60 տոկոսն եր գորշացել: Այդ աշխատանքները կազմակերպել ենք Նոր-ավանում, Բալաքում, Մարտիրոսում, Սուխոյ-Ֆանտանում: Հունձը կատարելուց հետո հենց նույն որը խոտը փոխադրվել է կալսելու վայրն ու չորանալուց հետո կալսվել: Ստացած սերմերը յենթարկելով մի շարք անալիզների, ստացանք հետևյալ արդյունքը՝ (տես աղյուսակ № 52):

ԱՂՅՈՒՍԱԿ № 52

№ ըստ կ.	ՎՍՅՐԸ	Հավաքելու ժամկետը	Սերմերի հասունացման շրջանը	1000 ունդի քաշը	1000 սերմի քաշը	1000 ունդի ծավալը	Սրունակ ու թյան տոկոսը	Բերքատվությունը հեկտարից սերմաներով	Բերքի բարձրացման տոկոսը
1	Սեյֆուլու	4/8	Ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել է	20,4	13,4	14,97	65,1	10,3	320
		15/8	Ունդերի 50—60% ը գորշացել, հասունացել է	21,4	13,7	15,3	66,3	3,2	100
2	Բալաք . .	6/8	Ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել է	19,9	13,25	15,1	64,2	9,7	369

№ ըստ կ.	ՎՍՅՐԸ	Հավաքելու ժամկետը	Սերմերի հասունացման շրջանը	1000 ունդի քաշը	1000 սերմի քաշը	1000 ունդի ծավալը	Սրունակ ու թյան տոկոսը	Բերքատվությունը հեկտարից սերմաներով	Բերքի բարձրացման տոկոսը
3	Նոր-ավան	16/8	Ունդերի 50—60% ը գորշացել, հասունացել է	20,3	13,35	15,42	66,7	2,7	100
		5/8	Ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել է	21,1	13,0	14,8	63,8	9,8	264
4	Սուխոյ-Ֆանտան	16/8	Ունդերի 50—60% ը գորշացել, հասունացել է	21,6	13,15	15,25	66,4	3,7	100
		16/7	Ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել է	20,7	13,37	15,2	65,7	10,2	329
5	Մարտիրոս	26/7	Ունդերի 50—60% ը գորշացել է	21,2	13,5	15,3	67,8	3,1	100
		25/7	Ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել է	21,3	13,7	15,1	63,2	16,91	—
		4/8	Ունդերի 50—60% ը գորշացել է	21,2	13,8	15,2	70,3	3,4	—

Այս աղյուսակը կրկին անգամ ապացուցում է, վոր կորընգանի սերմը շուտ հավաքելով, այսինքն այն ժամանակ, յերբ հիմնականում դեռևս ունդերից միայն 2 կամ 3-ը ներքևից հաշված, գորշացել են, հասունացել են՝ չիջեցնելով հանդերձ սերմացվել վորակը, կորուստների դեմ պայքարելու ամենալավ միջոցներից մեկն է հանդիսանում: Պարզվում է նաև, վոր շուտ հավաքելու հավաքի ճիշտ ժամանակի ընարության դեպքում, կորնգանի սերմի բերքատվությունը բարձրանում է միջանի անգամ:

Այսպես, որինակ՝

1. Սեֆուլուցում 3,21 անգամ
2. Բալաբում 3,5 »
3. Նոր-Ավանում 2,64 »
4. Սուխոյ-Ֆանտանում 3,29
5. Մարտիրոսում 4,9

Մերմի հավաքը շուտ կազմակերպելիս բարձր և լինում նաև ստացված դարմանի կերային արժեքը, վորովհետև տերևների զգալի մասը շուտ հավաքելու դեպքում չի թափվում, ցողունները համեմատաբար ավելի քնքուշ են լինում, քան ուշ հավաքելու դեպքում, յերբ ցողունները զրկված են լինում տերևներից և ամբողջութամբ փայտանում են (տես աղյուսակ № 53):

Աղյուսակը համողիչ կերպով ապացուցում է, վոր սերմահավաքը շուտ կազմակերպելու շնորհիվ ստացված դարմանն անհամեմատ ավելի պիտանի յե: Շուտ հավաքելու դեպքում հում պրոտեյինը 70% -ով, հանքային աղերը (մոխիրը) 70% -ով, ճարպը 56 տոկոսով, անազոտ եքստրակտային նյութերը 33% -ով ավելի յեն լինում, իսկ թաղանթանյութերը 53% -ով պակաս են լինում, քան ուշ հավաքելու դեպքում: Ուշ հավաքելու դեպքում վոչ միայն բացարձակ բերք ցած է լինում, այլև տեղի յե ունենում սնընդանյութերի մեծ «կորուստ»:

Մերմը շուտ հավաքելու դեպքում դաշտն ազատվում է 10—15 որ առաջ և ջրովի պայմաններում հնարավոր է լինում սերմը հավաքելուց հետո այդ դաշտից կորնգանի խոտի լրացուցիչ բերք ստանալ: Այսպիսով, կորնգանի սերմահավաքման ամենաճիշտ ժամանակը պետք է հաշվել այն, յերբ ամբողջ վողկույղի ունդերը մուգ կանաչ գույնից փոխվում են բաց կանաչ գույնի, յերբ սերմերն ամբողջութամբ ձևակերպվել են և վերևի սերմերը հեշտութամբ ունդերից բաժանվում են, յերբ, հիմնականում, ներքևի 2 կամ 3 ունդը դորշացել, հասունացել են:

Ուրեմն՝ կորնգանի սերմահավաքի ճիշտ ժամանակի ընտրութամբ միայն կորստից ազատած կլինենք և խնայած թեկուզ միայն Խորհրդային Հայաստանում տարեկան միքանի հազար ցենտներ կորնգանի սերմ:

Յերկու խոսք կորնգանի սերմերի հետքաղյա հասունացման պրոցեսի կազմակերպման մասին:

Վերև բերված աղյուսակից պարզվեց, վոր կորնգանի սերմի հասունացումը չի դադարում հավաքելու մոմենտից, այլ շարունակվում է նաև քաղելուց հետո խրձերում, կալում, պահեստում, հետևապես այդ պրոցեսի համար նորմալ պայմաններ չստեղծելը

Աղյուսակ № 53

Մերմի հավաքման ժամկետը	Գ ւ ա ը մ ա ն ի ր ք ե լ ե մ ե կ ա ն կ ա մ կ ա մ						Իսպղաղուզն մթմզմ ձգորմուս և զոմոտո	Իսպղաղուզն մթմզմ վրմզմ
	մրսջ	մկվսր րրսչ	սմն րրսչ	տանը	Խմոց րրսչ	թյանդ զվ -տոսիտոմոթգ տանուղ		
Հուլիսի 28-ին . . . . .	10,08	6,38	11,69	1,87	1,97	40,25	61,3	16,91
Ոգոստոսի 7-ին . . . . .	9,02	8,73	6,83	1,10	1,26	37,44	54,7	3,4

Աղյուսակը ցույց է տալիս, վոր կորնգանի սերմերը միջինում 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ ունդերը 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ մուգ կանաչ գույնից փոխվելու անցիլ են լինում կանաչ գույնի և ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել են . . . . .

Աղյուսակը ցույց է տալիս, վոր կորնգանի սերմերը միջինում 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ ունդերը 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ մուգ կանաչ գույնից փոխվելու անցիլ են լինում կանաչ գույնի և ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել են . . . . .

Աղյուսակը ցույց է տալիս, վոր կորնգանի սերմերը միջինում 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ ունդերը 50—60% -ով գորշացել են . . . . .

Յերբ մուգ կանաչ գույնից փոխվելու անցիլ են լինում կանաչ գույնի և ներքևի 2 կամ 3 ունդը գորշացել են . . . . .

ԱՂՅՈՒՍԱԿ № 54

	Համարը 1891 թ.— 1917 թ.	Նախկին .907 թ.— 1917 թ.	Նախկին 1922 թ.— 1926 թ.	Յերևան 1933 թ.— 1936 թ.	Ծանոթու- թյուն
Ծրուակությունը . .	70,0	69,3	69,6	69,29	
Մաքրությունը . . .	97,9	95,9	94,8	86,17	

մահավաքը ժամանակին չկատարելիս գրկվում ենք առողջ սերմերից, ուրեմն սերմահավաքը ժամանակին կատարելիս վոչ միայն պայքարում ենք կորուստների դեմ, այլև բարձրացնում ենք սերմի վորակը:

Սերմի վորակի վրա ազդում է նաև խրձերի չափը: Խրձերը պետք է անպայման կապել սովորականից ավելի փոքր, վորպեսզի խրձերի կենտրոնում գտնվող սերմերը շորմալ հասունանան և վոչ թե նեխեն: Սերմի վորակի վրա ազդում է խրձերի չորացման պրոցեսի կազմակերպումը: Փորձերը ցույց են տալիս, վոր ստվերում աստիճանաբար չորացնելը բարձրացնում է սերմի ծրուակությունը, մինչդեռ արևում անմիջապես չորացնելը ծրուակությունը դեղնում է (տես աղյուսակ № 55):

ԱՂՅՈՒՍԱԿ № 55

Յերբ և հավաքվել	Խրձերը չորացնելու պայմանները	Տեսողությունը	Ծրուակությունը
186—1935 թ. . . . .	Սովերում	7 ոբ	77,4
» » » . . . . .	Արևի տակ	3 »	73,5

Աղյուսակը ցույց է տալիս, վոր ստվերում չորացնելիս ծրուակությունը 4<sup>0</sup>/<sub>100</sub>-ով ավելի յե, քան արևի տակ չորացնելիս: Սերմի վորակի վրա ազդում է նաև թարմ սերմերի խնամքի կազմակերպումը: Թարմ սերմերի խնամք ասելով հասկանում ենք առաջին հերթին, նախքան պահեստ տանելը սերմերը կանոնավոր չորացնելը և յերկրորդ՝ պահեստի չոր լինելը: Այս պայմանները նկատի չունենալու պատճառով Գորիսի շրջանի Կյորիի կորուստահալությունն անցյալ տարի ստացած կորնգանի ծրուակությունը

թյունը հասցրել էր 3—5 տոկոսի: Վորպես յեզրակացություն պիտի ընդգծել, վոր կորնգանի սերմի վորակը հիմնականում կախված է բերքահավաքի կանոնավոր ու ճիշտ կատարումից և թարմ սերմերի խնամքի ճիշտ կազմակերպումից:

XII. ԿՈՐՆԳԱՆԻ ՍԵՐՄԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մոտ ապագայում, ցանքաշրջանառության լրիվ իրացման պայմաններում, Խորհրդային Հայաստանի լեռնային շրջաններում տարեկան ցանվելու յե 30—35 հազար հեկտար կորնգան. հետևելով այդ ժամկետին անհրաժեշտ է ունենալ 30—35 հազար ցենտներ կորնգանի սերմ: Ահա այդ տեսանկյան տակ պետք է կազմակերպել կորնգանի սերմաբուծությունը Խորհրդային Հայաստանում: կորնգանի սերմի այդ քանակը հնարավոր է մեղմոտ ստանալ—առայժմ առանց նկատի ունենալու տեսակը (ինչպես մինչև հիմա յե կատարվել): Բայց խնդրի այս ձևի լուծումը միակողմանի յե, քանի վոր այդ դեպքում աչքաթող են արվում կորնգանի «սորտերի» հետագա բարելավումը, լավորակ պուպուկորնգանի «սորտերի» հետագա բարելավումը, տեղական կորնգանների բազմացումը և, լացիանների տարածումը, տեղական կորնգանների թանգարտեք վոր ամենակարևորն է, տեղական կորնգանների թանգարտեք հատկանիշների պահպանումը: Սակայն, անկախ այդ հանգամանքից, տեղական կորնգանների քիչ լինելու պատճառով, առաջիկա յերկու տարում մենք պետք է ոգտագործենք այս ուղին:

1937 թվին Հայաստանում ցանվել է 2400 հեկտար կորնգան			
Հին ցանքեր կային	3237	»	»
Ընդամենը	5637	»	»

Յեթե 1938 թվին այդ 5637 հեկտարից 25<sup>0</sup>/<sub>100</sub>-ը, այսինքն 1514 հեկտարը հաշվենք սերմացվի համար անվորակ ու վարելու յինթակա, մնացած 4543 հեկտարի միայն 50<sup>0</sup>/<sub>100</sub>-ը (ի վիճակի յին ավելին) թողնենք սերմի համար, այսինքն 2700 հեկտարը և հեկտարին ստանանք միայն 6 ցենտներ սերմ, ապա 1939 թվին կունենանք 16200 ցենտներ սերմ. հետևապես 1939 թվին առանց դրսից սերմ բերելու ի վիճակի կլինենք Հայաստանում կատարել մոտավորապես 17000 հեկտար կորնգանի ցանք: 1939 թվին մենք կունենանք 38 թվի ցանքի հետ միասին մոտ 10.000 հեկտար կորնգանի ցանք, վորի 50<sup>0</sup>/<sub>100</sub>-ը, այսինքն՝ 5000 հեկտարը թողնենք

լով սերմի համար, և ստանալով հեկտարից թեկուզ միայն 7 ցենտ- ներ սերմ, 1940 թվին կուենհանք 35.000 ցենտներ կորըն- գանի սերմ, վորի շնորհիվ ի վիճակի կլինենք բավարարել ցան- քաշը շանաու-թյան համար պահանջվելիք կորնգանի սերմացվի կարիքը:

Սակայն սա խնդրի լուծման ամենահեղա ուղին ե: Մեզ ան- հրաժեշտ ե տեղական կորնգանի բազմացման գործը կանոնավոր կազմակերպել: Ինչպես տեսանք, Հայաստանի ուսումնասիրված հինգ շրջաններում տարածված տեղական կորնգանների հին ցան- քերի քանակը հավասար ե 1768 հեկտարի, չհաշված մի շարք շըր- ջաններում (Յալին, Բասարգեչար, Բայազետ և այլն) յեղած տե- ղական կորնգանների փոքրաքանակ ցանքերը, վորոնք պարզ ե, վոր մաքուր չեն: Այդ տեսակետից անհրաժեշտ ե առայժմ չհաշ- վել նաև Գորիսի շրջանը, վորովհետև, ինչպես նշեցինք վերևում, այնտեղ ևս ցանքերը խառնուրդ են, ուրիմն մնում ե չորս շըր- ջաններում ընդամենը 1620,7 հեկտար կորնգանի ցանք: Յեթե 1938 թվին սերմի համար թողնենք վերոհիշյալ տարածությունից միայն 1000 հեկտարը և հեկտարից ստանանք թեկուզ 7 ցենտ- ներ բերք, ուրիմն 39 թվի ցանքի համար կուենհանք 7000 ցենտ- ներ տեղական կորնգանի լավորակ սերմ: 1939 թվին այդ սեր- մով ապահոված կլինենք 10.000 հեկտար կորնգանի ցանք, յեթե հեկտարին ցանելու լինենք 0,7 ցենտներ: Այդ տարածությամբ ցանքը պետք ե նախ տեղավորենք հիշյալ չորս շրջաններում (Սիսիան, Մարտունի, Աղիզբեկով և Միկոյան), ապա նոր միայն, ավելցուկ ունենալու դեպքում, Գորիսում, Նոր-Բայազետի և Բա- սարգեչարի ու Ախտայի շրջաններում: 1939 թվին անհրաժեշտ ե Գորիսի, Նոր-Բայազետի, Բասարգեչարի և Ախտայի քաղաքներում յե- դած կորնգանների բոլոր հիմ ցանեքը խոսհենից հետո վառել, վո- րով կվնջեցանեմք այդ քաղաքներում յեղած կորնգանի On. viciae- folia-ն, այդինքն՝ ուկրաինական սեսակը և կապահովենք տեղական կորնգանների մատուցումն այդ քաղաքներում: 1939 թվին մենք կուենհանք 35 թվի ցանքի հետ միասին մոտավորապես 3000 հեկտար կորնգանի հին ցանքեր: Յեթե այդ ցանքերի միայն 50 %-ը թողնենք սերմի համար, այսինքն՝ 1500 հեկտարը և հեկ- տարից ստացանք 8 ցենտներ բերք, ապա 1940 թվի ցանքի հա- մար կուենհանք 12000 ցենտներ կորնգանի սերմ, վորը կապահո- վի 17143 հեկտար ցանքի պահանջը, յեթե հեկտարին ցանելու լինենք 0,7 ցենտներ: Այդ տարածությունը պետք ե տեղավորենք

նախ հինգ շրջաններում (Սիսիան, Գորիս, Մարտունի, Աղիզբե- կով, Միկոյան), ապա՝ Բայազետում, Բասարգեչարում, Ախտայում, կով, Միկոյան), ապա՝ Բայազետում, Բասարգեչարում, Ախտայում, շըրջանների իսկ ավելացած սերմը Ղափուսի, Մեղրու և Կոտայքի շըրջանները վերին գյուղերին բաշխել: Այսպիսով կստացվի մի ամբողջական մասսիվ (Չանգեղուր, Դարալագյաղ և Սեանի ափագան), վորտեղ տարածված կլինեն միայն տեղական կորնգաններ: 1940 թվին կուենհանք 10.000 հեկտար կորնգանի On. antasiatica-ի շարքա- կուենհանք 5000 հեկտարը թողնելով սերմի հա- ցան հին ցանքեր, վորոնցից 5000 հեկտարը թողնելով սերմի հա- մար և հեկտարից ստանալով 8 ցենտներ սերմ, կուենհանք 40.000 ցենտներ սերմ, վորը 1941 թվին վոչ միայն կբավարարի թոր- հըրդային Հայաստանի բոլոր կորնգանացան շրջաններին պահան- ջը, այլև հնարավոր կլինի սերմ արտահանել: 1941 թվին մաքուր ջը, տեղական սերմով կարող ենք ապահովել Հայաստանի բոլոր շըր- ջանները, հետևապես 1941 թվին խոտհունձից հետո պիտի ան- պայման վարվեն թորհրդային Հայաստանում կորնգանի On. vi- ciaeifolia տեսակին պատկանող բոլոր ցանքերը:

### XIII. ՅԵՉՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

Շարագրելով On. antasiatica-ի բիրտղիական, բուսաբանա- կան և տնտեսական հատկանիշներն ու այն համեմատելով մեզ մոտ բավականին մեծ տեղ բռնող On. viciaefolia-ի հետ, յեկանք այն յեզրակացության, վոր On. antasiatica-ն, այսինքն տեղա- կան կուլտուրական կորնգանները, մշակվելով դարեր շարունակ, ուժոված են կարևոր հատկանիշներով՝ այն ե.

1. Ցանքի առաջին տարին ծաղկում և ջրովի պայմաննե- րում տալիս են նույն տարում 20—40 ցենտներ չոր խոտ:
2. Համեմատաբար ավելի ձմադինացկու են:
3. Ավելի յերաշտագինացկու են:
4. Հնձվում են 2—3 անգամ:
5. Բաղից հետո ունեն աճման ավելի արագ թափ:
6. Թփերը կանգուն են:
7. Սերմարտադրողականությունն ավելի բարձր ե:
8. ԻնքնաՖերտիլությունը բարձր ե:
9. Ունեն իմունիտետ հանդեպ մի շարք սնկային հիվան- քաւթյունների:
10. Ունեն բարձր արտադրողականություն՝ տալով հեկտա-

ըից ջրովի պայմաններում մինչև 117 ցենտներ չոր խոտ, անջրըի պայմաններում՝ 60—70 ցենտներ չոր խոտ:

11. Տալիս են ավելի վորակյալ կեր:

12. Մերձերն ավելի համերաշխ են ծլում և ալյն:

Ահա այդ ամենը մեզ հնարավորություն է տալիս խորհրդային Հայաստանի կորնդանացանության գործում առաջնություն տալ *On. antasiatica*-ի ձևերին, վոր *On. viciaefolia*-ն մեր պայմաններում անհամեմատ ավելի պակաս արտադրողականություն ունի:

Ինչպես տեսանք, կորնգանն անջր ղի պայմաններում, այն ել յերբ մթնոլորտային տեղումները 400 մմ-ից չեյին անցնում, տալիս է հեկտարից միջին հաշվով 57—60 ցենտներ չոր խոտ, իսկ մյուս կողմից՝ մեր կորնգանացանությունը տարվում է միայն ջրովի հողերում: Այն շրջաններում, ուր մթնոլորտային տեղումները 400 մմ-ից ավելի չեն, իսկ համարյա թե բոլոր շրջաններն այդպես են, պետք է կորնգանն անպայման մշակել անջրըի հողերում, իսկ ջուրն ոգտագործել ավելի ուսցիտնալ կերպով մյուս կուլտուրաների համար (բանջարանոցային, արմատապալարապտուղների և այլն համար):

Կորնգանացանությանը մի շարք շրջաններում հատկացնում են պարարտ, հարուստ հողերը, մոռանալով, վոր կորնգանն ի վիճակի չէ ինքն ուրիշ կուլտուրաների համար հող ստեղծել: Մեր շրջաններում քիչ չեն այնպիսի հողերի տարածությունները, վորոնք կրային լինելու, վարելաշերտը փոքր, աղքատ լինելու հետևանքով ուրիշ կուլտուրաների, հատկապես հացահատիկների համար այնքան ել պիտանի չեն, լավագույն դեպքում վատ բերք են տալիս: Անհրաժեշտ է առաջին հերթին կորնգանը ցանել նման հողերում, վորով միևնույն ժամանակ կստեղծենք նպաստավոր պայմաններ հացահատիկների բերքատվության բարձրացման համար, հետևապես կորնգանացանությամբ կընդարձակենք նաև հողային տարածությունները մյուս կուլտուրաների համար: Մեր ուսումնասիրությունից պարզվում է, վոր կորնգանի համար վտանգավոր չե մեզ մոտ տեղի ունեցող ցածր ջերմաստիճանը: Այստեղից պիտի գալ այն յեզրակացության, վոր կորնգանի ցանքերը հնարավոր է բարձրացնել շատ ավելի բարձր՝ չվախենալով նրանց ցրտահարվելուց: Կորնգանը պետք է ոգտագործել նաև սեյսմիկների դեմ պայքարելու խնդրում: Մեր շրջաններում պակաս չեն այնպիսի հողերի, տարածությունները, վորոնք գտնվում են մեծ թեքություն ունեցող լանջերի վրա և անընդհատ վարվելով՝

շարունակ, անձրևներից առաջացած սելավների հետևանքով, վաղվել, աղքատացել են ու այլ ցանքերի համար այնքան պիտանի չեն: Մինչդեռ բազմամյա թիթեռնածաղկավորներից միայն կորնգանով կարող ենք այդ դաշտերն զբաղեցնել, վորով կպայքարենք նաև սելավների դեմ և յերկրորդը՝ կվերականգնենք այդ հողերի արտադրողականությունը:

Ուսումնասիրությունից պարզվում է այն, վոր կորնգանի ազդրոտեխնիկան, մյուս կուլտուրաների հետ համեմատած, գտնվում է վատթար պայմաններում: մինչև հիմա չեն կանոնավորել կորնգանի ցանքի ժամանակի, ձևի, խտության, խորության, ինչպես նաև հողի նախապատրաստման խնդիրները:

Ժամանակն է համոզվել, վոր կորնգանի բերքատվությունը կրկնակի, յեռակի անգամ կբարձրացնենք, յեթե հողը դեռ աշնանից կանոնավոր նախապատրաստենք, մշակենք այնպես, վոր նպաստի խոնավության կուտակմանը, մուլախոտերի վոնչնացմանը, այերացիոն պայմանների ստեղծմանը և այլն: Վատ է դրված նաև կորնգանի ցանքերի խնամքի գործը, մինչդեռ առաջավոր կուլտուրների փորձն ապացուցում է, վոր դրանից ել շատ բան է կախված: Անհրաժեշտ է առաջին տարին պայքարել մուլախոտերի գեմ: Սխալ է դրված ջրելու գործը. ջուրը հաճախ շռայլվում է կորնգանի դաշտերում: Կորնգանը չպետք է ջրել ծաղկման շրջանում, ինչպես Սիսավանն է կատարել, վորովհետև յեթե դա խոտի համար է, կերն ստացվում է ջրառատ և ուշ է չորանում, իսկ յեթե սերմի համար է, սերմարտադրողականության տոկոսը ցածր է լինում:

Կորնգանի սելեկցիան, համեմատած մյուս կերպրույսերի հետ, գտնվում է սաղմնային վիճակում: Ինչպես մյուս յերկրներում, մեզ մոտ ել այդ նպատակների համար պետք է ոգտագործվեն տեղական կուլտուրական կորնգանների մի շարք արժեքավոր հատկանիշները, այն է՝ բույսի բարձրությունը, մերկ լինելը, տերևների խոշոր լինելը, թփակալման և տերևակալման աստիճանի բարձր լինելը, ծաղկման շրջանում ներքևի տերևների չթափվելը և այլն:

Իրողիական հատկանիշներից — հարից հետո աճման արագ թափը, ձմռադիմացկունությունը, յերաշտադիմացկունությունը, բարձր ինքնաֆերտիլությունը, իմունիտետը և այլն:

Տնտեսական հատկանիշներից — խոտի բարձր արտադրողա-

կանությունը, սերմարտադրողականութունը, մեկ միավոր կանաչ մասսայից մեծ քանակութեամբ չոր խոտ ստանալը և այլն:

Բացի տեղական կուլտուրական կորնգաններէց անհրաժեշտ է ոգտագործել նաև վայրի տեսակները, վորոնք տարածված են Հայաստանի չոր, քարքարոտ մասիջներում: Անհրաժեշտ է այդ տեսակներէց ոգտագործել նրանք, վորոնք համեմատաբար ավելի ցրտադիմացկուն (On. oxydonta, On. oxytropoides), յերաշտադիմացկուն (On. trans, On. altis) են, թիակալման բարձր եներդիա ունեն (On. transcaucasica, On. altissima), սերմը չթափելու (On. hajastanii, On. cadmea), ներքևի տերևները չթափելու հատկութիւն ունեն (On. altissima, On. hajastanii, On. cadmea) և այլն, վորոնք վայրի կորնգաների մոտ ավելի զարգացած են: Ահա վորտեղից պետք է սկսել կորնգանի սելեկցիոն գործը մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում. ընդգրկելով յեկանյութի մեջ տեղական թե կուլտուրական և թե վայրի կորնգանի ներկայացուցիչներին՝ սելեկցիայում անշուշտ մեծ արդյունքների կհասնենք: Կորնգանի սելեկցիան պահանջում է բավական յերկար ժամանակ, վորի հետ զուգընթաց ավելի հեշտ մեթոդներով ի վիճակի յենք խոշոր աշխատանք կատարելու. այսպես, որինակ՝ ուսումնասիրութիւններից պարզվում է, վոր Դարաբասի ձորի կորնգանի ցանքերում բավական մեծ տոկոս կազմող Դարաբասի կորնգանի տիպը կարելի յե առանձնացնել, բազմացնել, նույնը նաև Խաչիկի և Մարտիրոսի կորնգանները, վորոնք առանց սելեկցիայի յերկարատե աշխատանքի ի վիճակի յեն բավարարելու արտադրութեան պահանջները: Պետք է դուրս գալ կորնգանի սերմաբուծութեան ներկա խառնիճաղանձ վիճակից, պետք է այդ գործն ամուր հիմքերի վրա դնել: Մեր լեռնային շրջանների կուլտանտեսութիւններն ունեն բոլոր պայմաններն այդ գործն իրականացնելու համար. այդ խնդրում խոշոր դեր ունի կորնգանի սերմաբուծութեան ազրոտելիսիկան, նրա վողջ սիստեմի կիրառումը: Պակաս չե նաև սելեկցիոն ոգտագործման նշանակութիւնը. անհրաժեշտ է կորնգանացան կուլտանտեսութիւններում զարգացնել մեղվաբուծութիւնը:

Ուսումնասիրութիւնից պարզվում է, վոր կորնգանը սերմի համար կարելի յե թողնել ցանքի յերկրորդ տարվանից սկսած ամեն տարի մեկական անգամ, առանց մաղաչափ անգամ հարվածելու կորնգանի հետագա բերքատվութեանը:

Սերմի բերքատվութեան բարձրացման խնդրում, ինչպես

տեսանք, խոշոր և նաև սերմի բերքաձագաքի ժամանակի ճիշտ ընտրութեան դերը. սերմի համար պետք է կորնգանը հավաքել այն ժամանակ, յերբ ոգտաշտում այլևս ծաղիկներ չկան, յերբ ունդերն ամբողջութեամբ մուգ կանաչ գույնից փոխվել են բաց կանաչ գույնի և յերբ ներքևի յերկու կամ յերեք ունդերը գորշացել, հասունացել են: Այդ ժամանակ հավաքած սերմերն առողջ են լինում, կորուստ քիչ են տալիս, ստացված դարմանը վորակով է լինում, սերմի վորակն էլ բարձր է լինում: Սերմի վորակը մեծ չափով կախված է հետքաղյա հասունացման կանոնավոր կազմակերպումից. անհրաժեշտ է հարելուց անմիջապես հետո փոքրիկ խրձեր կապել, դրանք փոխադրել կախելու վայրը, ըստ հնարավորութեան խրձերի չորացումը կազմակերպել ստվերում, կախելուց հետո սերմերը կանոնավոր չորացնել ու տեղավորել չորացուսավոր պահեստներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. И. Сталин . . . . . Отчетный доклад XVII съезду партии о работе ЦК ВКП (б), 26 января 1934 г.
2. » . . . . . Речь на совещании передовых комбайнеров и комбайнеров, 1-го декабря 1936 г.
3. Н. И. Вавилов . . . . . Ботанико-географические основы селекции с. х. Гиз 35 г. Москва.
4. Ч. Пайпер . . . . . Многолетние кормовые травы.
5. Альфонс Де-Кандоль L'origine Des plantes cultives.
6. G. Krafft . . . . . Die Pflanzenhaulehre Berlin 1908 г.
7. Н. Н. Кудешов . . . . . Эспарцет (растениеводство СССР т. 2).
8. » . . . . . Эспарцет. ВИР 1931 г. Ленинград.
9. Н. А. Троицкий . . . . . Дикорастущие кормовые растения Закавказья ВИР 1931 г. Ленинград.
10. » . . . . . Эспарцет (на армянском языке) 1935 г. Ереван.
11. » . . . . . К вопросу о роли гибридизации в процессе видообразования. Труды по прикладной ботанике ген. и сел. 19 (2).
12. М. Г. Туманян . . . . . Высотная зона культурных растений Армении. 1928 г.
13. А. А. Гроссгейм . . . . . Эспарцеты Кавказа ч. I и II, записки Н. пр. отдела Тиф. бот. сада, вып. 5 и 6, Тбилиси 1926—28 г.
14. » . . . . . Флора Кавказа, т. II, Тбилиси 1930 г.
15. » . . . . . Краткий очерк растительного покрова Арм. ССР, Тбилиси, Ереван 28 г.
16. Г. Вернер . . . . . Возделывание кормовых растений, перевод с немецкого. Ленинград 30 г.
17. Клингген . . . . . Кормовые растения I—III 1908 г.
18. Б. Вакар . . . . . Важнейшие кормовые травы. Омск. 1930 г.
19. Д. Н. Прянишников Частное земледелие, Сельхозгиз 1931 г. 8-ое издание.
20. Д. И. Прянишников  
и В. Якушин . . . . . Растения полевой культуры (частное земледелие) 9 изд. 1936 г. Москва.
21. Х. Мириманян . . . . . Почвы Закавказья. Ереван 1936 г.
22. В. Р. Вильямс . . . . . Луговое хозяйство и кормовая площадь 1933 г.

23. И. Травин . . . . . Особенности культуры эспарцета на семена. Журнал семеноводство № 4 1933 г.
24. Костычев . . . . . Возделывание кормовых трав. 1895 г.
25. П. Д. Журавлев . . . . . Культура многолетних травянистых растений на семена. Сельхозгиз 1931 г. Москва.
26. А. К. Магакян . . . . . Результаты рекогносцировочного обследования сенокосов и пастбищ Нор Баязетского и Даралагезского уездов ССРА НКЗ-а, Ереван 1930 г.
27. » . . . . . Естественная растительность ССР Армении как производительная сила, Сельхозгиз 1935 г. Ереван.
28. Е. Н. Синская и М. А. Шеболина . . . . . Селекция кормовых культур.
29. Е. Н. Синская . . . . . Видообразования у люцерны и других растений. ВИР 1935 г. Москва.
30. » . . . . . Экологическая система селекции кормовых растений. Прилож. 62 к труду по прикл. бот., ген. и сел.
31. » . . . . . К познанию видов вики, динамике и взаимоотношениях с растительным покровом. Тр. по прикл. бот., генет. и сел. т. 25 в. 2-ой 1931 г.
32. Б. Ф. Овчинников . . . . . Можно ли оставить эспарцет на семена в год посева. Журнал семеноводство № 1 1935 г.
33. » . . . . . Песчаный эспарцет, его селекция и семеноводство. Журнал семеноводство № 6 1933 г.
34. В. М. Рабинович . . . . . Сортоиспытание люцерны и эспарцета, Харьков 1929 г.
35. » . . . . . Проблема организации сортового семеноводства люцерны и эспарцета. Семеноводцентр ВИР 1931 г. Ленинград.
36. П. М. Жуковский . . . . . Земледельческая Турция ВИР 1933 г.
37. П. М. Лисицин . . . . . Красный клевер СССР.
38. » . . . . . Культура клевера на семена изд. 2-ое Книгосюз 1929 г.
39. » . . . . . Основные вопросы планового семеноводства клевера 1931 г. Москва.
40. » . . . . . Семеноводство люцерны как чистый пример районирования семеноводства. Журнал семеноводство № 5 1933 г.
41. Н. П. Голубев . . . . . Методика селекции многолетних кормовых трав. Труды по прикл. бот., ген. и сел. т. 27 в. 2-ой 31 г.
42. Давидова Н. С. . . . . Нектародайність эспарцету (Харьківська дослідна пасічницька станція (Прилуки) 1930 г.
43. Beener . . . . . Die wirtschaftliche Bedeutung der Jnykten als Betrüchter «Monatschr. f. d. naturwissenschaftliche Unterrichts V. d. 10, 1917.

44. П. Н. Венриков . . . Опыление сельхоз. растений, Сельхозгиз 1936 г. Москва.
45. Алишан . . . . . «Ай-Бусак» армянская ботаника.
46. В. А. Харченко . . . Полевое и луговое кормодобывание. Сельхозгиз 1936 г. Москва.
47. Ալիշան . . . . . Տեղագրություն Սիւնեաց աշխարհի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Նախաբան . . . . .	3
Կորնզանի դերը կերի կալուն բազայի ստեղծման, ճիշտ ցանքաշրջանառություն կազմակերպման, վատ, բարձրորոտ հողերի ոգտագործման, մոլախոտերի և հեղեղների դեմ պայքարելու և մեղվաբուծության զարգացման գործում . . . . .	3
I. Կորնզանի մշակման պատմությունը . . . . .	9
II Տեղական կուլտուրական կորնզանների ծագումը . . . . .	12
III. Կորնզանացանության ներկա վիճակը Խորհրդային Հայաստանում (a. տարածությունը, b. ագրոտեխնիկան, c. ստորաիմնաք) . . . . .	19
IV. Տեղական կուլտուրական կորնզանների մշակման մասսիվները Հայկական ԽՍՀ ում . . . . .	26
V. Կորնզանացան շրջանների բնապատմական պայմանները . . . . .	29
VI. Տեղական կորնզանների բուսաբանական հատկանիշները . . . . .	41
VII. Տեղական կորնզանների բիոլոգիական հատկանիշները . . . . .	50
VIII. Տեղական կորնզանների տնտեսական հատկանիշները, համեմատական բերքատվությունն ըստ տարիների, հարի, զոնայի: Մեկ միավոր կանաչ մասսայից ստացված չոր խոտի տոկոսը: Բիմիկան կաշմը, սերմաբազրոզահանությունը և նրա վրա ազդող պայմանները . . . . .	65
IX. Տեղական կորնզանի ձևերը . . . . .	76
X. Վայրի կորնզանները և նրանց սպտագործման ուղիները . . . . .	80
XI. Կորնզանի սերմաբուծությունը: Սերմաբուծության ներկա վիճակը Խորհրդային Հայաստանում, ագրոտեխնիկան, մեղունների ոգտագործումը. վոր տարվանից և վոր քաղը թողնել սերմի համար, յերը հավաքել սերմի համար: Փորձերի ամփոփումը, սերմերի հետքաղյա հասունացման պրոցեսի կազմակերպումը . . . . .	83
XII. Կորնզանի սերմաբուծության ուղղությունը Խորհրդային Հայաստանում . . . . .	101
XIII. Ցեղաբազումություն . . . . .	103
Գրականություն . . . . .	108



Պատ. խմբագիր՝ Լ. ՎԱՆԵՑՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Լ. ՈՂԱՆՅԱՆ  
Մրբագրել՝ Խ. ԱՅՎԱԶՅԱՆ

Գլավիտի լրագոր՝ Բ—1608

Հրատ. 4698, պատվեր 1, տիրած 1206

Հանձնված է արտադրության 1939 թ. հունվարի 2-ին

Մտորագրված է տպագրության 1939 թ. փետրվարի 5-ին

Պետերատի 2-րդ տպարան, Յերեվան, Նալբանդյան 5

ՀՀ Ազգային գրադարան



NL0987306

4 МАЯ. 1939

237.

11

28664

**МЕСТНЫЕ КУЛЬТУРНЫЕ ЭСПАРЦЕТЫ  
АРМЯНКОЙ СОР.**

Гиз Арм. ССР 1980